

Ա. Գ. ԳԱԼՍՏԵԱՆՍ

Մ  
Մ Բ Ա Տ  
Պ Ա Ր Ա Պ Ե Տ

9(47.925)

4-20

Ա.Գ. Գ.Ա.Ս.Տ.Յ.Ա.Ն

1966

1560



Մ Բ Ա Տ  
Պ Ա Ր Ա Պ Ե Տ




1966  
9(47.925) [Մեքսիկոյի Ազգային Գրադարան]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1961



Սույն գրքում լուսարանված են Կիլիկիայի հայկական թագավորության XIII դարի ականավոր զորավար ու մատենագիր Սմբատ Սպարապետի գործունեությունն ու գրական ժառանգությունը: Սմբատ Սպարապետը հայ ժողովրդի պատմության մեջ նշանավոր դեմքերից է: Մեզ են հասել նրա «Տարեգրքը», «Գատաստանագիրքը», մի քանի ոտանավորներ, նամակներ և թարգմանություններ, որոնք պատմական կարևոր նշանակություն ունեն, Աշխատության մեջ հատկապես լուսարանվում է «Գատաստանագիրքը», որը արժեքավոր ներդրում է եղել միջնադարյան հայ իրավագիտական մտքի զարգացան մեջ:

17587

АШОТ ГРИГОРЬЕВИЧ ГАЛСТЯН

СМБАТ СПАРАПЕТ

(На армянском языке)

Армянское государственное издательство

(Айпетрат), Ереван, 1961

## ՄՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Սմբատ Սպարապետը (Գունդստարլ) XIII դարի հայ ականավոր զորավար ու պետական գործիչ է եղել: Նա նաև դրազվել է պատմությամբ, փիլիսոփայությամբ, իրավագիտությամբ, գրականությամբ: Նրա գրչին են պատկանում մի շարք գործեր, որոնք հարկ եղած չափով դեռ չեն ուսումնասիրվել:

Լինելով իր ժամանակի զարգացած մարդկանցից մեկը, նա տիրապետել է մի շարք լեզուների, կատարել է օրենքների արժեքավոր թարգմանություններ: Սմբատը այն հայ մատենագիրներից է, որ դեռ XIII դարում գրել է իր ժամանակի խոսակցական լեզվով՝ միջին հայերենով, կամ ինչպես ընդունված է ասել՝ «ռամկորեն»: Իրոք, ժողովրդին մատչելի լեզվով են գրված Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», բանաստեղծությունները, ինչպես նաև «Գատաստանագիրքը»:

Սմբատ Սպարապետը ապրել ու գործել է Կիլիկյան հայոց թագավորությունում: Հայկական ավատական մյուս բոլոր իշխանությունների համեմատությամբ Կիլիկյան հայկական թագավորությունը պատմական այդ ժամանակաշրջանում քաղաքական ու տնտեսական տեսակետից համեմատաբար գտնվում էր բարենպաստ պայմաններում: Կիլիկիան գտնվելով Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան անկյունում, երեք աշխարհամասերի՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրի-

կայի մերձեցման կենտրոնում, հանդիսանում էր ինչպես համաշխարհային առևտրի, այնպես էլ ռազմական ճանապարհների կարևորագույն հանգուցակետ: Բնական ամբուստությունները ու հարստությունները, ինչպես նաև աշխարհագրական դիրքը Կիլիկյան հայկական պետության զարգացման համար լավագույն պայմաններ էին ստեղծում:

Կիլիկյան հայկական թագավորության ծովափնյա սահմանը ձգվում էր մոտ 400 կիլոմետր երկարությամբ՝ բազմաթիվ ծովածոցերով, ծովախորշերով և հրվանդաններով: Հարթավայրերում կային մի քանի հարմար նավահանգիստներ, որոնցից իր ժամանակին համաշխարհային հռչակ էին վայելում Այասը և Կոռիկոսը:

Կիլիկիան հարուստ է օգտակար հանածոներով, բուսականությամբ ու կենդանիներով: Հայ ժողովրդի մի հատվածին պատմականորեն վիճակվել էր դեռ հին ժամանակներից բնակություն հաստատել այստեղ՝ այս գեղեցիկ երկրում, ուր հետագայում աճելով և նորեկներով բազմանալով, ստեղծեց հայկական պետություն:

Կիլիկյան հայոց իշխանությունն ստեղծվելու համար հող պատրաստվեց հատկապես այն ժամանակ, երբ 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական կայսր Ռոմանոս Դիոգենեսը իր հարյուր հազարանոց զորքով պարտություն կրեց սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանից: Կայսրության զորքերի մեջ կոպոզ հայ զորավարներից ոմանք հիասթափվելով հաստատվեցին Կիլիկիայում, կազմեցին առանձին ֆեոդալական իշխանություններ: Այսպես օրինակ, հայտնի զորավար Փիլարտոս Վարաժնունին կայսրության մի շարք գավառներում իր իշխանությունը հաստատեց: Նա իր նստա-

վայրը դարձնելով Մարաշ քաղաքը, իրեն ենթարկեց նաև Եդեսիան ու Անտիոքը: Նրա շուրջը համախմբվեցին իրենց տիրությունից զրկված բազմաթիվ հայ ֆեոդալներ: Բայց հետագայում Փիլարտոս Վարաժնունին շկարողացավ պահպանել իր ստեղծած իշխանությունը և տրոհվեց:

Կիլիկյան հայկական իշխանության հիմքը դրեց Բագրատունի Գաղիկ Բ թագավորի մերձավոր իշխան Ռուբեն Ա-ը (1080—1095), որի անունով էլ Կիլիկյան հայկական պետությունը հետագայում կոչվեց Ռուբինյանց թագավորություն (1080—1375):

Կիլիկյան հայկական այդ ֆեոդալական իշխանությունը կարճ ժամանակամիջոցում արագությամբ բարգավաճեց ու ընդարձակվեց:

Հայերի թիվը բյուզանդական կայսրության մեջ բազմանում էր Բյուզանդական կայսրության վարած քաղաքականության հետևանքով: Հայերին փոխադրելով կայսրության ծայրամասերը, ինչպես նաև Կիլիկիա, Բյուզանդական կայսրությունը երկու նպատակ էր հետապնդում: Նախ՝ Մեծ Հայաստանից դուրս բերել զինվորական ուժերը, թուլացնել հայ ֆեոդալների հզորությունը հայրենիքում և երկրորդ՝ այդ ռազմական ուժերը օգտագործել կայսրության սահմաններն ապահովելու և ամրապնդելու համար: Ահա այս քաղաքականության հետևանքով մեծ թվով հայ ֆեոդալներ իրենց հպատակներով բնակվեցին հատկապես Կիլիկիայում: Նրանց թիվը հետագայում բազմապատկվեց այն հայ զաղթականներով, որոնք իրենք էին թողնում հայրենի երկիրը, խուսափելով թուրք-սելջուկյան ցեղերի վայրագություններից, ապաստան էին գտնում իրենց հայրենակիցների տիրապետություններում:

Այսպիսով, Կիլիկիայում ստեղծվեց հայկական ֆեոդալական անկախ ամուր իշխանություն, որին կործանելու համար ոչ մի ջանք չէին խնայում հարևան մամուլուկների, թուրքերի, խաչակիրների, հատկապես Բյուզանդական իշխանությունների:

Բյուզանդական կայսր Հովհաննես Բ Կոմնինը (1118—1143) մեծ արշավանք ձեռնարկեց, որպեսզի վերականգնի իր իշխանությունը Կիլիկիայում և Ասորիքում: Կիլիկիայի Անաբարդ ու Վահկա քաղաքների ողջ բնակչությունը դուրս եկավ հայոց զորքերին օգնելու և միացյալ ուժերով համառ մարտերում քաջարար ետ մղեցին Բյուզանդական զորքերի գրոհները, հրդեհելով ու ոչնչացնելով նրանց պաշարողական մեքենաները ու գործիքները:

Երկրորդ փորձը կատարեց Մանվել Կոմնին կայսրը (1143—1180), որը 1152 թվականին Անդրոնիկոս զորավարի գլխավորությամբ մեծ զորք ուղարկեց Կիլիկիան նվաճելու համար: Բայց այս անգամ նրանց դեմ դուրս եկավ Լևոն Ա-ի որդի Թորոս իշխանը, մի տաղանդավոր զորավար, որը բյուզանդացիների համար բոլորովին անսպասելի, իր կտրիճներով հարձակվեց թշնամու վրա և պարտության մատնելով նրանց՝ դուրս բռնեց երկրից:

Բյուզանդացիք ավելի լարվեցին Կիլիկյան հայոց իշխանության դեմ: Նրանց հորդորանքով Փոքր Ասիայի թուրք-սելջուկները 1156 թվականին ներխուժեցին Կիլիկիայի սահմանները: Թորոս իշխանը այս անգամ ևս փայլուն հաղթություն տարավ թշնամու դեմ և սելջուկներին դուրս բռնեց իր երկրի սահմաններից:

Այնուհետև Կիլիկյան հայոց թագավորությունը ստիպ-

ված եղավ պատերազմական գործողությունների մեջ մտնել խաչակիրների իշխանությունների հետ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ասորիքի ու Կիլիկիայի սահմանագրված խին: Հայկական զորքը ջախջախեց խաչակիրներին ու նրանց ետ շարեց դեպի իրենց տիրությունները: Բայց բյուզանդական կայսրության, Իկոնիայի սուլթանության և Անտիոքի խաչակիր իշխանության պայքարը Կիլիկյան հայոց թագավորության դեմ մինչև XII դարի 70-ական թվականները վերջանում են Կիլիկյան Հայաստանի լիակատար հաղթանակով:

Այդ հաջողությունները պայմանավորված էին նախ նրանով, որ հայերը XIII դարում արդեն ամուր կերպով հաստատվել էին Կիլիկիայի անառիկ լեռներում և դաշտային քաղաքներում, որտեղ հայ բնակչությունը բավականին ստվարացել էր և մեծամասնություն էր կազմում, և երկրորդ նրանով, որ XIII դարի վերջում Բյուզանդական կայսրությունը և խաչակիրների իշխանությունները թուլացել էին: Այսպիսով, Կիլիկյան հայոց թագավորությունը դարձավ կազմակերպված, կենսունակ մի պետություն, որը իր սեփական միջոցներով, իր ռազմական ուժերով կարող էր պահպանել ոչ միայն իր գոյությունը, այլև անկախությունը:

Կիլիկյան հայոց թագավորությունը ամբողջ XIII դարի ընթացքում շփման և ընդհարումների մեջ էր մի կողմից խաչակիրների Արևելքում ստեղծված ֆեոդալական իշխանությունների, եզիպտական մամուլուկների, իսկ մյուս կողմից՝ բարբարոս մոնղոլական նվաճողների հետ, բայց նա կուլ շղնաց ո՛չ մեկին և ո՛չ էլ մյուսին:

Հակառակ Մեծ Հայաստանի տնտեսական ու քաղաքական

ծանր վիճակին, որն առաջացավ հատկապես սելջուկների, մոնղոլական նվաճումների հետևանքով, Կիլիկյան հայկական թագավորութունը XII—XIII դարերում բավական աճեց ու բարգավաճեց:

Երկրի քաղաքական ամրապնդման հետ միասին այստեղ առաջացան արհեստագործական ու առևտրական խոշոր կենտրոններ, ինչպիսիք էին Սիս, Տարսոն, Մամեստիա, Մառաշ, Ալաս քաղաքները:

Աշխարհի զանազան երկրներից ամեն օր բազմաթիվ քաղաքացիներ էին մտնում այդ երկիրը: Վենետիկցի Մարկո Պոլոն, որը Չինաստան էր ճանապարհորդել հայոց նավահանգրստային քաղաք Ալասի վրայով, պատմում է, որ այդ քաղաքն էին ներմուծում և այնտեղ վաճառում Ասիայի ամեն տեսակի համեմունքներ, թանկարժեք գործվածքներ, Վենետիկից և Ջենովայից բերվող ապրանքներ: Իտալացի, արաբ և հայ առևտրականները Հնդկաստանից ու Չինաստանից այստեղ էին փոխադրում թանկագին քարեր, մետաքսյա գործվածքներ և այլ արժեքավոր ապրանքներ: Սինոպի ու Դերբենդի վրայով Ռուսաստանից Կիլիկյան Հայաստան էին ներմուծվում մորթիներ: Հայ վաճառականները Ղրիմ, Հարավային Ռուսաստան ու Արևելյան Եվրոպա էին արտահանում Կիլիկիայի արհեստավորների արտադրանքները՝ զանազան նկարազարդ ու նախշաքանդակ թասեր, անոթներ, բրդյա գործվածքներ, գորգեր, զենքեր, ինչպես նաև գեղարվեստական արժեք ունեցող ոսկյա ու արծաթյա իրեր:

Մեզ հասել են մի շարք պայմանագրեր, որոնք վերաբերում են առևտրի ներմուծման ու արտահանման զանազան հարցերին, կնքված Կիլիկյան հայկական թագավորության և

Ջենովայի, Վենետիկի առևտրականների միջև Գրանցից առանձնապես ուշադրով են 1201 և 1215 թվականներին իտալական առևտրականներին տրված արտոնագրերը:

Կիլիկյան հայկական թագավորության դանձարանը հարստանում էր նաև օտարերկրյա վաճառականներից զանազան մաքսերից: Բացի այդ, ինչպես հայտնի է, Կիլիկյան թագավորությունը օտարերկրացի առևտրականների անվտանգ երթևեկությունը ապահովելու նպատակով կազմակերպել էր անվտանգավոր վայրերում նրանց ուղեկցող հատուկ զինված ջոկատներ, որի համար ևս ղզալի գումարներ էին մուծվում արքունի գանձարանը: Մեզ հասել են Լեոն Բ-ի, Հեթում Ա-ի և այլ թագավորների ոսկյա և արծաթյա դրամները, որոնք գործածվում էին ոչ միայն Կիլիկիայում, այլև լայն շրջանառություն ունեին երկրի սահմաններից դուրս:

Կիլիկիայի հայկական թագավորության տիրապետության մեջ ստեղծվում են ավատական կարգերի զարգացած ձևեր՝ ֆեոդալական հիերարխիայով: Ողջ հասարակությունը բաժանված էր երկու հիմնական դասակարգերի՝ ազատների ու անազատների, այսինքն, իշխողների ու շահագործվողների: Ազատների դասակարգի վերնախավը երկրում ամենաբարձր իշխող դասն էր, որի մեջ մտնում էր թագավորի հետ միասին ազնվականության և հոգևորականության բարձր խավը: Թագավորը մարմնաթլորում էր երկրի գերագույն իշխանությունը: Նա ղեկավարում էր երկրի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործերը, հրապարակում էր օրենքներ, կտրում դրամ և այլն: Թագավորից հետո երկրորդ աչքի ընկնող պետական պաշտոնյան պալլն էր՝ թագավորի առաջին խորհրդականը, որը թագավորի անշափահաս լինելու դեպքում հանդես էր գալիս

նակ որպես խնամակալ, Երրորդ պաշտոնյան սպարապետն էր (գունդստարը), որը հանդիսանում էր թագավորության զորքերի գլխավոր հրամանատարը: Այնուհետև արքունիքում առաջնակարգ պաշտոնյաներ էին համարվում մարաջախտը, սենեջալը, մարսապետը և այլք:

Չնայած երկիրը բազմազգ էր, բայց պետական պաշտոնական լեզուն հայերեն էր: Կիլիկյան Հայաստանը ապահով լինելով, այնտեղ արագ թափով զարգացավ հայ մշակույթը: Մեծ Հայաստանից գիտնականները օտար նվաճողների հալածանքներից խուսափելով գալիս բնակություն էին հաստատում այստեղ, ուր Տավրոսի անառիկ լեռների վրա, համեմատաբար խաղաղ ու նպաստավոր պայմաններում, նոր եռանդով լծվում էին հայ մշակույթի հետագա զարգացման գործին: Կիլիկյան Հայաստանում կային գիտություն ու մշակույթի բազմաթիվ օջախներ: Դրանք Սիսի, Տարսոնի, Մարաշի, Դրազարկի, Կարմիր վանքի, Ակների, Բարձրբերդի և այլ դպրոցներն էին, որոնք դարձան հայ ժողովրդի մշակույթի կարևորագույն կենտրոններ:

Այսպիսով, շատ հայ մտավորականներ, ինչպես Մեծ Հայաստանից, այնպես էլ զանազան այլ հայաբնակ վայրերից գնում էին Կիլիկիա՝ սովորելու և բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց գիտելիքները կատարելագործելու համար: Գիտական այդ միջավայրում են սովորել Մեծ Հայաստանից եկած այնպիսի փայլուն դեմքեր, ինչպես՝ Մխիթար Գոշը, Վարդան Արևելցին, Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Երզնկացին և ուրիշներ:

Կիլիկյան Հայաստանում ստեղծված արժեքավոր գործերից մեզ են հասել Մատթևոս Ուռհայեցու «Ժամանակագրու-

թիւն»-ը, Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը և «Ողբ Եղեսիո»-ն, Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմի»-ն, Ներսես Լամբրոնացու «Նորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ»-ն և «Նամականի»-ն, Գրիգոր Ակնեցու «Պատմութիւն վասն ազգին նետողաց»-ը, Վարդան Այգեկցու «Առակք»-ը, Ֆրիկի բանաստեղծությունները և բազմաթիվ այլ գործեր, որոնք իրավամբ մտնում են համաշխարհային միջնադարյան գրականության արժեքավոր ֆոնդի մեջ:

Կիլիկյան Հայաստանի այդ մտավորականները իրենց երկերում նկարագրել են երկրի վիճակը, նրա սոցիալ-քաղաքական հարաբերությունները: Վարդան Այգեկցու (1170—1235) առակներում մենք կարգում ենք խրատական շատ մտքեր, որտեղ նա բննադատում է գոյություն ունեցող իրավակարգը, սոցիալական անարդարությունը, վեր հանելով ազնվականության ու հոգևորականության արատները՝ ազահությունը, ընշաքաղցությունը, անարդարությունը, հատկապես կաշառակերությունը: Սոցիալական անարդարության բննադատությունն ու դատապարտումը իր ցայտուն արտահայտությունն է գտել Ֆրիկի (1234—1315) բանաստեղծություններում:

Եթե Ֆրիկն իր անմահ բանաստեղծություններով հիմք դրեց սոցիալական պոեզիային, նրան ժամանակակից մի ուրիշ բանաստեղծ՝ Կոստանդին Երզնկացին (1250—1340) իրեն զրսևորեց որպես քնարերգության ականավոր ներկայացուցիչներից մեկը, հանդիսանալով անձնական քնարերգության հիմնադիրը միջնադարյան հայ գրականության մեջ: Նա իր դարաշրջանի մեծագույն մտածողներից էր: Նա էր, որ խարազանելով կրոնի կեղծ դոգմաները, համարձակություն

առաջ քաշեց այն հարցը, թե կյանքի ու բախտավորության աղբյուրն են արևն ու լուսը, գեղեցկությունն ու սերը և ոչ թե հանգերձյալ աշխարհի երևակայական երանությունները:

XIII դարում Կիլիկյան Հայաստանում զարգանում էին նաև բնական գիտությունները, հատկապես բժշկագիտությունը: Մխիթար Հերացին գրում է իր «Ջերմանց մխիթարութիւն» երկասիրությունը: Նրա երկը խոշոր ներդրում է բժշկագիտության պատմության մեջ: Կիլիկիայում զարգանում է նաև թատերական և երաժշտական արվեստը:

Կիլիկյան Հայաստանում առանձին կատարելագործության հասան ճարտարապետությունը, որմնանկարչությունը, քանդակագործությունը: Իր բարձր մակարդակով հատկապես աչքի է ընկնում մանրանկարչությունը:

Կիլիկյան Հայաստանում մանրանկարչության արվեստի խոշորագույն ներկայացուցիչներն են Թորոս Ռոսսլինը, Սարգիս Պիծակը և ուրիշներ:

Թորոս Ռոսսլինի նկարչական ստեղծագործությունները իրավացիորեն դասվում են վերածնության աչքի ընկնող գործերի շարքը<sup>1</sup>: Սովետական գիտնական Չլենովը գտնում է, որ XIII դարի համաշխարհային նկարչության մեջ Կիլիկյան Հայաստանը գրավում է առաջին տեղերից մեկը<sup>2</sup>:

Կիլիկյան մանրանկարչությունը աչքի է ընկնում բարձր վարպետությամբ և, որ ամենակարևորն է, սյուժեների բազ-

մազանությամբ: Մատենադարանի №№ 1568, 1635, 538 և այլ ձեռագրերի ուսումնասիրություններից պարզվում է, որ Կիլիկյան Հայ մանրանկարչությունը իր կատարելությանը հասավ XIII դարում՝ Հեթումյանների տիրապետության շրջանում, մի ժամանակաշրջան, որի աչքի ընկնող գործիչներից և մատենագիրներից մեկն էր Սմբատ Սպարապետը:

Սմբատ Սպարապետը պատմական ասպարեզ ելավ XIII դարի առաջին քառորդում, այսինքն՝ Կիլիկյան Հայոց առաջին թագավոր Լևոն Բ-ի տիրապետության վերջին շրջանում:

Կիլիկյան հայկական պետության պատմության մեջ Լևոն Բ թագավորն ունի իր արժանի տեղը: Նա է Կիլիկյան հայկական թագավորության սկիզբը դրել, որին հայոց թագավոր ճանաչեցին ինչպես հարևան իշխանությունները, այնպես էլ եվրոպական մի շարք պետություններ: Միքայել Ասորու վկայությամբ Լևոն Բ-ի քաջությունից սարսափում էին նրա թշնամիները և չէին համարձակվում դուրս գալ նրա դեմ. «Նրա (Լևոնի) արիության համբավը թուլացնում էր անօրենների ջղերը, և քրիստոնյաների երեսը պայծառացնում էր խնդություններ ու ուրախությամբ լցնում (նրանց սրտերը): Այդ պատճառով էլ նրանք շտապում են թագադրել նրան, (ըստ որում), հույների թագավորը, հատկապես այն հույսով, որ գուցե նրա (Լևոնի) շնորհիվ հնարավոր լինի հաղթել թուրքերին»<sup>1</sup>:

[«Համբաւ արիութեան նորա թուլացուցանէր զջիւս անօրինաց և պարզէր զերեսս քրիստոնէից և լնոյր խնդութեամբ և

<sup>1</sup> «Древнеармянская миниатюра», Госиздат. Арм. ССР, 1952, Предисловие, стр. 1.

<sup>2</sup> Членов, Древность и Современность. Заметки об армянской живописи, «Дружба», № 8, Москва, 1956, стр. 145.

<sup>1</sup> Գրարարից և այլ լեզուներից մեղրերումների թարգմանությունների մեջ փակագծերում լրացված բառերը մերն են և չեն:



ուրախութեամբ, վասն որոյ փութային պատուել զնա թագիւ, թագաւորն Յունաց վասն պատճառին՝ զի թեւեւ հնար լիցի նովաւ յաղթել թուրքացն»<sup>1</sup>։

Հաղթական պատերազմներում Լեոն Բ-ի ձեռք բերած փառքն ու հաջողությունները ավելի բարձրացրին և ուժեղացրին Կիլիկիան հայկական պետության քաղաքական հեղինակությունը Մերձավոր Արևելքում։ Ստեղծվեցին բոլոր նախադրյալները Կիլիկիան հայկական թագավորություն հռչակելու համար։ Այդ նպատակով նա հատուկ դեսպանություն ուղարկեց Հոռոմ՝ Պապի և «Հոռոմեական սրբազան կայսրության»<sup>2</sup> հետ բանակցություններ վարելու համար։

Նրանց համաձայնութեամբ 1198 թվականին Տարսոն քաղաքում տեղի ունեցավ թագադրության հանդիսավոր արարողությունը։ Լեոն Բ-ին թագ ուղարկեցին «Հոռոմեական սրբազան կայսրությունը» և Բյուզանդական կայսր Ալեքսիոսը (1195—1203)։ Վերջինս Լեոնին մի թանկարժեք թագ է ուղարկում և ի միջի այլոց հետևյալ խորհուրդն է տալիս նրան. «Մի՛ զներ զլսիզ (հոռոմեացիների թագը), այլ մերը դիր, քանի որ քո (պետությունը) մեզ ավելի մոտ է, քան Հոռոմին»։ («Մի՛ դիցես ի զլուխ քո, այլ զմերդ՝ զի առ մեզ

<sup>1</sup> Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 503—504։

<sup>2</sup> Գերմանական կայսր Ֆրիդրիխ Երկամորուսը խաչակրաց 3-րդ արշավանքի ժամանակ խոստացել էր Լեոն Բ-ին թագադրել, բայց Սելևկիա զետում խեղդվելու պատճառով չկարողացավ կատարել իր խոստումը։ Այդ խոստումը կատարեց Հենրիխ 2-ը, որը 1198 թվականին Կոնրատի միջոցով ուղարկեց Լեոնին խոստացված թագավորական թագը։ Այդ գործում իր ակտիվ մասնակցությունն ունեցավ նաև Հոռոմի Ցելեստին Գ պապը։

հույլ ես, քան զՀոռոմ»<sup>1</sup>։ Լեոն Բ-ն ընդունեց նաև բյուզանդացիների ուղարկած թագը, բայց անկախ մնաց այդ երկու մեծ պետություններից, ինչպես նաև Հոռոմի պապից։

Խոսելով Լեոն Բ-ի թագադրության արարողությունների մասին, Սմբատ Սպարապետը իր «Տարեգրքում» հիացմունքով զրում է. «647=1198 թվականի հունվարի վեցին, տիրոջ Հայտնության օրը, Հոռոմի եկեղեցու և Կերմանական կայսեր հավանության օժեցին Լեոնին հայոց թագավոր։ Հայերը ուրախացան, որովհետև նրանք, հանձին Հայոց թագավոր Լեոնի, տեսնում էին իրենց վերջերս կործանված թագավորության վերականգնումն ու վերանորոգումը»։

[«Ի թուին 647 Յունվարի վեց յօր Յայտնությանն օժեցին զԼեոն թագաւոր Հայոց ի հնազանդութիւն եկեղեցւոյն Հոռոմ-յա և Օնբրունին Ալամանաց։ Եւ եղև ուրախութիւն Հայոց. զի յաւուրս յետինս զանկեալ տէրութիւն իւրեանց տեսին կանգնեալ եւ նորոգեալ յերեսս Լեոնի՝ արքայի Հայոց»<sup>2</sup>]:

Բայց Լեոն Բ-ի թագավորության հզորությունը երկար չտևեց։ Իր տիրապետության վերջին շրջանում նա իրեն շրջապատել էր ֆրանկ ու լատին իշխաններով։ Նրանք հեղեղել էին հայոց արքունիքը, թուլացնելով Լեոնի հզոր թագավորական կենտրոնական իշխանությունը։ Այդ պատճառով շատ հայ իշխաններ երես էին դարձրել նրանից։ Այդ հանգամանքն իրեն զգացնել տվեց հատկապես հայ-սելջուկյան կռիվների ժամանակ, երբ Ռումի սուլթան Իզդ-ադ-դին Քայ-Քավուզը 1216 թվականին<sup>3</sup> արշավեց Կիլիկիան Հայոց թա-

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 150։

<sup>2</sup> Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 109։

<sup>3</sup> Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 219։

գավորութեան վրայ Հայ իշխաններից շատերը, որ մինչ այդ թշնամարար էին տրամադրված Լևոն Բ-ի նկատմամբ, լքեցին նրան և հեռացան պատերազմի դաշտից: Այդ ճակատամարտում Լևոն Բ-ի զորքերը պարտութուն կրեցին: Նա մեծ կորուստներ տվեց: Զորավարներից շատերը սպանվեցին կռվի դաշտում, զորքի մի մասն էլ գերի ընկավ: Գերի ընկավ նաև հայոց զորքերի գլխավոր հրամանատարը՝ Սմբատ Սպարապետի հայր Կոստանդինը, որին գերութունից ազատելու համար, ինչպես վկայում է Սմբատը, Լոն Բ-ն, որպես փրկակազին, Սուլթանին զիջեց զգրերդն Լուլուա և Լոզատի և ազատեաց վկայանաւոր իշխանսն»<sup>1</sup>:

Կիլիկյան հայոց թագավորութունն ավելի ծանր վիճակի մեջ ընկավ, երբ 1219 թվականին մեռավ Լևոն թագավորը: Վերջինս արու զավակ չունեւր և այդ պատճառով թագավորութունը ժառանգեց նրա դուստր Զաքելը, և քանի որ նա անչափահաս էր, նշանակվեց նաև խնամակալ: Լևոն թագավորը դեռ իր կենդանութեան օրոք որպես խնամակալ նախատեսել էր, ինչպես այդ երևում է Կիրակոս Գանձակեցու վկայութունից, «Միրատանայն՝ որ էր հոռոմ դավանութեամբ»<sup>2</sup>: Սակայն վերջինս սպանվեց և խնամակալութունն անցավ Սմբատ Սպարապետի հորը՝ Կոստանդին Պայլին:

Հայ ֆեոդալների միջև իշխանութեան համար սուր պայքար սկսվեց: Այդ պայքարում վճռական նշանակութուն ունեւր այն, թե ո՞ւմ կհաջողվեր զառնալ Զաքելի ամուսինը, որը և կլինեւր Կիլիկիայի հայոց թագավորը:

<sup>1</sup> Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 222.  
<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 177:

Լևոն Բ-ը Զաքելին նշանել էր Հունգարիայի թագավորի որդու հետ, կտակելով նրան նաև հայոց գահը: Բայց այդ փեսացուն, ինչպես վկայում է Սմբատը, հրաժարվում է գալ Կիլիկիա. «Ոչ եկն յորժամ լուաւ զմահ թագաւորին Լևոնի»<sup>1</sup>: Վերջինիս հրաժարվելուց հետո հայ իշխանների միջև վեճն ավելի բորբոքվեց: Երկար վիճարանութուններից հետո, վերջապես, ընդհանուր համաձայնութեամբ որոշեցին հրավիրել Անտիոքի իշխան Բոհեմոնդի որդուն՝ Ֆիլիպին, որն ամուսնացավ Զաքելի հետ և հռչակվեց հայոց թագավոր:

Ֆիլիպի հայոց թագավոր դառնալը բացասական անդրադարձում ունեցավ Կիլիկյան Հայաստանի պետական կյանքում: Հայոց գահը օտարին հանձնելը նշանակում էր լատինասեր հայ իշխանների հաղթանակը: Անտիոքի ֆեոդալները լատինասեր հայ իշխանների օգնութեամբ ձգտում էին ոչնչացնել Կիլիկյան հայոց թագավորութունը և այն դարձնել Անտիոքի պրովինցիան: Գեպրեթին ժամանակակից Միքայել Ասորին հայ իշխաններին խարազանում է անմիաբանութեան համար, որ չհավանելով մեկը մյուսին, իրենց թագավոր հրավիրեցին օտարազգի Ֆիլիպին: «Թագավորի ընտրութեան հարցում, — գրում է Միքայել Ասորին, — խոշոր տարածայնութուններ գոյութուն ունեին հայ իշխանների միջև, որովհետև նրանք միմյանց չէին վստահում: Եվ վերջապես, ընդհանուր համաձայնութեան գալով, թագավոր ընտրեցին Անտիոքի իշխանի որդուն: Հայոց թագավորի դուստրին ամուսնացրին Անտիոքի իշխանի որդի Ֆիլիպի հետ և նրան 1223 թվականին օծեցին հայոց թագավոր և անվանեցին Ֆիլիպ թագավոր»:

<sup>1</sup> Սմբատ, Վենետիկ, էջ 225:

1560 1787-1786



[Եիսկ իշխանացն հայոց բազում անմիաբանութիւն լինէր վասն դնելոյ թագաւոր, զի ոչ հաւանէին միմեանց, և ապա ի մի կամս եկեալ ընտրեցին զորդին բրինձին Անտիոքու թագաւորեցուցանել ի վերայ հայոց ի թուին հայոց ՈՂԲ (672 = 1223), և անուանեցին զնա Ֆիլիպ թագաւոր»<sup>1</sup>]:

Թագն ընդունելու ժամանակ Ֆիլիպը պարտավորվեց Կիլիկիան հայկական թագավորութիւնը կառավարել հայոց կարգու կանոնով և հայերի սովորութեամբ: Նա հանձն առավ շխառնվել հայ ֆեոդալների ներքին գործերին, չզրկել նրանց արտոնութիւններից, մի շարք խոստումներ տվեց, ստանձնեց որոշակի պարտավորութիւններ:

Բայց Ֆիլիպը գահ բարձրանալուց հետո, իր հոր դրդումով, հայ հայրենասեր իշխաններին սկսեց ամենուրեք հալածել: Նա կառավարական բարձր պաշտոններից ազատում էր հայրենասեր իշխաններին և նրանց փոխարեն առաջ քաշում լատինամոլ անձանց, ինչպես նաև իր մերձավորներին ու ազգակիցներին: Ֆիլիպին աջակցում էին նաև խաչակիր այն իշխանները, որոնք Լեոն Բ-ի օրոք խցկվել էին հայոց արքունիքը:

Կիլիկիայի հայոց թագավորութիւնը ճգնաժամ էր ապրում: Ֆիլիպ թագավորը բացի այն, որ շրջապատում էր իրեն հավատարիմ և հնազանդ մարդկանցով, միաժամանակ թալանում էր արքունական գանձարանը և այն ծածուկ մաս-մաս փոխադրում Անտիոք: Սմբատ Սպարապետն այդ մասին իր «Տարեգիրք»-ում գրում է. «Երբ թագավոր դարձավ Ֆիլիպը, սկսեց հոխորտալ հայ իշխանների վրա և արհամարհել

<sup>1</sup> Միխայել Ասորի, էջ 517:

նրանց: Լեոն թագավորի և նրա նախնիների հավաքած հարստութիւնները սկսեց կամաց-կամաց Անտիոք փոխադրել: Իսկ հայ իշխանները չհանդուրժեցին նման արարքը, ասլ բռնեցին նրան և բանտ դրեցին: (Այդ պատճառով) մեծ խռովութիւն ծագեց նրանց և Անտիոքի իշխանների միջև և այդ տեղեց այնքան ժամանակ, մինչև մեջտեղից վերացրին Ֆիլիպին, որից հետո խաղաղութիւն հաստատվեց»:

[«Եւ Ֆիլիպն յորժամ եղև թագաւոր՝ սկսաւ եղջիւր ածել իշխանաց հայոց, և արհամարհէր զնոսա, որ և զինչս թագաւորին Լեոնի ժողովաւ և զնախնեաց նորա և սկսաւ փոքր փոքր յԱնտիոք տանել: Իսկ իշխանքն Հայոց ոչ տարան այնպիսի գործոյն, այլ ըմբռնեցին զնա և եղին յարգելանս, և եղև խռովութիւն մեծ ընդ նոսա և ընդ անտիոքացիսն մինչև բարձաւ նա ի միջոյ և ապա եղև խաղաղութիւն»<sup>1</sup>]:

Ֆիլիպ թագավորի այս լատինասեր քաղաքականութիւնը հակասում էր Կիլիկիան հայկական պետութեան շահերին և լուրջ վտանգ էր ստեղծում նրա անկախութեանը և այն չէր կարող իր դեմ դուրս չբերել հայրենասեր իշխաններին: Հայ հայրենասեր իշխաններին զխավորեց Կոստանդին Պալլը: Ինչպես պարզվում է, Ֆիլիպ թագավորը նկատելով այդ, որոշում է կանխել իր դեմ թշնամաբար տրամադրված իշխանների ելույթները: Այդ նպատակով նա փորձում է ձերբակալել Կոստանդին Պալլին, այսինքն, Սմբատ Սպարապետի հորը, բայց չհաջողվեց: Կոստանդին Պալլը կարողանում է հայրենիքին նվիրված իշխանների օգնութեամբ, հայոց զորքերի գլուխը անցած, ապստամբութիւն բարձրացնել Ֆիլիպ թագավոր

<sup>1</sup> Սմբատ, վեներակ, էջ 225:

րի դեմ: Ֆիլիպ թագավորը համոզվեց, որ իր դեմն են համախմբվել երկրի բոլոր հայրենասեր ուժերը, և ինքը անզոր է ճնշելու նրանց դժգոհությունն ու դիմադրությունը, թողնում է իր թագն ու գահը և իր հետ վերցնելով թագուհուն, փորձում է փախչել Անտիոք:

Բայց այդ նրան չի հաջողվում: Նրան հետապնդում է հայկական հեծյալ գունդը՝ Կոստանդին Պալլի զխավորութամբ: Ֆիլիպին բռնում են Թիլ ամրոցի մոտ ու բանտ նետում: Կիրակոսի վկայությամբ՝ «Թողին զնա անդ (բանտում), մինչև ի նմին մեռաւ»<sup>1</sup>:

Այսպիսով, Ֆիլիպ թագավորին գահընկեց անելուց հետո Կոստանդին Պալլը իր ձեռքը վերցրեց երկրի կառավարման գործը: Նա Ֆիլիպի բոլոր կողմնակիցներին պետական պաշտոններից ազատեց և կառավարման բոլոր պաշտոններին նշանակեց կարող ու հայրենիքին նվիրված իշխաններին: Այս պետական հեղաշրջումը նոր շրջան բացեց Կիլիկյան հայոց թագավորությունից պատմության մեջ: Հարկավոր էր նոր թա-

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 178: Այդ մասին ավելի հանգամանորեն պատմում է Հեթում Պատմիչը: Նա գրում է. «Ֆիլիպն ամառ թաղատր երկրորդ ի քաղաքն Տարսուս և ամենեքեան մտերմութեամբ ծառայելին նմա: Բսկ նա խորհուրդ շար եղեալ ի մտի իւրում, հրամանաւ հարն իւրոյ և թելագորութեամբ ամենայն անտիրացեաց և զամփոյցեց, զի զկեղեցիսն Հայոց և զիշխանսն զամենեսին ի սպառ չնչեացեն, և Ֆրանկք կացուացեն ի տեղի նոցա, զոր լուեալ ոչ կարացին տանել այնպիսի ամբարշտութեանն, այլ յաւուր միում մինչ կային ի Թիլն բերդ, Ճաւֆրի, տէրն Սարվանդիբարին և պոսրօքսիոսն Տրդատ կայան զնա և անտի տարեալ եղին ի բանտի յանառիկն Բարձրբերդ և անդ վախճանեցաւ, (սՄանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.), հատ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան. Երևան, 1956, էջ 104—105):

գավոր ընտրել երկիրը կառավարելու համար: Հայ իշխանները գահի համար թեկնածու առաջ քաշեցին Կոստանդին Պալլի Հեթում որդուն: 1226 թվականին Տարսոս քաղաքում հանգիստավոր արարողությամբ Հեթումին ամուսնացրին Լեոն Բ-ի դուստր Զարեյ թագուհու հետ և օծեցին հայոց թագավոր:

Այսպիսով, հանձին Հեթում թագավորի (1226—1270) Կիլիկյան Հայաստանում Հեթումյանների ղինաստիայի հիմքն է դրվում (Հեթում Ա-ի անունով), որը իր գոյությունը պահպանեց ավելի քան մեկ դար, այսինքն, մինչև 1342 թվականը: Ահա այս տոհմի փայլուն դեմքերից էր հայ անվանի զորավար և ականավոր պետական գործիչ Սմբատ Սպարապետը:

Սմբատ Սպարապետի մանկությունն և ընդհանրապես նրա կենսագրության վերաբերյալ շատ քիչ նյութեր կան: Այդ մասին թե՛ ինքը և թե՛ նրա ժամանակակից պատմիչները միայն կցկտուր տեղեկություններ են տալիս: Մեր ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա հնարավոր է գրել Սմբատ Սպարապետի տոհմի, ինչպես նաև նրա կենսագրության վերաբերյալ մի քանի համառոտ տեղեկություններ:

Սմբատ Սպարապետի նախնիները Կիլիկիա են եկել Մեծ Հայաստանից զեռ XI դարում: Նրա հորը՝ Կոստանդինին անվանում էին «պալլ» կամ «ավագ պարոն»: Նա հայտնի էր որպես «թագավորահայր»: Պարոն Կոստանդինը հոր կողմից ազգական էր Ռուբինյանների տոհմին, իսկ մոր կողմից բարեկամական կապ ուներ Հեթումյանների ընտանիքին: Պարոն Կոստանդինի կինը՝ այսինքն Սմբատ Սպարապետի մայրը [Տամա-Լիծին] XII դարի հայ անվանի գիտնական Ներսես Համբրոնացու քույրն էր, իշխան Օշին Բ-ի կրտսեր դուստրը: Ինչպես տեսնում ենք, Սմբատի հայր պարոն Կոստանդինը

աղգակցական կապեր ունեւր երկու խոշոր ավատական տոհմերի՝ Ռուբինյանների և Հեթումյանների հետ:

Կոստանդին Պայլը Լևոն Բ թագավորի օրոք պետութեան մեջ վարում էր սպարապետի բարձր պաշտոնը, որը հետագայում հանձնեց իր որդուն՝ Սմբատին:

Կոստանդինը, ինչպես ասացինք, եղև է Զարել թագուհու խնամակալը: Երբ Հեթումը ամուսնացավ Զարելի հետ, նա դեռ անշահափաստ էր, այդ պատճառով երկրի փաստական ղեկավարութիւնը իր ձեռքը վերցրեց նրա հայրը՝ Կոստանդինը: Այդ մասին Միքայել Ասորին գրում է.

«1226 թվականին բոլոր իշխանների համաձայնութեամբ Լևոն Բ-ի դուստր Զարելին տվեցին պարոն Կոստանդինի որդուն՝ Հեթումին և նրան դարձրին հայոց թագավոր: Բայց քանի որ Հեթումը դեռ պատանի էր, նրա հայրն էր թագավորութիւնը կառավարում»: [«Ի թուին Հայոց ՈՂԵ (675=1226) միաբանութեամբ ամենայն իշխանացն տուին զԶապէլ դուստրը Լևոն թագաւորին ի կնութիւն Հեթմոյ որդոյ պարոն Կոստանդեայ, և թագաւորեցուցին ի վերայ Հայոց, որ էր տղայ հասակաւ. և հայր նորա կարգաւորէր զթագաւորութիւնն»]:<sup>1</sup>

Կոստանդին թագավորահայրը երկար է ապրում, երկրի արտաքին քաղաքականութեան մեջ խոշոր դեր է խաղում: Նա կարողացավ կարգավորել Կիլիկիան հայոց թագավորութեան հարաբերութիւնները ինչպես հարևան խաչակիր արևելյան կոմսութիւնների, այնպես էլ մահմեդական պետութիւնների

<sup>1</sup> Միլայել Ասորի, էջ 518: Տե՛ս նաև Գարեգին Հովսեփյան, Յիշատակարանք Ձեռագրաց, հատ. Ա (ն գրից մինչև 1250 թ.). Անթիլիան, 1951, էջ 985:

հետ: Մի հիշատակարանում Կոստանդինի մասին հետևյալն է ասված.

«Շատ խորհրդավոր կերպով կանխատես, Աստուծո կամքով ընտրված արքունի գահի փայլուն օրինական դատավոր պարոն Կոստանդինը հանդիսանում էր մեծատոհմ, ամենաականավոր և ամենախելոք և խոհեմ իշխանաց իշխանը»:

[«Խորին խորհրդով առաջատես կամալքն Աստուծոյ ընտրեալ ի պատիւ պերճանաց իշխանական գահոյց դատաւոր իբրաւանաց կամացն Աստուծոյ, մեծատոհմ և ամենաերեւելի, ամենախմաստուն և խոհեմ իշխանաց իշխան պա(րոն) Կոստ(անդին)»]:<sup>2</sup>

Կիրակոս Գանձակեցին նույնպես նշում է Կոստանդինի մատուցած աչքի ընկնող ծառայութիւնները: Նա գրում է. «Մեծ իշխան Կոստանդինը երբ թագավորական իշխանութիւնը հանձնեց իր որդուն՝ Հեթումին, բոլոր թագավորական գործերը իր վրա վերցնելով, խելացի կերպով կարգավորեց. (իշխանների) մի մասը հոծարութեամբ նրան ենթարկվեց, իսկ անհնազանդներին ոչնչացրեց՝ ոմանց փախցնելով, ուրիշներին էլ մահվան դատապարտելով: Սեր և միաբանութիւն ստեղծեց Հոռոմոց Սուլթանի հետ»:

[«Մեծ իշխանն Կոստանդին իրրև առ զիշխանութիւնն թագաւորութեանն որդոյ իրում Հեթմոյ. զամենայն հոգս արքայութեան յանձն առեալ՝ իմաստարար կարգաւորէր, զկէսսն հնազանդէր սիրով, և զոչ հնազանդեալսն բառնայր ի միջոյ՝ զոմանս փախստական առնելով, և զայլս մահութեամբ: Արար սէր և միաբանութիւն ընդ Սուլտանի Հոռոմոց»]:<sup>2</sup>

<sup>1</sup> Արարատ ամսոցիր, 1899, Բ տարի, էջ 90:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 179:

Սմբատը ևս իր հոր մասին գովեստով է խոսում: Նա գրում է՝ Կոստանդինը մեռավ 1263 թվականին, և Էլր նա իբրև զնահապետ երկրին Կիլիկիոյ և նորին խրատով անդրդուելի մնային և հաստատունս<sup>1</sup>:

Կոստանդինը բազմազավակ հայր էր: Նա ուներ 8 տղա և 4 աղջիկ: Տղաների անուններն էին՝ Սմբատ, Բարսեղ, Հեթում, Օշին, Լեոն, Հովհաննես, Կոստանդին և Վասակ, իսկ աղջիկներինը՝ Մարգարիտ, Հոփսիմե, Թեոֆան, Կղա-Մառի: Կոստանդինի հրամանով գրած «Չանդր» բերդի արձանագրության մեջ ասված է.

«Այժմ սա (Կոստանդինը) ունի հինգ տղա և երեք աղջիկ: Տղաներից մեծին՝ պանծալի, զեղեցկաղեմ և լի առաքինությամբ Հեթումին դարձրից Հայոց թագավոր, երկրորդ որդուն՝ Բարսեղին ձեռնագրեց թագավորության արքեպիսկոպոս, երրորդ որդուն՝ Սմբատին՝ սպարապետ, չորրորդ որդուն՝ Օշինին՝ պալլ և հինգերորդ որդուն՝ Լեոնին՝ իշխանաց իշխան: Գուտոր Մարգարիտը վախճանվեց 12 տարեկան հասակում: Ստեփանին (Թեֆանաւ) ամուսնացրեց Կիպրոսի թագավորի հետ, իսկ երրորդ դստեր (Կղա-Մառի) ամուսնացրեց Կիպրոսի իշխանության պալլի հետ, որը Բեյրութի և Յոպպեի տերն էր...»:

[«Արդ ունէր սա (Կոստանդին) Ե որդիս եւ Գ դուտըր. զմի որդին ավ. թգրեցուց Հայոց զպանծալին եւ զգեղաշէն եւ զլին առաքինությամբ զՀեթում. եւ զԲ որդին զԲարսեղ արքեպիսկոպոս թգութեան. եւ զԳ որդին Սմբատ սպարապետ եւ զԴ — որդին Աւշին պալլ եւ Ե էր որդին

Լէոն իշխանաց իշխան. եւ զՄարգարիտ դուտըր յԹ տիս նա յարդարէ ի մարգա... [թա]գաւորութեան եւ զՍտեփան՝ ամուսնացուցանէ ընդ թագաւորին կիպրացոց. իսկ զԳ որդին պարոնութեան պալլին Կիպրոսի, որ էր տէր Պերութի եւ Յոպպէի...»]:

Ինչպես տեսնում ենք, այս արձանագրության մեջ հիշատակված են Կոստանդինի միայն հինգ տղաները և երկու դուստրերը: Պետք է կարծել, որ մյուս զավակները այն ժամանակ դեռ ծնված չեն եղել: Սմբատի եղբայր Հովհաննես Արքեպիսկոպոսը իր ձեռքով գրած մի հիշատակարանում թվարկում է նաև իր մյուս եղբայրներին: Նա գրում է.

«Ազաշում եմ հիշյալ արքայի հորը՝ պարոն Կոստանդինին և իմ բոլոր եղբայրներին՝ Սմբատ Սպարապետին, Հեթում թագավորին, պալլ Օշինին, Բասիլ [Բարսեղ] արքեպիսկոպոսին, Լեոն մարաջախտին, Վասակ իշխանին, ինչպես նաև քույրերիս՝ Հոփսիմէ կույսին, Կիպրոսի դշխուհի Թեֆանին, և Ճաֆունի զքուհի Մղա-Մառի(ի)ն և նրա զավակներին՝ Մարեմին և Ֆիլիպին, նույնպես և իմ մորը՝ Պեագրիծին» [«Ազաշում յիշել զհայր արքային և մեր զպարոն Կոստանդին և զամենայն եղբարսն իմ զՍմբատ սպարապետ և զՀեթում թագաւոր և յՕշին պալլ և զԲասիլ արհեպիսկոպոս և զԼեոն մարաջախտ և զՎասակ իշխան, այլ և զքոյր մեր զՀոփսիմէ կրանևուր, զԹեֆանո զդիս Կիպրոսս և զկղա-Մառի գունդէս Ճաֆուն և զաւակացն և զՄարեմն և զՖիլիպն, նաև մայրիկն իմ Պիագրիծ»]:

1 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 75:

2 Մատենագարանի ձեռագիր № 4243, էջ 222 բ.

1 Սմբատ, Վենետիկ, էջ 238:

Ինչպես տեսնում ենք, բացառությամբ Կոստանդինի և Մարգարիտի, Սմբատի բոլոր եղբայրների<sup>1</sup> և քույրերի անունները այս հիշատակարանում կան: Այս հիշատակումից նկատելի է, որ Սմբատը Կոստանդինի ավագ որդին է, և որ Կոստանդինը ունեցել է երկու կին՝ Տամա-Լիծին, այսինքն՝ Սըմբատ Սպարապետի մայրը և Պեղորիծը՝ Հովհաննես Արքաեղբոր մայրը:

Կոստանդինի որդիներից արտակարգ բնդունակությունների տեր էր նաև Հովհաննես Արքաեղբայրը: Նա իր գրվածքներով և հատկապես մանրանկարչական աշխատանքներով խոշոր ծառայություն է մատուցել հայ մշակույթի զարգացմանը: Երևանի Մատենադարանում պահպանված նրա ինքնագրերը և մանրանկարչությունը անմահացնում են նրա անունը<sup>2</sup>:

Հովհաննես Արքաեղբորը բարձր է դասում նաև Ալիշանը, համարելով նրան «առաել քան զմտաւոր վաստակս, բազում մատենաք ընդօրինակելք, ևս և իւրով խրախուսանօք յօրինեալք»<sup>3</sup>:

Հովհաննես Արքաեղբայրը հայտնի է նաև իր հասարակական ու մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ:

<sup>1</sup> Սմբատ Սպարապետի Կոստանդին եղբոր մասին հիշատակում է միայն Ալիշանը (Մխուան, էջ 76):

<sup>2</sup> Մատենադարանի ձեռագիր, № 1315, 4243, 195:

<sup>3</sup> Ալիշան, Մխուան, էջ 519: 1270 թվականի հիշատակարաններից մեկում Հովհաննեսը իրեն «Ռարունի» է անվանում: Մեզ համար դա այնքան կարևոր չէ, նրա մեծությունն այն է, որ նա իր տրնաջան աշխատանքով հարստացրել է հայ մշակույթը (տե՛ս Մատենադարանի ձեռագրեր, 1915, 4943, 195, 5525, 196 և այլն):

Սմբատի եղբայրներից աչքի էր ընկնում նաև Բարսեղը կամ Բասիլիոսը: Նա եղել է Գրադրակի առաջնորդը<sup>1</sup>, իսկ հետագայում դառնում է արքեպիսկոպոս<sup>2</sup>: Նա միաժամանակ զբաղվում էր մտավոր աշխատանքով: Հայտնի է նրա «Բերականական գրոց» գիրքը և այլն: Սմբատի եղբայրներից Լեոնը քաղաքական գործիչ էր: Նա նշանակվեց մարաշխա՝ Կիլիկիայի թագավորության իշխան<sup>3</sup>:

Սմբատ Սպարապետի ծննդյան տարեթիվը ստույգ հայտնի չէ, այդ մասին զանազան կարծիքներ գոյություն ունեն: Ոմանք գտնում են, որ Սմբատը ծնվել է 1205 թվականին<sup>4</sup>: Դա, իհարկե, ճիշտ չէ: Ղևոնդ Ալիշանը գրում է, որ Սմբատը ծնվել է 1206 թվականին, բայց հետագայում ուղղում է իր սխալը<sup>5</sup>: Իր ծննդյան մասին Սմբատը ուղղակի գրում է, որ ինքը ծնվել է 1208 թվականին<sup>6</sup>:

Նույնպիսի շփոթություն գոյություն ունի Սմբատի մահվան տարեթվի մասին: Մի քանի հեղինակներ Սմբատի մահվան տարեթիվը դնում են 1275 թվականը<sup>7</sup>, որ ճիշտ չէ, սխալ է նաև այն, որ Սմբատի մահվան թիվը դնում են 1279 թվա-

<sup>1</sup> «Յիշատակարանք», էջ 1226:

<sup>2</sup> Ալիշան, Մխուան, էջ 519:

<sup>3</sup> Զարբանեայան, «Մատենադարան Հայկական Թարգմանութեանց Կախնաց», Վենետիկ, 1889, էջ 567: Տե՛ս նաև Ալիշան, «Մխուան» էջ 74:

<sup>4</sup> «Արևելք», 12 հուլիսի, Հալեպ, 1957:

<sup>5</sup> Անսիզների առաջարան (Assies d'Antioche, Venise, 1876 p. x):

<sup>6</sup> Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 116:

<sup>7</sup> Չամչյան Մ., «Պատմություն Հայոց», հատ. Գ, Վենետիկ, 1784, էջ

կանը<sup>1</sup>: Սմբատ Սպարապետը իրականում սպանվում է 1276 թվականին պատերազմի դաշտում<sup>2</sup>:

Եղբայրների մեջ Սմբատը հատկապես աչքի է ընկնում իր արտակարգ ընդունակություններով: Նրա մասին շատերը գովեստով են խոսում, անվանելով նրան «սպարապետն Հայոց մեծաւ»<sup>3</sup>, «արուստին հմուտ»<sup>4</sup>, «Քաջամարտիկ զինուոր և արիագույն սպարապետ»<sup>5</sup>, «Բազմահանճար և նրբարան իմաստիցս»<sup>6</sup>, «Իմաստուն սպարապետ Հայոց»<sup>7</sup> և այլն:

Սմբատ Սպարապետը զեռ պատանի հասակում պարզեատրվել է Լևոն Բ թագավորի կողմից: Այդ մասին իր «Տարիգիրք»-ում գրում է.

«Նա (Լևոն Բ-ն) եթե իմանար, թե, մի որևէ տեղում կա իմաստուն և զիտուն անձնավորություն, գործով կամ զինվորական գծով, բանավեճերում հաջողակ, մարդ էր ուղարկում և խոստումներով իր մոտ հրավիրում ու պարզեներով հանգրստացնում: Դրանցից մեկն էլ ես եմ, Սմբատ Սպարապետըս, այս պատմությունը շարադրողը»:

[«Ուր իմանայր թէ՛ գոյ այր իմաստուն եւ զիտուն եւ աջողի գործ կամ ի զինուորութիւն կամ ի խօսս և ի պատասխանիս՝ յղէր և կոչէր խոստամամբ, և հանգուցանէր պարզեօք, յո-

<sup>1</sup> «Արևելք», 11 հուլիսի, 1957:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. Ա, Երևան, 1951, էջ 105—107:

<sup>3</sup> «Reculie des Croisades», t 1, էջ 606:

<sup>4</sup> «Յիշատակարանք», էջ 5 957:

<sup>5</sup> «Արարատ» ամսագիր, 1800, Բ տարի, էջ 90:

<sup>6</sup> «Յիշատակարանք», էջ 592:

<sup>7</sup> Մատենադարանի ձեռագիր, № 637, էջ 9:

րոց մի ես եմ Սմբատ Սպարապետ թարգմանող տառիս եւ պատմութեանս»<sup>1</sup> ]:

Լևոն Բ թագավորի կողմից նա պարզեատրվել է, ոչ թե «զիտուն» կամ «զորավար» լինելու համար, այլ մարմնամարզական կամ զինվորական խաղերին մասնակցելու, այդ մըրցումներում հաջողություն ունենալու համար:

Ահա այն բոլորը, ինչ մենք կարող ենք ասել Սմբատ Սպարապետի պատանեկության ու նրա տոհմի մասին: Նա այն աչքի ընկնող հայ զորավարներից էր, որ հանդես գալով XIII դարում, Գրիգոր Մագիստրոսից և Մխիթար Հերացուց հետո, երրորդ աշխարհական հեղինակն է, որ իր անպարտ սուրբ և ստեղծագործ գրիչը կես դար շարունակ գործածել է հավասար եռանդով, ջանասիրությամբ ու սիրով:

## ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԸ ՈՐՊԵՏ ԶՈՐԱՎԱՐ

1226 թվականի պետական հեղաշրջումից հետո, պատանի հասակում, Սմբատը նշանակվեց հայոց զորքերի զխավոր հրամանատար՝ սպարապետ: Այդ պաշտոնում նա մնաց ավելի քան հիսուն տարի, այսինքն, մինչև իր կյանքի վերջը՝ 1276 թվականը: Սմբատ Սպարապետի վարած ճակատամարտերի մասին նյութերի սակավության պատճառով, դժբախտաբար, մանրամասն խոսել չենք կարող: Կաշխատենք մեր ձեռքի տակ եղած տեղեկությունների հիման վրա շարադրել մի քանի մանրամասնություններ, կապված Սմբատի ռազմական որոշ գործողությունների հետ:

<sup>1</sup> Սմբատ, Փարիզ, էջ 110:



Պատմիչների վկայություններից պարզվում է, որ Սմբատ Սպարապետը մի շարք պատերազմներ է վարել մամլուքների, թուրքական զանազան ցեղերի դեմ, որոնք հաճախակի հարձակումներ էին գործում Կիլիկյան հայոց թագավորության վրա, այդ հարուստ երկիրը ասպատակելու և կողոպտելու նպատակով:

Սմբատի սպարապետության առաջին շրջանի քսան տարվա ռազմական գործունեության մասին ոչ մի տեղեկություն չունենք: Նրա մղած պատերազմների մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1246 թվականին<sup>1</sup>, երբ Սմբատ Սպարապետը խոշոր ճակատամարտ է տվել Իկոնիայի սուլթան Դիաս-ադ-դին Քեյ խոսրով Բ-ի վիթխարի բանակի դեմ:

Հայոց զորքերի և սուլթանի բանակի միջև պատերազմը տեղի է ունեցել Տարսոն քաղաքի մոտ, Սալոն գետի հովտում: Թշնամու վիթխարի զորքը անակնկալ ներխուժում է Կիլիկյան հայոց թագավորության սահմանը, որի մասին Սմբատը ասում է. «Եկան ու մտան Կուկլիկ Կապանի միջով երկու հարուր վաթսուց հազար մարդ և շրջապատեցին Տարսոն»: [Եկին մտին ընդ Կուկլիկայ Կապանն երկու հարիւր եւ վաթսուց հազար մարդ. եւ բոլոր պատեցին զՏարսուս]<sup>2</sup>: Այդ իրադարձությունների ծավալման ժամանակ Հեթում Ա թագավորն իր հեծյալ գնդերով գտնվել է Ադանա քաղաքում:

Սուլթանի գերազանց ուժերի դեմ դուրս է գալիս երիտասարդ զորավար Սմբատ Սպարապետը, իր ծերունի հոր՝ Կոստանդին Պալլի հետ: Թշնամին կովի ժամանակ օգտագոր-

ծում է բաբաններ: Այդ մասին Սմբատը գրում է. «Եվ եթե բաբանների կողմից հասցված բոլոր նեղությունները ու պատերազմական (գործողությունները) գրեինք, կարող էր շատ լինել»: [«Եւ եթէ զամէն նեղութիւն բաբանաց ու զկոխ գրեալ էաք՝ նա կարի շատ էր լեալ»]: Սկսվում է կատաղի ճակատամարտը: Սմբատի վկայությամբ «Երկու կողմերից շատերը զոհվեցին, բայց դրսի (հակառակորդի) կողմից հարյուրավորակ ավելի»: [«Շատք մեռան յերկուց կողմանց, բայց ի դրացեն՝ հարիւրապատիկ»<sup>3</sup>]:

Չնայած Սմբատ Սպարապետի զորքերը այդ ճակատամարտում հաղթող են դուրս գալիս, բայց վերջնական հաղթանակի համար նախադրյալներ չկային: Թշնամու զորքը թվական տեսակետից մի քանի անգամ ավելի էր: Երբ հակառակորդը առաջարկում է հաշտության բանակցություններ սկսել, Սմբատ Սպարապետը, հետագա զոհերից ու ավերածություններից խուսափելու համար, անմիջապես համաձայնում է:

Այդ բանակցությունների կապակցությամբ Սմբատը հետևյալն է գրում. «Նստեալ էր սուլթան իխիթ Ատինն յիր բերդըն ի Կալոնոսոն. ու կու խմէր՝ լոկ ասաց «քո՛վս, քո՛վս» ու մեռաւ»: Պարզվում է, որ կովի եռուն պահին սուլթանը հանկարծամահ է լինում, որի պատճառով նրանք առաջարկում են հաշտություն կնքել: Այդ առթիվ Սմբատ Սպարապետը իր ակտոսանքն է հայտնում, ասելով որ սուլթանի մահը չէինք իմացել, այլապես կարող էինք նեղել: Հեղինակի խոս-

<sup>1</sup> Սմբատ, Փարիզ, էջ 123:

<sup>2</sup> Նույնը:

<sup>1</sup> Սմբատ, Փարիզ, էջ 123—124:

<sup>2</sup> Նույնը, 123:

<sup>3</sup> Նույնը, էջ 124:

քերով՝ «Եւ շէաք իմացեր զսուլտանին մահն. զի կարէաք նեղել»<sup>1</sup>։

Այսպիսով, այդ ճակատամարտում հայոց զորքերը Սըմբատ Սպարապետի գլխավորութեամբ կարողանում են արժանի հակահարված տալ թշնամու ուժերին ու երկրի սահմաններից նրանց դուրս վանղել։

Այդ պատերազմից տասներեք տարի հետո հիշատակվում է ևս մի ուրիշ ճակատամարտի մասին, որ տեղի է ունեցել 1259 թվականին Առակլի քաղաքի մոտ։ Օգտագործելով հայբյուզանդական հարաբերությունների լարված վիճակը, Ռուսի սուլթան Ռուքն-էդ-դին Դլիճ Արսլան Դ-ն (1257—1265) անսպասելիորեն հարձակվում է Կիլիկյան Հայաստանի վրա և շրջապատում հայոց Մունղաս ամրոցը։ Հեթում թագավորը իմանալով այդ մասին, Սմբատ Սպարապետի գլխավորությամբ ուղարկում է հայոց հեծյալ գնդերը։ Սմբատ Սպարապետի և Իկոնիայի սուլթանի զորքերի միջև ուժեղ ճակատամարտ է տեղի ունենում։ Այդ պատերազմում Սմբատ Սպարապետի զորքը փայլուն հաղթանակ է տանում։ Թշնամին գլխովին ջախջախվում և փախուստի է դիմում։ Սմբատ Սպարապետը հետապնդելով նահանջող թշնամուն, հասնում է մինչև Առակլի քաղաքը, որտեղ կենտրոնացած էին թըշնամու գլխավոր ուժերը։ Այստեղ ևս տեղի է ունենում մի նոր կատաղի ճակատամարտ։ Առակլի քաղաքի պարիսպների տակ երկու կողմերն էլ մեծ զոհեր են տալիս։ Հայկական զորքերը Սմբատ Սպարապետի գլխավորությամբ ջախջախում են թշնամուն։

<sup>1</sup> Սմբատ, Վենետիկ, էջ 228։

Այդ ճակատամարտում կովի եռուն պահին Սմբատը լուր է ստանում, որ իր փեսան՝ Վահրամ համուսեցին շրջապատման մեջ է ընկել և անխուսափելի կորստյան է մատնված։ Եվ իրոք, թշնամու գերազանց ուժերը շրջապատել էին Վահրամի ջոկատը թի մեջ առեալ և նիզակ եղեալ ի շորեցունց կողմանց յիրեարս մղէին»<sup>1</sup>, վկայում է Սմբատը։

Սմբատ Սպարապետը շապում է փրկել Վահրամ համուսեցուն՝ իր զորավարին։ Նա իր կտրիճներով նետվում է թշնամու վրա, օգնութեան է հասնում Վահրամին և նրան ազատում շրջապատումից։ «Այդ տեսնելով, քաջարի զինվոր հայոց Սպարապետ Սմբատը,—ասված է «Տարեգրքում»,—թագավորի հարազատը, վերցնելով նիզակը, հարձակվեց (թըշնամու) վրա, նրանցից շատերին գետին գլորեց և ազատեց իր փեսային՝ Վահրամին»<sup>2</sup>։ Այնուհետև քաջարար քջեց նրանց մինչև իրենց ճամբարները»։

[«Ձայն տեսեալ արիագոյն զինուորն, սպարապետն հայոց Սմբատ, հարազատն արքային, և առեալ նիզակ գնայր ի վերայ և դիաթաւալ ի նոցանէ յերկիր ընկենոյր, և ազատէր ի նոցանէ զփեսայն իւր Վահրամ և քաջապէս մղէր զնոսա յիջևանս իւրեանց»<sup>3</sup>]:

Հայ մարտիկները տեսնելով իրենց հրամանատարի՝ Սըմ-

<sup>1</sup> Սմբատ, Վենետիկ, էջ 235։

<sup>2</sup> Սմբատ Սպարապետը շատ հաճախ իր մասին երրորդ դեմքով է խոսում։ Օրինակ, նա իր «Տարեգրքի» 123-րդ էջում գրում է. «Եւ թագաւորահայրն պարոն Կոստանդին ու Սմբատ Գունդստարլն եկին, մտին ի Տարսոն»։ Կարծես թե իրեն մասին չէ խոսքը։ Բայց նույն էջի վերջում ասում է. «Թագաւորահայրն եւ ես Սմբատ Գունդստարլն մտանք ի Տարսոն»։

<sup>3</sup> Սմբատ, Վենետիկ, էջ 235։

բատ Սպարապետի այդ օխրագործութիւնը, իրենք ևս ոգե-  
վորված նրա օրինակով, կրկնապատկված եռանդով ու անձ-  
նագոհ խիղախությամբ ջախջախում են թշնամուն և փախու-  
տի մատնում:

«Փախուստի մատնելով նրանց,— գրում է պատմիչը,—  
կոտորեցին անօրեններից շատերին, իսկ կենդանի մնացած-  
ները խալտառակ կերպով փախան զնացին Իկոնիա իրենց  
սուլթանի մոտ»: [«Փախուստ դարձուցեալ զնոսա՝ զբազումս  
կոտորեցին յանօրինացն, և մնացեալքն փախստեալ զնացին  
յԻկոնիոն, առ սուլտանն իւրեանց, լի ամօթով»<sup>1</sup>]:

Մի քանի տեղեկութիւններ կան այն մասին, որ Սմբատ  
Սպարապետը մի շարք կռիւմներ է մղել նաև թուրք-սելջուկ-  
յան առանձին ցեղերի դեմ և մեծ զոհաբերութիւնների զնով  
փրկել է երկիրը նրանց ասպատակութիւններից: Այսպես,  
օրինակ, Սմբատը երկար ժամանակ պայքարի մեջ է մտել  
սելջուկ բռվոր ցեղերից մեկի դեմ, որի առաջնորդը Խարա-  
ման անունով մեկն է եղել: XIII դարում այդ ցեղը այնքան  
էր հզորացել, որ Իկոնիայի սուլթանութիւնն անգամ վախե-  
նում էր նրանից: Խարամանի զորքը Իկոնիոնի մի քանի քա-  
ղաքներ ավերելով, շարժվում է դեպի Կիլիկիա, որտեղ նա  
ասպատակում է մի շարք գյուղեր ու քաղաքներ: Խարամանի  
հրոսակները ավերում են Սավրիա և Սելեկիա քաղաքները:  
«...Բազում նեղութիւն էած կողմանն Սարիոյ և Սելեկիոյ,  
գերելով զնոսա, և երկիցս անգամ կոտորեաց ի զօրաց արբա-  
յին Հեթմոյ»<sup>2</sup>, գրում է պատմիչը: Սմբատ Սպարապետը 1263

<sup>1</sup> Սմբատ, Վենետիկ, էջ 235:

<sup>2</sup> Նույնը, էջ 238:

թվականից երեք տարի շարունակ գտնվել է շրջապատման  
մեջ և պայքարել նրանց դեմ: «Թագաւորաեղբայրն և սպա-  
րապետն Հայոց Սմբատ Գ ամ կալաւ զնա ի մէջ այնքան  
բազմութեան անօրինացն: Եւ գոռոզն Խարաման նեղէր զնա  
սաստկապէս և ամենայնի վտանգ հասուցանէր Սմբատաւ»<sup>1</sup>:  
Նրա կյանքը վտանգի տակ է գտնվել մինչև որ Հեթում Ա  
թագավորն օգնական զորք է ուղարկել Սմբատին, այդ շրջա-  
պատումից ազատելու համար: Հայոց զորքերը մարտի բռնը-  
վելով Խարամանի հրոսակների հետ, կարողանում են ջարդել  
նրանց և փախուստի մատնել: «Հարեալ զանօրէնսն ի փա-  
խուստ դարձուցին, որ և խոցոտեցին նիզակաւ և նետիւ  
զԽարամանն, և դարձաւ ամօթով, և յետ սակաւ աւուրց սա-  
տակեցաւ ի խոցուածէն անօրէնն այն: Եւ ի տեղի մարտին  
սպանաւ եղբայր անօրինին որ կոչէր Պօնսուլ»<sup>2</sup>: Այսինքն,  
Սմբատի զորքերը Խարամանի հրոսակներին խոչտառակ  
պարտության են մատնում և երկրից դուրս բշտում, փրկելով  
այդտեղ բնակվող հայ բնակչությանը:

Կիլիկիան հայկական թագավորութիւնը մեծ ավերումնե-  
րի ենթարկվեց հատկապես սուլթան Բեյբարսի 1266 թվակա-  
նի արշավանքների ժամանակ: Այդ ճակատամարտը տեղի է  
ունեցել Մաոի քաղաքի մոտ և վերջացել հայոց զորքերի  
պարտությամբ:

Հարց է առաջ գալիս, մասնակցե՞լ է Սմբատ Սպարապե-  
տը այդ ճախողված ճակատամարտին թե ոչ: Հայ մատենա-  
գիրներից ոչ մեկը չի վկայում, որ Սմբատը այդ ճակատա-

<sup>1</sup> Սմբատ, Վենետիկ, էջ 238—239:

<sup>2</sup> Նույնը, էջ 240:

մարտին մասնակցել է: Սմբատի ժամանակակիցներից միայն Ասորական պատմիչ Աբուլ-Ֆարաջն է, որ գրում է, թէ սուլթան Բեյբարսի դեմ վարած մարտին մասնակցել է նաև Սմբատ Սպարապետը, բայց դա վերաբերում է ոչ թե 1266 թվականի Մառի ճակատամարտին, այլ 1276 թվականի Սարվանդիբարի ճակատամարտին, որտեղ Սմբատ Սպարապետը, իրոք, գլխավորել է մարտը ընդդեմ սուլթան Բեյբարսի զորքերի:

1266 թվականի ճակատամարտում հայկական զորքերը գլխավորում էին Հեթում Ա թագավորի երկու որդիներ՝ Քորոս և Լևոն թագաժառանգները: Նրանց հետ էր նաև Սըմբատի փոքր որդին՝ Վասիլ-Քաթարը: Հայտնի է, որ այդ ճակատամարտում թագաժառանգ Քորոսը հերոսի փառքով զոհվում է, իսկ Լևոնին ու Վասիլ-Քաթարին գերի են տանում Եգիպտոս, որպես «արմաղանտ»<sup>1</sup>:

Այդ ճակատամարտին Սմբատ Սպարապետի եղբայր Հովհաննես Արքանեղբայրը նվիրել է մի ընդարձակ հիշատակարան, որի ձևագիրը գտնվում է Երևանի Մատենադարանում<sup>2</sup>: Այդ արժեքավոր վկայություն մեջ Հովհաննես Արքանեղբայրը հանգամանորեն պատմում է բոլոր այն մասնակիցների մասին, որոնք կռվել են սուլթան Բեյբարսի զորքերի դեմ, սակայն նա ոչ մի տեղ չի հիշատակում Սմբատ Սպարապետի մասնակցության մասին:

Սմբատ Սպարապետը 1269 թվականին նույնպես Մառի ճակատամարտին նվիրել է մի պատմական պոեմ<sup>3</sup>, որտեղ

հանդամանորեն նկարագրում է այդ արյունալի կռիվների մանրամասնությունները, բայց ոչ մի խոսք չի ասում իր մասնակցության մասին: Բացի պոեմից, Սմբատը իր «Տարեգրքում» խոսում է այդ ժամանակվա հայոց զորքերի տեղաբաշխության մասին: Նա պատմում է, թե ի՞նչպես սուլթան Բեյբարսի 1266 թվականին կատարած արշավանքի ժամանակ հայոց զորքերը բաժանված էին երեք մասի: Հեթում Ա թագավորը հայոց զորքերի մի մասը իր հետ վերցրած գնացել էր մոնղոլների մոտ՝ նրանցից օգնություն խնդրելու, մյուս մասը առանձնացած էր հայոց սահմանները պաշտպանելու համար, և երրորդ մասը Քորոս և Լևոն եղբայրների հրամանատարությամբ դուրս էր եկել թշնամու դեմ պատերազմելու: Այդ մասին ինքը Սմբատը գրում է. «Եւ նորա [սուլթանի զորքերը] եկեալ հասին մինչև ի տեղին որ կոչէր Նիկոպոլիս, առ ստորոտով լերինն որ կոչի Սևաւ, և անդ իջեալնս կալան. իսկ զօրքն թագաւորին Հեթմոյ ընդ երիս բաժանած էր, մինն զկնի թագաւորին էին, զի գնացեալ էր ի խնդիրն առ ազգն նետողաց՝ զալ յօգնականութիւն զօրաց իւրոց, և երկրորդ մասն էին ի տեղին յայն որ կոչէր Գուսն, և երրորդ մասն գնացին ընդդէմ անօրինացն ի տեղին որ կոչի Մառի, յամսեանն օգոստոսի, որ ԻԳ էր ամսոյն յաւուր երկշարթի, և անդ օթեալնս կալանս»<sup>4</sup>:

Ինչպես տեսնում ենք, Սմբատը այդ ճակատամարտին իր մասնակցելու մասին ոչինչ չի գրում:

Շատ հավանական է, որ Սմբատ Սպարապետը այդ ժամանակ գտնվել է այն հայկական զորքերի հետ, որոնք գնա-

<sup>1</sup> «Արմաղանտ» — նշանակում է հեռվից բերած թանկարժեք նվեր:

<sup>2</sup> Մատենադարանի ձեռագիր № 4243, էջ 222ր:

<sup>3</sup> Assises d' Antioche, էջ 93:

<sup>4</sup> Սմբատ, Վեհտիկ, էջ 246—247:

ցել էին երկրի հարավ-արևմտյան սահմանը պաշտպանելու Այսպիսով, միանգամայն պարզ է, որ Սմբատ Սպարապետը Մառի այդ պարտութունն կրած ճակատամարտին չի մասնակցել:

Սմբատ Սպարապետի ղեկավարած վերջին ճակատամարտը 1276 թվականի Սարվանդիքարի անտառում տեղի ունեցած ճակատամարտն էր: Սուլթան Բեյբարսը, որը փայլուն հաղթանակ էլ տարել խաչակիրների Արևելյան կոմսությունների դեմ, վիթխարի բանակով շարժվում է Կիլիկյան հայոց թագավորության վրա: 1275 թվականին ներխուժելով երկրի սահմանները, հանկարծակիի բերելով հայ զորքերին, խորանում է երկրի ներսը:

Հիշատակարաններից մեկում ասված է, թե ինչպե՛ս Բեյբարսի զորաբանակներից մի զունդ շարժվելով ղեպի հայոց մայրաքաղաք Սիս, ցանկանում էր զրավել միջնաբերդը: Սակայն քաղաքացիները անձնուրաց ու ամուր պաշտպանություն են կազմակերպում: Թշնամին մեծ կորուստներ տալով, ստիպված ետ է նահանջում, իր հետ տանելով մեծ ավար: 1276 թվականին նախապատրաստված լինելով, հայոց զորքերը, Սմբատ Սպարապետի զլխավորությամբ, ջարդում են թշնամուն:

Երբ 1276 թվականին Բեյբարսը կրկնում է իր արշավանքը և շարժվում ղեպի Կիլիկյան հայոց թագավորության սահմանը, Սմբատը իր բանակը բաժանում է մի քանի մասի: Նա մի փոքրաթիվ զորախմբով, բաց ճանապարհով, շարժվում է թշնամու դեմ: Իսկ մյուս զորքերին դարան է դնում: Այնուհետև Սմբատը իր կտրիճներով դուրս է գալիս ճակատամարտի: Թշնամին տեսնելով Սմբատի փոքրաթիվ զորախումբը,

խարվում է, կարծելով թե նրա զորքերը այդքան քիչ են: Նրանք համարձակություն արժանանալով շարժվում են ղեպի զորախումբը: Բայց Սմբատը ճարակություն կարողանում է ճակատամարտը փոխադրել այնտեղ, որտեղ գտնվում էր դարան մտած հայկական զորքը: Թշնամու համար բոլորովին անսպասելի, իրենց թաքստոցից դուրս են գալիս դարան մտած հայկական զորքերը և սկսում են ջարդել թշնամուն: Դիակների կույտերից, ինչպես ասվում է, մարդիկ շին կարողանում փախչել և բոլորը կոտորվում են: Հետո թշնամին կենտրոնացնելով նոր ուժեր, վիթխարի բանակով նորից շարժվում է ղեպի երկրի խորքը: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում 1276 թվականի աշնանը՝ Մարաշի շրջանի Ջահան գետի հովիտ Սարվանդիքար բերդի մոտ: Այս ճակատամարտում ևս Սմբատ Սպարապետի զորքերը փայլուն հաղթանակ են տանում: Մի հիշատակարանում ասված է. «Եվ նույն (1276) թվականին (սուլթանի զորքերը) արշավեցին ղեպի Սիս: Տերը Լեոն թագավորի՝ միջոցով նրանց սրի անցկացրեց, իսկ կենդանի մնացածները փախան թաքնվեցին իրենց խրամատներում»: [Եվ ի նույն ամի (1276) դարձնալ դարձան ի Սիս և տէրը ձեռամբ Լեոն թագավորի և ի սուր մաշեաց զնոսս և մնացեալքն փախստեալ անկաւ ի խորշս իրեանց»<sup>2</sup>]:

Մերոնի Սմբատ Սպարապետը այդ ճակատամարտում հանդես է բերում բացառիկ արիություն և անձնազոհություն.

<sup>1</sup> Առև Գ, Հայոց թագավոր (1270—1289), Հեթում Ա-ի որդին:

<sup>2</sup> Հայկական ԳԱ Պատմության ինստիտուտ, արխիվ Մ, Մագիստրոսի, գործ 37, թուղթ 81, էջ 6489:

«Իսկ սպայապետն Հայոց մեծաւ քաջութեամբ կացեալ ի մեջ նոցա»<sup>1</sup>, ասվում է հիշատակարանի մեջ:

Ասորական պատմիչ Արուլ-Յառաջը այդ մասին հետևյալըն է գրում. «Նրանք (թուրքմեն և եգիպտացի զորքերը) գնացին Մարաշի կողմից և դարձյալ ներխուժեցին ավերված Կիլիկիա երկիրը: Լեվոն թագավորը այդ ժամանակ շափազանց անհանգստացած էր: Նա հավաքեց իր ամբողջ զորքը և գլխավոր հրամանատարութիւնը հանձնեց իր հորեղբոր՝ պարոն Սմբատ Գունդատարին (Սպարապետին) և այլ իշխաններին: Նրանք ուրբաթ օրը, շաբաթվա սուրբ Պահքի 3-րդ օրը հասան թուրքերի դիրքերը՝ Մարաշի մոտ: Հենց այդ օրը խփվեցին թագավորի հորեղբայր պարոն Սմբատը, մեծամեծներից Կիրիբեղը և այլ 13 անվանի զորավարներ: Շարքայիններից 300 հեծյալներ զոհվեցին, կոլում ընկան նաև շատերը անհավատներից»<sup>2</sup>:

Արդուլ-Յառաջի այս վկայութիւնը հաստատում է հայ ժամանակագիր Պիծակը, որ նույնպես գրում է թե Սմբատ Սպարապետը զոհվել է Սարվանդիքարի ճակատամարտում. «Սպանին ի յայսմ ամի (1276) զՍմբատ Գունդատարն ի Սարվանդա»<sup>3</sup>: Սմբատի Տարեգրքի հրատարակիչ Հ. Ս. Ազրլյանը իր ներածականում նույնպես գրում է. «1277-ին թուրք-

մէն և եգիպտացի միացեալ զօրքեր Մարաշու վրայէն յարձակեցան Կիլիկիա, որուն լեւոն Գ թագաւորը իսկոյն ոտքի գրաւ պաշտպանութեան բանակ մը, և առաջնորդութիւնը յանձնեց Սմբատին՝ իր հօրեղբորը: Հայ բանակը նոյն տարւոյ Մեծ պահքի երրորդ շաբթու ուրբաթ օրը, ճակատ ճակատի եկաւ թշնամիին հետ, և զէնքերու այդ ուժգին բախումին և խառնուրդին մէջ ինկաւ Սմբատ սպարապետ, գրեթէ 70-ամեայ հասակին»<sup>4</sup>:

Այսպիսով, 1276 թվականին Սպարապետը Իկոնիայի և եգիպտոսի միացյալ զորքերի դեմ դուրս գալով կոլի, փայլուն հաղթանակ տանելուց հետո, հայրենիքի փրկութիւնն ու անկախութիւնն համար մղվող պայքարում զոհվում է հերոսի մահով պատերազմի դաշտում:

#### ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սմբատ Սպարապետը դիվանագիտական գործունեութիւն է ծավալել հատկապես մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում, իր արտահայտութիւնով՝ «ի շար և ի դառն ժամանակի», երջ Չինգիզ խանի բարբարոսական հրոսակները ավերակների վերածելով բազմաթիվ երկրներ, Միջին Ասիայից ներխուժեցին Իրան և ապա ավերելով Կովկասի հինավուրց քաղաքները, մոտեցան Իկոնիայի սուլթանութիւնն սահմաններին: Մոնղոլ նվաճողների կոտորածների ու ավերումների բռնի արագութիւնը տարածվեց ոչ միայն Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, այլև ամբողջ Եվրոպայում: Մոնղոլ նվաճողների հաղթական երթը իրական վտանգ

<sup>1</sup> Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 481.

<sup>2</sup> Արդուլ-Յառաջի «գինաստիանների պատմութիւն» գրքից մի քանի հատվածներ թարգմանել է պատմական գիտութիւնների զոկտոր Նիկա Պիզուկակյանի (տե՛ս Cregcii Barl ebzali, Clonicon jyraccum Edidit B-e yan perisiis, 1890, pp. 532-533):

<sup>3</sup> «Մանր ժամանակագրութիւններ», հ. Ա, էջ 105:

<sup>4</sup> Սմբատ, Վենետիկ, «Յառաջարան», էջ Է-Ը:

էր սպառնում նաև Եվրոպային: Արևմտաեվրոպական պետութ-  
ւոյնները, հատկապես Ղոտմի Պապը, շատ էին անհանգրս-  
տացած և միջոցներ էին որոնում կանխելու մոնղոլ նվաճող-  
ների կողմից սպառնացող վտանգը: Ահա այդ նպատակով  
1245 թվականին Յրանսիայի Լիոն քաղաքում Պապի նախա-  
ձեռնութեամբ բազմամարդ եկեղեցական ժողովում որոշվեց  
հատուկ մարդիկ և քարոզիչներ ուղարկել Մոնղոլիա, որպես-  
զի նրանք նախ և առաջ աշխատեն հնարավորութեան սահ-  
մաններում հեթանոս մոնղոլների մեջ քրիստոնեութիւն տա-  
րածել և երկրորդ՝ ուսումնասիրեն նրանց նիստ ու կացը, սո-  
վորույթները, հատկապես ռազմական արվեստը՝ պատերազմ  
վարելու մեջոցներն ու մեթոդները, այն նկատառումով, որ  
եթե գործը հասնի մոնղոլների հետ պատերազմելուն, հան-  
կարծակիի չզան և տեղյակ լինելով նրանց պատերազմական  
արվեստին, կարողանան դիմադրութիւն կազմակերպել: Այդ  
նպատակով մեկը մյուսի ետևից Արևելք ուղարկվեցին Արև-  
մուտյան Եվրոպայից, Ռուսաստանից և այլ երկրներից բազ-  
մաթիվ մարդիկ:

Բայց եվրոպացիներից առաջ մոնղոլների հետ բանակցու-  
թիւնների մեջ մտան Կիլիկիայի հայոց թագավորութեան ներ-  
կայացուցիչները:

Մեծ Հայաստանից մոնղոլ նվաճողների սրից ազատված  
հայ ժողովրդի մի խոշոր հատված թողնելով հայրենի երկի-  
րը՝ տեղափոխվեց Կիլիկիան Հայաստան: Ահա սրանք էին, որ  
ստույգ տեղեկութիւններ հաղորդեցին մոնղոլ նվաճողների  
ավերածութիւնների ու դաժանութիւնների մասին:

Կիլիկիան Հայոց թագավորութիւնը անհանգստացած ուշի  
ուշով հետևում էր մոնղոլների առաջխաղացմանը:

1242 թվականին մոնղոլները մոտեցան Իկոնիայի սահ-  
մաններին. ասպատակելով մի քանի սահմանամերձ քաղաք-  
ներ՝ նրանք վերադարձան Մուղան՝ ձմեռելու: Մինչև մոնղոլ-  
ների Իկոնիա ներխուժելը կիլիկիան հայ ֆեոդալները դեռ  
հույս ունեին, որ գուցե մոնղոլները Իկոնիայի հզոր սուլթա-  
նութիւնից պարտութիւն կկրեն: Սակայն Չմանկատուկի մոտ  
(Երզնկայից ոչ հեռու) 1243 թվականի ճակատամարտում  
Սուլթան Դիաս-ադ-դին Քեյ խոսրովի բանակը պարտութեան  
մատնվեց մոնղոլների կողմից:

Մոնղոլ նվաճողները հետապնդելով նահանջող թշնամուն՝  
թափանցում էին երկրի խորքը:

Կիլիկիան հայկական թագավորութիւնը վերջնականապես  
համոզվեց, որ այլևս ոչ մի ուժ չի կարող կանխել մոնղոլների  
առաջխաղացումը դեպի Կիլիկիա, իսկ ինքն իր սեփական  
ուժերով ի վիճակի չէր կանխելու մոնղոլական վտանգը:

Չունենալով ոչ մի դաշնակից, Կիլիկիան հայկական պե-  
տութիւնը, ելնելով իր երկրի շահերից, նպատակահարմար  
գտավ ոչ թե պատերազմի դուրս գալ մոնղոլների դեմ, այլ  
բանակցութիւններ վարել նրանց հետ: Կիլիկիայի թագավո-  
րութեան այդ քաղաքականութիւնը նպատակահարմար էր ոչ  
միայն այն պատճառով, որ նա չէր կարող լուրջ դիմադրու-  
թիւն կազմակերպել մոնղոլների գերազանց ուժերի դեմ, այլ  
նաև այն պատճառով որ հայերին լուրջ վտանգ էին սպառնում  
նախ և առաջ իրենց հարևան մահմեդական տերութիւնները,  
որոնք արդեն հաշվեհարդար էին տեսել իսաչակիրների արևել-  
յան կոմսութիւնների հետ և հարմար առիթի էին ստասում  
հարձակվելու Կիլիկիան հայոց թագավորութեան վրա:

Անհրաժեշտ է նշել նաև այն, որ առանց այդ էլ անցյալում

Կիրիկյան Հայաստանը բազմիցս հարձակումների ու ասպատակութիւնների էր ենթարկվել իր հարևան մահմեդական պետութիւնների կողմից և միայն շնորհիվ իր հերոսական ու անձնուրաց պայքարի կարողացել էր պահպանել իր անկախութիւնը:

Մոնղոլական նվաճողները խորանալով Իկոնիայի խորքը, մեկը մյուսի հետևից նվաճեցին Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան և մի շարք այլ խոշոր քաղաքներ Փոքր Ասիայում և մոտեցան Կիրիկիայի հայոց թագավորութիւն սահմաններին: Կիրիկյան թագավորութիւնը տագնապի մեջ էր:

Հայոց Հեթում Ա թագավորը իմանալով, որ մոնղոլական զորքերի զխաւոր հրամանատար Բաշու Նոյին արդեն ժամանել է Կեսարիա, առանց ժամանակ կորցնելու, նրա հետ բանակցութիւններ վարելու համար, մեծամեծ նվերներով, հատուկ դեսպանութիւն ուղարկեց նրա մոտ: Հայոց դեսպանութիւն մեջ մտան երկրի ամենակարող ուժերը. դեսպանութիւնը զխաւորում էին թագավորահայր Կոստանդին Պայլը և Սմբատ Սպարապետը: Որպես խորհրդական նրանց ուղեկցում էր վարդապետ Սիմէոն Ասորին<sup>1</sup>: Բանակցութիւնները տեղի ունեցան 1243 թվականին Կեսարիա քաղաքում: Մոնղոլների կողմից բանակցութիւնները վարում էին Բաշու Նոյին և Չարմաղանի կին Ելթինա Խաթունը: Այդ բանակցութիւններում մեծ դեր խաղաց և հայերին աջակցեց հայ իշխան Հասան Զալալը, որը գտնվում էր մոնղոլների բանակում: Այդ մասին Կիրակոս Գանձակեցին, որ գերութիւն մեջ

էր գտնվում մոնղոլական բանակում և մոնղոլների կողմից օգտագործվում էր որպես գրագիր, գրում է.

«Երբ տեսաւ նա (Հեթում Ա), որ սուլթանը նրանց առաջ պարտվեց, դեսպաններ ուղարկեց նրանց մոտ և թանկագին նվերներ, որպեսզի խաղաղութիւն դաշն կնքեն իր հետ և ինքն էլ հարկադրված կլինի նրանց հնազանդվել: Նրանք (դեսպանները), որոնք նկիլ էին բարձր դուռը, իշխան Զալալի միջնորդութիւնը ներկայացվեցին Բաշու Նոյունին, Ելթինա Խաթունին՝ Չարմաղանի կնոջը և այլ մեծամեծ զորավարներին»:

[«Յորժամ՝ ետես՝ եթէ պարտեցաւ Սուլտանն առաջի նոցա, առաքեաց առ նոսա դեսպանս և պատարագս արժանաւորս ղնել նոցա ընդ նմա ուխտ խաղաղութեան, և նրա կալ նոցա ի հնազանդութեան. որք եկեալ ի մեծ դուռն, յանդիման եղեն Բաշու Նոյինին, և Ելթինա խաթունին՝ կնոջ Չարմարունին, և այլ մեծամեծ աւագանույն միջնորդութեամբ իշխանին Զալալին»<sup>1</sup>]: Կիրակոս Գանձակեցու այս վկայութիւնը հաստատում է մի ուրիշ հայ ժամանակագիր՝ Գալիթ Բաղիշեցին: Նա գրում է.

«Երբ ականատես եղաւ զրան, հայոց իմաստուն թագավորը իր եղբորը՝ Հայոց զորավար Սմբատին ուղարկեց Բաշուի մոտ՝ նրան հնազանդութիւն հայտնելու համար»: [«Իբրև զայն ետես, իմաստուն թագաւորն Հեթում (Հեթում Ա) առաքեաց զՍմբատ եղբայր իւր զօրավար Հայոց առ Փաշօն, կալ նմայ ի հնազանդութիւն»<sup>2</sup>]:

Մոնղոլների հրամանատարութիւնը Կիրիկյան հայոց թա-

<sup>1</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1914, հատ. Բ, էջ 1622:

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 269:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրութիւններ XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. Բ, էջ 346:



գաւորութեան ղեսպանութեանը պատուով ընդունեց և նրանց հետ պայմանագիր կնքեց:

Համաձայն հայ-մոնղոլական 1243 թվականի Կեսարիայի բանակցութունների, Կիլիկյան հայոց թագավորությունը իրեն ճանաչում է մոնղոլական կայսրությունից կախման մեջ և պարտավորվում էր նրանց զորքին պարենամթերք մատակարարել, ինչպես նաև հարկ եղած ղեպքում տրամադրել հայկական օժանդակող զորքեր: Մոնղոլները իրենց հերթին պարտավորվեցին պահպանել Կիլիկյան հայոց թագավորության ինքնուրույնությունը, տալով բարեկամական դաշինքի համապատասխան փաստաթուղթ: Հայոց թագավորությունից միաժամանակ պահանջեցին հատուկ ղեսպանություն ուղարկել Մեծ Խանի մոտ՝ սույն դաշնագրությունը վավերացնելու համար: Բաշու Նոյունն Կիլիկյան հայոց թագավորությունից նաև պահանջեց, որ իրեն հանձնեն Սուլթանի ընտանիքի անդամներին՝ մորը, կնոջը և աղջիկներին, որոնք մոնղոլների ձեռքից փախել և ապաստան էին գտել Կիլիկյան հայոց թագավորության արբունիքում:

Սմբատ Սպարապետը իր «Տարեգրքում» բերում է Բաշու Նոյունի խոսքերը, որ եթե հայոց թագավորը մերժի իր պահանջը, սպառնալով ասել է. «բո ամեն սէրն որ հետ մեզ դրիր, նա սուտ է»: Այնուհետև Սմբատը շարունակում է. «Այն ժամանակ նրանք վախեցան, որ մոնղոլները կարող էին ներխուժել երկիրը, հանձնեցին»: [«Նա վախեցին, որ թաթարն շլցուէր յերկիրն, տուին»<sup>1</sup>]: Կիրակոս Գանձակեցին պատմում է, թե ի՛նչպես Հեթումը մեծ ղժվարութեամբ կա-

տարեց մոնղոլների այդ անօրեն պահանջը, ասելով. «Լաւ էր ինձ եթէ զորդի իմ զԼևոն խնդրեալ էին յինէն, քան թէ զնոսա»: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Հեթում թագավորը չէր կարող սուլթանի ընտանիքին հովանավորելով թշնամանալ մոնղոլների հետ և վտանգի ենթարկել իր երկիրը, թեև այդ պատճառով Իկոնիայի սուլթանը ավելի թշնամացավ Հեթում Ա-ի հետ, բայց դրա փոխարեն Կիլիկյան թագավորությունը իր կապերը ամրապնդեց մոնղոլների հետ, Կիրակոսի խոսքերով՝ «հաստատեցին և սէր ընդ արքայի, ետուն և զիր ընդ ղենին իւրեանց՝ զոր Ելտամղայն կոչէին»<sup>2</sup>:

Համաձայն պայմանագրի, ինչպես վերը նշեցինք, Կիլիկիայի թագավորությունը պետք է բանակցություններ սկսեր մոնղոլների հետ նրանց թագավորանիստ Ղարաղորումում: Քանի որ Սմբատ Սպարապետը Կեսարիայի բանակցություններում արդեն իրեն զրսեւորել էր որպես հմուտ զիվանագետի և արդեն բանակցություններ վարելու փորձ ուներ, որոշեցին հայոց պատվիրակության ղեկավար նշանակել Սմբատ Սպարապետին, որը թանկարժեք նվերներով 1246 թվականին ճանապարհ ընկավ դեպի հեռավոր Մոնղոլիա:

Սմբատ Սպարապետի ղեսպանութեան ուղեւորության մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս Սմբատի եղբայր Օշինի որդի Հեթում պատմիչը: Նա գրում է.

«...Հայոց թագավոր Հեթումը (Հեթում Ա) երբ տեսավ, որ թաթարները իսկապես նվաճեցին բոլոր թագավորությունները, բոլոր գավառներն ու վայրերը մինչև Թուրքիայի թագավորությունը, խորհրդակցեց գիտուն մարդկանց հետ և որոշեց

<sup>1</sup> Սմբատ, Փարիզ, էջ 122:

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 270:

<sup>2</sup> Նույնը:

անձամբ գնալ թաթարների ինքնակալի մոտ, որպեսզի ավելի հեշտությամբ ձեռք բերի նրա համակրանքն ու սերը և կարողանա դաշինք կնքել նրա հետ: Նախ նա ուղարկեց Հայոց թագավորության Գունդատապլ պարոն Սինիբալդին (Sinibalde) (Սմբատին), իր մտերիմ մինիստրին, որպեսզի նա կարողանա ստանալ թաթարների ինքնակալի թույլտվությունը (Մոնղոլիա) ազատ և ապահով գնալու համար: Եվ այսպես, պարոն Սմբատը՝ հայոց (Հեթում) թագավորի եղբայրը, մեծ շքախմբով գնաց թաթարների ինքնակալի մոտ՝ իր լյրա դրած պարտականությունները մեծ հաջողությամբ կատարելու նպատակով<sup>1</sup>:

Ոմանք հավատ չեն ընծայում այն բանին, որ Սմբատ Սպարապետը իրոք գնացել է Գույուկ խանի արքունիքը և նրա հետ բանակցություններ վարել: Այսպես, օրինակ, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանն իր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» արժեքավոր աշխատության մեջ այն կարծիքն է հայտնում, որ Սմբատը գնացել է ոչ թե Գույուկ խանի, այլ Ռուսիա՝ Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու խանի մոտ: Իր այդ տեսակետը հաստատելու համար նա բերում է Գրիգոր Ակնեբցու (Ականեցու) այն վկայությունը, թե Սմբատը գնացել է «Սային դան»-ի մոտ<sup>2</sup>, և որովհետև, ըստ արարական աղբյուրների «Սային դան» («Լավ խան») կոչում էին Ոսկե Հորդայի խան Բաթուին<sup>3</sup>, այստեղից էլ Մանանդ-

յանը եզրակացնում է, որ Սմբատը գնացել է Բաթու խանի մոտ<sup>1</sup>:

Մանանդյանը գրում է, որ Սմբատ Սպարապետի ուղեբույսը ժամանակ «Գույուկ մեծ խանն արդեն վախճանվել էր, ուստի և նա ներկայացել էր Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու խանին, որն այդ ժամանակ մինչև Մանգուի մեծ խան ընտրվելը (1251—1259) ժամանակավորապես վարում էր մեծ խանի պաշտոնը»<sup>2</sup>:

Այնուհետև Մանանդյանը բերելով պարսկական պատմագիր Ջուվեյնիի այն վկայությունը, որ Բաթու խանի մոտ գալիս էին զանազան ղեսպաններ՝ արտոնություններ ստանալու և որ այդ ղեսպանների մեջ է եղել Իկոնիայի Ղիա-աղ-դին Քեյ խոսրով սուլթանի որդիներից մեկը, որի հետ է եկել իբր թե նաև Սմբատը, եզրակացնում է՝ ուրեմն Սմբատը գնացել է ոչ թե Գույուկ խանի, այլ Բաթու խանի մոտ<sup>3</sup>:

Մեր ձեռքի տակ եղած մի շարք սկզբնաղբյուրներ հերքում են Մանանդյանի այդ կարծիքը: Նյութերի ուշադիր ուսումնասիրությունից պարզվում է, որ իրականում Սմբատ

<sup>1</sup> Նույն կարծիքն է հայտնել նաև սովետական արևելագետ Նատոնովը տե՛ս Насонов, Монголы и Русь, Москва, 1940, стр. 191.

<sup>2</sup> Ը. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 3, Երևան, 1952, էջ 220:

<sup>3</sup> Սմբատ Սպարապետը Մոնղոլիա գնալու մասին իր «Տարեգրքում» ասում է. «Ի թուին 697 (1248) գնացի ես Սմբատ Գունդատապլս ի Թաթարն. և ի թուին 699 (1250) դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագավորն» (Սմբատ, Փարիզ, էջ 124): Սմբատի այս վկայությունը գժվար է վստահելի համարել, քանի որ Սմբատի ամենահին ձեռագրում այդ նախադասությունը բացակայում է: Այն, մեր կարծիքով, ավելացված է գրիչների կողմից և հակասում է գոյություն ունեցող մյուս փաստերին:

<sup>1</sup> Pierre Bergeron, Voyages en Asie, à la Nore, MDCCXXXV, tome II p. 28.

<sup>2</sup> Գրիգոր Ականեցի, Պատմութուն վասն աղգին նետողաց, Երբմն համարեալ Մաղաբիա Արեղայի, Կոմբրի, 1954, էջ 294:

<sup>3</sup> Тизенгаузен, Сборник материалов, относящихся к истории Золотой орды, Москва—Ленинград, 1941, том II, стр. 92.

Սպարապետը գնացել է Գույուկ մեծ խանի արքունիքը՝ Ղա-  
րաղորում: Այդ մասին XIII դարի հայ ժամանակագիր Լևոն  
Գ-ի որդի Հեթում Բ թագավորը պարզ ու որոշակի գրում է, որ  
«1246 թվականին Հեթում թագավորը իր եղբորը՝ Սմբատ  
Գունդստապլին ուղարկեց Գույուկ խանի մոտ»: [«ՈՂԵ (695=  
1246) թագաւորն Հեղոմ առաքեաց զեղբայրն իւր պարոն  
Սմպաթն գունտուտապլն ի Կիուկ խանն»<sup>1</sup>]:

Բացի Հեթում Բ-ի վկայությունից, այդ մասին խոսում է  
նաև այնպիսի մի վստահելի հեղինակ, որպիսին է Կիրակոս  
Գանձակեցին, որը գրում է. «Մեծահավատ և քրիստոսասէր  
Հայոց Հեթում (Հեթում Ա.) թագավորը, որը նստելով Սիս մայ-  
րաքաղաքում, թագավորում էր Կիլիկիայում, նախ իր եղբայր  
Սմբատին, որը նրա զորավարն էր, ուղարկեց Գույուկ խանի  
մոտ ընծաներով և նվերներով: Նա վերադարձավ նրա մոտից  
մեծ պատվով և անձնական ապահովության հրովարտակով»:

[«Մեծահավատ և քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում,  
որ ի կողմանս Կիլիկիացոց նստէր ի քաղաքն Սիս, յառաջա-  
գոյն առաքեաց զեղբայր իւր զՍմբատ, որ զօրավարն էր նո-  
րին, առ Ղանն Գիուգ ընծայիւք և պատարագօք, և դարձաւ ի  
նմանէ պատուով և հրովարտակօք ընդունելութեանն»<sup>2</sup>]:

Գույուկ խանի արքունիքում Սմբատի բանակցությունների  
մասին խոսում են նաև օտար պատմիչները: Այսպես օրի-  
նակ, Սմբատ Սպարապետին ժամանակակից ասորական  
պատմիչ Աբուլ-Ֆարաջը իր «Դինաստիաների պատմություն»

<sup>1</sup> Մատենադարանի ձեռագիր № 663, էջ 249: Տե՛ս նաև «Մանր ժամա-  
նակագրություններ», հատ. Ա, էջ 81:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 350:

հայտնի գրքում այդ մասին գրում է. «Գույուկ Մեծի խանի  
մոտ եկել էին Հոռոմից սուլթան Ռուքն-ադ-դին, Կիլիկյան  
Հայաստանից (Սմբատ) Գունդստապլը, Հայոց թագավորի եղ-  
բայրը, Վրաստանից՝ թագաժառանգներ ավագ և կրտսեր  
Դավիդները և ուրիշ շատ ու շատ ղեսպաններ Ասիայից ու  
Եվրոպայից»<sup>1</sup>:

Վերջապես, Սմբատը ինքը Մոնղոլիա գնալիս ճանապար-  
հին գրել է մի շարք նամակներ, որոնցից մեկը նրա Սամար-  
ղանդից գրած 1247 թվականի նամակն է, հասցեագրված  
Կիպրոսի թագավոր Հենրի Լուզինյանին, որի բնագիրը բա-  
րեբախտաբար հասել է մեզ<sup>2</sup>: Այս բոլոր փաստերը համոզիչ  
կերպով հաստատում են Սմբատ Սպարապետի դեպի Մոնղո-  
լիա կատարած ուղևորության ստույգ լինելը:

Այժմ տեսնենք թե Սմբատ Սպարապետը ինչպե՞ս է կա-  
տարում իր վրա դրված այդ ծանր պարտականությունները,  
որպես ղեսպանության ղեկավար:

Նախ նա մինչ ճանապարհ ընկնելը տեսակցում է Բաշու  
Նոյնի հետ: Այդ մասին Դավիթ Բաղիշեցին գրում է. «Բա-  
շուն նուրիս խնդրեալ և երդամար դաշինս կոնաց և զլօրավա-  
րըն Սմբատ առաքեաց առ խանն Մեծ»<sup>3</sup>: Այնուհետև Սըմ-

<sup>1</sup> Տե՛ս Historia dyn, էջ 320—321: Վրաց թագաժառանգներ երկու  
Դավիդների մասին ավելի հանգամանորեն տե՛ս (Brosset, Histoire de la  
Géorgie, 1-re partie. t. II, p. 538)

<sup>2</sup> Տե՛ս. Ces autres lettres e'toient du Connétable d'Arménie au  
Roï de Cypre, (v. Pierre Bergeron, Voïage en Asie. t. I, p. 154:

<sup>3</sup> Դավիթ Բաղիշեցի, Ժամանակագրություն (տե՛ս «Մանր ժամանակա-  
գրություններ» հատ. Բ, էջ 346):

բատր, Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ, «Ծրթալ խաղաղութեամբ զերկայնութիւն ճանապարհին»<sup>1</sup>, մինչև հասնում է Ղարաղորում:

Նախ պետք է նշել, որ մոնղոլների տիրապետութեան սկզբնական շրջանում ոչ բոլոր դեսպաններն էին, որ հաջողութուն էին ունենում մոնղոլների արքունիքում: Ետտեբը, որոնք այդ ժամանակ եղել են Ղարաղորումում՝ Մարկո Պոլո, Վիլհելմ դը Ռուբրուկ, Պլանո Կարպինին և ուրիշներ, սարսափելի բաներ են պատմում բարբարոս մոնղոլների դաժանութունների մասին: Մոնղոլ խաների արքունիքում ընդունված սովորութիւնների ամենամանրան խախտման համար օտարներին մահովան էին դատապարտում: Այսպես, օրինակ, երբ Հոռոմի պապի երկրորդ դիվանագիտական միսիայի անդամները, Ասցելինի գլխավորութեամբ, հրաժարվում են կատարել մոնղոլների ստորացուցիչ սովորութիւնները, զորավար Բայոտսոնը հրաման է տալիս «Կոտորել վանականներին»<sup>2</sup>: Իրոք, բազմաթիւ շատ ուրիշ դեսպաններ ու քարոզիչներ ոչ միայն լեշու չկարողացան գտնել մոնղոլ զորավարների ու խաների հետ, այլև այդ բանակցութիւններից կենդանի չվերադարձան տուն:

Սմբատ Սպարապետը բոլորովին այլ էր: Նա իր ճկուն դիվանագիտութեամբ և հմտութեամբ պատմով կատարեց իր վրա դրած պարտականութիւնները: Գույուկ խանի հետ իր հաջող բանակցութիւններով, Հեթում Բ-ի բնորոշ արտահայ-

տութեամբ, Սմբատը «Ձաղթս և զգաւառս հրաշիւք փրկէր»<sup>3</sup>: Դեպքերին ժամանակակից հայ պատմիչ Գրիգոր Ակներցին հաջողութիւնները վերագրում է նրա իմաստութեանը ու ճարտարութեանը, ասելով. Գույուկ խանը նրան այդպիսի մեծ պատմով ընդունեց. «Վասն կորովի եւ իմաստուն բանիցն՝ զոր խօսեցաւ ասպարապետն Հայոց Սմբատ առաջի նորս (Գույուկ խանի)»<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցին հաստատվելով Գրիգոր Ակներցու վկայութիւնը, պատմում է այն արտոնութիւնների մասին, որ շնորհել է Սմբատի միջոցով Գույուկ խանը Կիլիկիան հայոց թագավորութեանը: Նա գրում է. «Նա [Սմբատը] վերադարձավ արժանավայել փառքով և հավաստի հրովարտականքով, նրան [Կիլիկիան թագավորութեանը] տըրվեցին բազմաթիւ դավառներ և շատ բերդեր, որոնք առաջ պատկանում էին Լեոն թագավորին և նրա մահից հետո Ռուսի սուլթան Ալադիբ դրանք խլել էր նրանցից (Հեթումյաններից):

[«Իարձաւ երևելի փառօք, և հաւատարիմ հրավարտակօք տունալ նմա գաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լ'տնի արքայն, և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին Սուլտանն Հոռոմոց»<sup>3</sup>]:

Բացի զանազան արտոնութիւններից, Ակներցու վկայութեամբ, Սմբատ Սպարապետին Գույուկ խանը նվիրում է նաև մի մոնղոլ ազնվականուհի, որին Սմբատը իր հետ հայրենիք է բերում ու նրանից մի արու զավակ է ունենում, որին

<sup>1</sup> Մատենադարանի ձեռագիր № 2075, էջ 561բ, տե՛ս նաև «Հայապատում», էջ 517:

<sup>2</sup> Գրիգոր Ակներցի, էջ 314:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 302:

<sup>1</sup> Կիւսկաւ Գանձակեցի, էջ 301:

<sup>2</sup> Языков, Собрание путешествий к татарам в XIV—XV столетиях, СПб, 1825, гл. 5, стр. 237.

Վասիլ-Քաթար անունն են տվել մոնղոլական զիմագծեր ունե-  
նալու համար: Ահա թե ինչ է գրում այդ մասին Գրիգոր  
Ակնեբցին. «Արարեալ զնա աղամիշ, եւ տուեալ մեծ խառնի  
եւ փայլեղայս ոսկիս եւ Տաթար խաթուն պախտախաւոր. զի  
այն էր նոցա մեծ սէրն, որ զով սիրէին եւ մեծարէին, տային  
կին ի պատուաւոր կանանցն իւրեանց, եւ այսպէս մեծ մե-  
ծարանօք պատուեալ զսպարապետն հայոց, յուղարկեաց  
յաշխարհն իւրեանց առաջի քրիստոսապսակ թագաւորին հա-  
յոց Հեթմոյս<sup>1</sup>»:

Այսպիսով Սմբատ Սպարապետը իր զիվանդիտական  
միսիան հաջողությամբ կատարելուց հետո 1250 թվականին  
վերագառնում է հայրենիք: Նրան հայրենիքում ընդունում  
են ցնծությամբ, որովհետեւ Սմբատի բանակցությունները  
ամրացնում էին հայ-մոնղոլական հարաբերությունները և Կի-  
լիկիայի ապահովութենը: Մոնղոլական արշավանքների  
վտանգը Կիլիկյան թագավորության նկատմամբ վերջնակա-  
նապես կանխված էր: Հանձինս մոնղոլների, Կիլիկյան Հա-  
յաստանը ձեռք բերեց մի նոր հզոր դաշնակից, որը ոչ միայն  
դադարեց վտանգավոր լինելուց, այլև դարձավ Կիլիկյան հա-  
յոց թագավորության դաշնակիցը<sup>2</sup>: Այդ առթիվ Գրիգոր Ակ-

<sup>1</sup> Գրիգոր Ակնեցի, էջ 314: (2. Աճառյան իր «Անձնանունների բա-  
ռարանում» գրում է, որ Սմբատին կին է նվիրել Մանգու խանը (հատ. 4,  
էջ 557), որը, ինչպես տեսանք, ճիշտ չէ):

<sup>2</sup> Տեր-Ղազարյանը Սմբատի վարած զիվանդիտության նշանակության  
մասին գրում է, «Եթաթարներու հետ Կիլիկեան հայ թագավորներու բարե-  
կամական կապերու հաստատութեան մեջ Սմբատ Սպարապետի կատարած  
ղերը մեծ նշան է, այն, որ առաջին անգամ այցելեց թաթար խանին և դաշ-  
նագրով մի ուխտ գրաւ բարեկամական և զինվորական» (2. Տեր Ղազարեան,  
Սմբատ Սպարապետի Տարեգրքը, «Արևիկ», 11 յուլիսի, 1957):

ներցին գրում է. «Եվ այսպես, նա (Գուլուկ խանը) բարձր  
մեծարանքով պատվելուց հետո հայոց սպարապետին հետ  
ուղարկեց իր երկիրը՝ առաջին քրիստոսապսակ հայոց թագա-  
վոր Հեթումի մոտ, հրամայելով, որ վերջինս իրեն ներկայանա  
և տեսակցություն ունենա նրա հետ: Երբ հայոց բարեպաշտ  
թագավոր Հեթումը տեսավ իր եղբորը՝ պարոն Սմբատին այդ-  
պիսի մեծարանքով ընդունված և հարգված (Գուլուկ) խանի  
կողմից, շատ ուրախացավ: Նա առանձնապես ուրախացավ այն  
բանի համար, որ (խանը) ազատություն է շնորհել երկրին,  
վանքերին և բոլոր քրիստոնյաներին»:

[Եւ այսպէս մեծ մեծարանօք պատուեալ զսպարապետն  
հայոց, յուղարկեաց յաշխարհն իւրեանց առաջի քրիստոսա-  
պսակ թագաւորին հայոց Հեթմոյ. հրամայելով նմա զնալ  
առ ինքն եւ տեսանել զնա: Զոր տեսեալ բարեպաշտ թագաւորն  
Հեթում զպարոն եղբայրն իւր զՍմբատ այնպիսի պատուով  
պատուեալ եւ մեծարեալ ի Ղանէն, յոյժ ուրախացաւ յուրա-  
խութիւն մեծ. եւս առաւել ընդ գրեալսն վասն ազատութեան  
երկրիս եւ վանորայցս եւ ամենայն քրիստոնէից»<sup>1</sup>:

Կիլիկյան հայկական թագավորությունը իր դաշնագրու-  
թյունը մոնղոլների հետ ավելի ամրապնդելու համար որոշ  
ժամանակ անց անհրաժեշտ գտավ դեսպանություն ուղարկել  
Մոնղոլիա:

Անհրաժեշտ էր հայ-մոնղոլական հարաբերությունները  
ավելի ամրապնդել: Ահա թե ինչու Սմբատ Սպարապետի վե-  
րագառնալուց հետո Կիլիկյան հայոց թագավորությունը որոշ-  
եց Հեթում Ա թագավորի ղեկավարությամբ երկրորդ պատ-

<sup>1</sup> Գրիգոր Ակնեցի, էջ 314:

վիրակութիւնը Մոնղոլիա ուղարկել, նամանավանդ, որ Գույուզ խանն ինքն շեթումին տեսնելու ցանկութիւն էր հայտնել: Գեսպանութեան մեջ էր մտնում նաև Սմբատը՝ որպէս հմուտ դիվանագետի:

Այդ մասին խոսում է նաև Հեթում Պատմիչը. «Չորս տարուց հետո,— գրում է նա,— վերադարձավ (Սմբատը) Հայաստան և պատմեց այն բոլորի մասին, ինչ նա տեսել ու լսել էր (Մոնղոլիայում): Այն ժամանակ հայոց թագավորը դադտնի՛ կերպով մեկնեց (Մոնղոլիա), որպեսզի շնանալի թուրքերի երկրում, որտեղով նա հարկադրված էր անցնելու»:

[«Յետ շորից ամաց դարձաւ ի Հայս՝ պատմել զոր ետեսն և զոր լուաւ: Յայնժամ թագաւորն Հայոց լուաց ծածկաբար՛ զի մի ծանիցի յերկրին թուրքաց, ընդ որում պարտ էր անցանել» Գ:

<sup>1</sup> Գերբեռտը հիմնվելով արևելյան պատմիչների հաղորդած տեղեկութիւնների վրա, այն կարծիքն է հայտնում, որ Հեթումը երբ անցնում էր Իկոնիայի երկրով, Սուլթանի մարդկանցից մեկը նրան ճանաչում է. այդ պահին նրա զեսպաններից մեկը համարձակվում է ապտակել իր թագավորին. այդ տեսնելով թուրք պաշտոնյան համոզվում է, որ նա թագավոր չէ, այլ հասարակ ճանապարհորդ: (Sb'u Bibliothéque orientale, p. 407. տե՛ս նաև «Сибирский Вестник», 1822, часть 26, стр. 120):

Մեր կարծիքով այդ «զեսպանը» եղել է Սմբատը, քանի որ Հեթում թագավորի մեծ եղբայրն էր: Տեսնելով, որ իր եղբայրը և թե իրենք բոլորը վտանգի են մատնված, համարձակվել է ապտակել իր թագավոր եղբորը, որպեսզի զրանով տպավորութիւն ստեղծի, թե գնացողը ոչ թե թագավոր է, այլ հասարակ ճանապարհորդ, զրանով իսկ փրկել է թագավորին և թե իրենց:

<sup>2</sup> Հեթում պատմիչ Թաթարաց, թարգմ. Ավգերյանի, Վենետիկ, 1842, էջ 42:

Սմբատ Սպարապետը իր «Տարեգրքում» Հեթում Ա-ի մասին գրում է. «1253 թվականին հայոց Հեթում թագավորը ծպտվեց զրաստին ուղեկցող սպասավորի զգեստով և մի քանի մարդկանց ընկերակցութեամբ ճանապարհ ընկավ իր երկրից՝ Կիլիկիայից դեպի Արևելք՝ մոնղոլների մեծ խանի մոտ, որին Մանգու էթն անվանում: Նա (Հեթումը) մեծ սարսափով անցավ մոտուլմանական ցեղերի միջով, որոնք բնակվում էին Գամրաց երկրում: Նրան առաջնորդում էր Բարսեղ անունով մի արեղա, որը բազմաթիվ անգամ ճանապարհորդել էր այդ նույն ուղղութեամբ: Նրանք հասան Թեոդոսոպոլիս (Էրզրում)... թագավորը վերցրեց բոլոր ակնահաճո նվերները և գնաց Մանգու խանի մոտ և մատուցեց նրան: Խանը ուրախութեամբ ընդունեց հայոց թագավորին և ինչ որ նա խնդրեց իրենից, շնորհեց նրան: Խանը իր սպասավորներից մեկին նշանակեց թագավորին ուղեկից, մինչև իր երկիրը՝ Կիլիկիա հասնելը»:

«Ի թուին ՉԲ (702—1253) Հեթում արքայն Հայոց փոխեաց զինքն ի կերպս սպասաւորի զրաստու, և ել յերկրէ իւրմէ Կիլիկիոյ սակաւ արամբք և ղէմ եղեալ գնայր յարեւելս առ ազգն նետողաց, առ խանն որ կոչէր Մանգոյ, և բազում ահիւ անցեալ գնայր ընդ մէջ Իսմայիլացոց ցեղիցն, որ բնակեալ էին յերկիրն Գամրաց, և առաջնորդէր նմա արեղայ մի Բարսեղ անուն, որ և բազում անգամ ճանապարհ արարեալ էր ընդ նոյն պողոտայ: Եւ հասին մինչ ի սահմանս թեոդուպոլեաց... թագաւորն առեալ զամենայն ցանկալի տեսողաց ընծայսն, գնաց առ խանն Մանգոյ և մատուց նմա, և խանն ուրախութեամբ ընկալաւ զթագաւորն Հեթում, և զինչ և խընդ-

րեաց ի նմանէ՝ շնորհեաց նմա, և եղ ի սպասատեցաց իւրոց ընդ թագավորին գալ յաշխարհ իւր Կիլիկիա»<sup>1</sup> ):

Կիլիկիայի թագավորութեան զեպի Մոնղոլիա ուղևորվող պատվիրակութիւնը, ինչպես ասացինք, գլխավորում էր հայոց Հեթում Ա. թագավորը: Այդ պատճառով էլ հայ պատմագիրները խոսում են միայն Հեթում Ա. թագավորի դիվանագիտական գործունեութեան մասին, իսկ պատվիրակութիւնը Սմբատ Սպարապետի մասնակցութեան մասին հայ մատենագիրներից միայն Մխիթար Այրիվանեցին է հիշատակում: Նա գրում է. «Հայոց թագավոր Հեթումը իր եղբայր Սմբատ Գունդըստարլի հետ միասին գնաց աշխարհակալ Մանգու խանի մոտ և նրա կողմից պատվի արժանացավ»: [«Մանգու խանն տիեզերակալեաց գնաց առ նա Հեթում արքայն Հայոց և Գունդստարլ Սմբատ, եղբայր իւր և պատուեցաւ ի նմանէ»<sup>2</sup> ]:

Հեթում Ա. թագավորը Սմբատի ուղեկցութեամբ դուրս է գալիս Սիս քաղաքից և Գերբենդի վրայով գնում է Բաթու խանի թագավորանիստը, որը գտնվում էր Վուլգա գետի ափին: Այնուհետև շորս ամիս ճանապարհորդելով, 1254 թվականի աշնանը հասնում է Ղարաղորում և ներկայանում ոչ թե Գույուկ խանին, այլ Մանգու խանին, որովհետև Գույուկ խանը 1248 թվականին արդեն մեռել էր, և մեծ խան էր ընտրվել Չինգիզ խանի թոռ Մանգու խանը (1251—1259), որը պատվով ընդունեց Կիլիկիայի հայոց թագավորութեան այս երկրորդ ղեկավարութիւնը ևս Հեթում Ա.-ի գլխավորութեամբ: Սմբատ Սպարապետի անունը պատմիչներից շատերը չեն հիշատա-

կում, որովհետև պատվիրակութիւնը գլխավորում էր թագավորը:

Ժամանակակից համարյա բոլոր աղբյուրները վկայում են հայոց թագավորութեան երկրորդ պատվիրակութեան հաջողութիւնների մասին: Ակներցոյն պատմում է, որ երբ Հեթումը ներկայացավ Մանգու խանին, «Աստու կամբովը նա մեծարվեց խանի կողմից: Խանը մեծարեց և հարգեց հայոց թագավորին և նրա ցանկութեան համապատասխան նրա բոլոր կարիքները բավարարեց, այնուհետև մեծ ուրախութեամբ վերադարձրեց իր երկիրը»:

[«Կամօքն Աստուծոյ մեծարեցաւ ի Ղանէն: Եւ արարեալ Ղանն մեծ պատիւ և հարկիս թագաւորին Հայոց, և զամենայն բանն նորա հոգաց ըստ կամաց նորա, և զարձոյց մեծ ուրախութեամբ յաշխարհն իւր»<sup>3</sup> ]:

14-րդ դարի ֆրանսիացի, Լեոն Զ թագավորի հոգևոր հայրը, Հովհան Գարգելը հաստատելով Ակներցու վկայութիւնը, գրում է, որ Մանգու խանը Հեթում Ա.-ն ընդունեց և կատարեց «զամենայն հայցուածս և զաղաչանս զոր առաջի արար նմա արքայն Հեթում»<sup>4</sup>: Հեթում Ա.-ի ժամանակակից արար նմա արքայն Հեթում»<sup>5</sup>: Հեթում Ա.-ի ժամանակակից մի ուրիշ հայ պատմիչի՝ Սեբաստացու վկայութեամբ, Հեթումը «Մեծապատիւ փառաւր լիտ տարու մի դարձաւ ի տուն իւր»<sup>6</sup>:

Այդ պատվիրակութեան հաջողութիւնների մասին խոսում են նաև ուրիշ հայ մատենագիրներ<sup>7</sup>: Համաձայն հայ մատեն-

<sup>1</sup> Գրիգոր Ականեցի, էջ 324—326:

<sup>2</sup> Յովհաննէս Գարգել, Ժամանակագրութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 17:

<sup>3</sup> «Մանր ժամանակագրութիւններ», հատոր Բ, էջ 142:

<sup>4</sup> Մատենադարանի Զեռագիր № 2174, էջ 47բ: «Մանր ժամանակագրութիւններ», հատոր Ա, էջ 69:

<sup>1</sup> Սմբատ, Վենետիկ, էջ 229—230:

<sup>2</sup> Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1882, էջ 17:

նագիրները հաղորդած տեղեկությունների, այդ բանակցություններն ավարտվեցին մոնղոլ մեծ խանի և Կիլիկիայի հայոց թագավորի միջև հատուկ պայմանագրի կնքմամբ: Նախ երկու կողմերը համաձայնեցին ստեղծել հայ-մոնղոլական հատուկ բանակ Միջագետքի, Ասորիքի և Պաղեստինի նվաճման համար: Երկրորդ, մոնղոլները պարտավորվեցին պաշտպանել Կիլիկյան թագավորությունը այն դեպքում, եթե նրա վրա հարձակվեն Իկոնիայի, Եգիպտոսի և այլ պետությունները: Բացի այդ, Մանգու խանը Հեթում Ա-ին տալիս է հատուկ հրովարտակ, որ մոնղոլ իշխանությունը չնեղի նրա երկիրը: Երրորդ, մոնղոլները խոստացան՝ այն հողերը, որոնք առաջ պատկանում էին հայոց Առն Թ թագավորին, բայց վերջինիս մահից հետո գրավել էր Իկոնիայի սուլթանը և որը ընկել էր մոնղոլների տիրապետության տակ, վերադարձնել հայերին: Զորորդ, Մանգու խանը խոստացավ հարկերից ազատել հոգևորականությունը: Հինգերորդ, մոնղոլները պետք է Կիլիկյան հայոց թագավորությունը դիտեին որպես դաշնակից պետություն, նրա քաղաքներում չպահելով ոչ զորք, ոչ էլ պաշտոնյաներ: Հեթում Պատմիչի «Պատմություն թաթարաց» գրքում բերված է այդ պայմանագիրը, որտեղ ասված է հետևյալը.

«Առաջին. — Նա (հայոց թագավորը) խնդրեց ինքնակալին իր ժողովրդի հետ միասին ընդունել քրիստոնեությունը, թողնել մյուս բոլոր պաշտամունքները և մկրտվել: Երկրորդ, որպեսզի մշտական խաղաղություն և բարեկամություն լինի քրիստոնյաների և մոնղոլների միջև: Երրորդ, որպեսզի մոնղոլների կողմից նվաճված կամ հետագայում նվաճելիք բոլոր երկրներում քրիստոնեական եկեղեցին և հոգևորականու-

թյունը, ինչպես եկեղեցական, այնպես էլ վանական, ազատ լինեն ամեն տեսակի ստրկությունից և անգամ հարկերից: Զորորդ, որպեսզի նա (ինքնակալը) սարակինոսների ձեռքից հեռ վերցնի մեր տիրոջ գերեզմանի հետ միասին Սուրբ Երկիրը և այն վերադարձնի քրիստոնյաներին: Հինգերորդ, որպեսզի նա կռիվ հայտարարի Մահմեդի պիղծ կրոնի և նրա զլխավորի՝ Բաղդադի խալիֆի դեմ: Վեցերորդ, որպեսզի նա (ինքնակալը) նրան (Հեթումին) որպես առանձին արտոնություն՝ իրավունք վերապահի հարկ եղած դեպքում օգնության դիմելու բոլոր մոնղոլներին և հատկապես նրանց, որոնք սահմանակից են հայոց թագավորությանը, և որ այդ օգնությունը կատարվի անմիջապես: Եվ վերջապես յոթերորդ, նա (Հեթումը) խնդրեց, որ բոլոր այն երկրները, որոնք պատկանելիս են եղել հայոց թագավորությանը և որոնք խլված են սարակինոսների կողմից և ներկայումս գտնվում են մոնղոլների տիրապետության ներքո, վերադարձվեն իրեն, որպեսզի նա (Հեթումը) կարողանա հնարավորություն ունենալ խաղաղությամբ կառավարելու այն երկրները, որոնք կվերցվեն վերհիշված սարակինոսներից և կտրվեն իրեն:

Մանգու խանը, լսելով հայոց թագավորի խնդիրը, հավաքեց իր խորհրդականներին և նրանց ներկայությամբ պատասխանեց հետևյալ կերպ. նկատի ունենալով, որ հայոց թագավորը մեր երկիրն է եկել շատ հեռվից, առանց որևէ հարկադրանքի, այլ իր սեփական կամքով, հետևապես անհրաժեշտ է բավարարել նրա խնդիրը, հատկապես այն բանի համար, որ այդ պահանջները արդարացի են և խորիմաստ:

Ո՛վ հայոց թագավոր, մենք ձեզ հայտարարում ենք, որ



ձեր խնդիրները մեր կողմից ընդունելի են և մենք ասածու  
օգնութեամբ կկատարենք:

Նախ, ես մոնղոլների ինքնակալ և տիեզերակալ կմը-  
կըրտվեմ, կընդունեմ քրիստոնեական կրոնը և այնպես կա-  
նեմ, որ իմ հպատակ ժողովուրդը նույնը անեն, շնայած ես  
մտադիր չեմ որևէ մեկին հարկադրելու այդ գործում:

Ինչ վերաբերում է ձեր երկրորդ խնդրին, մենք պատաս-  
խանում ենք, որ մեր նպատակն է մշտական խաղաղութեան և  
բարեկամութեան հիմք դնել մոնղոլների և քրիստոնյաների  
միջև:

Այնուամենայնիվ, դուք ձեր կողմից պարտավոր եք այն-  
պես անել, որ քրիստոնյաները իրենց հերթին գործ դնեն  
բոլոր հնարավոր միջոցները այդ համաձայնագիրը պաշտ-  
պանելու համար:

Մենք նույնպես ցանկանում ենք, որ քրիստոնեական եկե-  
ղեցին և բոլոր հոգևորականությունը, ինչպես եկեղեցական,  
այնպես էլ վանական, մեր տիրապետության տակ գտնվող  
բոլոր երկրներում ազատ օգտվեն արտոնություններից և որ-  
պեսզի նրանք ոչ մի առիթով չճնշվեն և շանհանգստացվեն:  
Իսկ սուրբ երկրի վերաբերյալ մենք ասում ենք, եթե խանգա-  
րիչ հանգամանքներ չլինեն այն հարգանքի համար, որ մենք  
տածում ենք դեպի Հիսուս-Քրիստոսը, անձամբ ինքներս  
կգնայինք: Բայց որովհետև մենք այս տեղերում շատ զբաղ-  
ված ենք, ուստի այդ գործը կհանձնարարենք մեր եղբայր  
Հաուրնին (Հուլավուին), որպեսզի նա, ինչպես հարկն է, կա-  
տարի: Նա կըրջապատի Երուսաղեմ քաղաքը և կվերցնի այն,  
նրա հետ նաև ամբողջ Սուրբ Երկիրը և այնտեղից դուրս  
կվեճի բոլոր հեթանոսներին, վերադարձնելով այն (երկիրը):

քրիստոնյաներին: Իսկ ինչ վերաբերում է Բաղդատի խալի-  
ֆին, մենք կհրամայենք մոնղոլների հրամանատար Բայդո-  
լին, որը գտնվում է թուրքերի երկրում, և նրանց, որոնք գոր-  
ծում են հարևան երկրներում, որպեսզի նրանք պատրաստ լի-  
նեն կատարելու մեր եղբոր հրամանը, իսկ մենք ցանկանում  
ենք, որ նա ոչնչացնի խալիֆին, որպես մեր ամենաոխերիմ  
թշնամու:

Ինչ վերաբերում է հայոց թագավորի արտոնություններ  
խնդրելուն, որ նրանք (այսինքն՝ քրիստոնյաները) իրա-  
վունք ձեռք բերեն՝ հարկ եղած դեպքում դիմելու մոնղոլնե-  
րի օգնությանը, մենք ցանկանում ենք, որ հայոց թագավորն  
այդ մասին արտահայտեր իր բոլոր ցանկությունները և մենք  
հաճույքով այն կկատարենք: Վերջապես հայոց թագավորի  
այն խնդիրների մասին, որ նրան վերադարձնենք (այն եր-  
կրները), որոնք առաջ պատկանում էին հայոց թագավորու-  
թյանը, բայց խլված են եղել սարակինոսների կողմից և ներ-  
կայումս գտնվում են մեր իշխանության ներքո, այդ նրա  
խնդիրը նույնպես մենք հաճույքով կկատարենք և կհրամա-  
յենք մեր եղբայր Հաուրնին՝ առանց ուշացնելու այդ երկրնե-  
րը վերադարձնել նրան (հայոց թագավորին): Բացի այդ, մենք  
ցանկանում ենք և կհրամայենք՝ մեր կողմից (հայոց) թագա-  
վորին որպես պարգև տալ լրացուցիչ հողեր և ամրոցներ իշ-  
խանության ապահովման համար<sup>1</sup>:

Էթիոպիացի բերած այս պայմանագիրը արդյոք հա-  
մապատասխանում է մոնղոլական շրջանի գիվանագիտու-

<sup>1</sup> Haiton, Histoire des pais orientaux, (v. Pierre Bergeron, Vo-  
yages en Asie, tome second, à le Haye, MDCCXXXV, Chap XXIII,  
p. 36—39.

թյան ոգուն, արդյոք այստեղ շափազանցություններ չկա՞ն։ Պայմանագրի տեքստի մանրագնին ուսումնասիրությունից պարզվում է, որ իրոք, այստեղ որոշ շափազանցություններ նկատվում են։ Պայմանագրի հեղինակը Հեթում Ա թագավորին գուրս է բերել որպես իրավահավասար կողմ մոնղոլական կայսեր Մանգու մեծ խանի նկատմամբ, որը, իհարկե, շափազանցություն է։ Բայց որ հայոց Հեթում Ա թագավորը զնացել է Մոնղոլիա և Սմբատ Սպարապետի հետ այնտեղ հաջող բանակցություններ է վարել և որոշ արտոնություններ ձեռք բերել, դա արդեն պատմական իրողություն է և կասկածանքի ենթակա չէ։

Հայ-մոնղոլական հարաբերությունների բարելավումը բխում էր ոչ միայն Կիլիկյան հայոց պետականությունը շահերից, այլ հենց մոնղոլների քաղաքականությունից։ Աշխարհակալ մոնղոլական կայսրությունը, տարածվելով մինչև Իկոնիայի թագավորությունը, անշուշտ, դեմ չէր լինի, որ իրենց կայսրության սահմանագլխին ունենար մի վստահելի դաշնակից պետություն, որը կնպաստեր նրանց սահմանների ապահովման գործին։ Դա կարևոր էր հատկապես այն տեսակետից, որ Չմանկատուկի 1243 թվականի ճակատամարտը ակնբախ կերպով ցույց տվեց, որ մոնղոլների համար այնքան էլ հեշտ չէր Իկոնիայի սուլթանության հետ հաշվհարդար տեսնել, քանի որ մոնղոլները այդ ճակատամարտում չկարողացան վճռական հաղթանակ տանել և Իկոնիայի սուլթան Ղիթ-եղ-դին Քեյ խոսքով իր զորքերի մի զգալի մասը ետ քաշեց կովից և նահանջեց երկրի խորքը, թույլ տալով մոնղոլներին զրավելու նրա մի քանի քաղաքներ։ Մոնղոլները այդ լավ գիտեին և Չմանկատուկի ճակատամարտում զգա-

ցին իրենց թուլությունը։ Հետևապես նրանք դաշնակցի կաթիք էին զգում։

Իսկ ինչ վերաբերում է Կիլիկյան հայոց թագավորությանը, ապա նրան հարկավոր էր օգտագործել մոնղոլներին՝ իր երկիրը ինքնուրույն ու անկախ պահելու համար։ Այս տեսակետից հայ-մոնղոլական այդ դաշինքը բխում էր երկու պետությունների փոխադարձ շահերից։ Այլապես մոնղոլները ոչ մի պայմանագիր չէին կնքի որևէ պետության հետ։

«Պետք է իմանալ, — գրում է Սմբատի ժամանակակից Պլանո Կարպինին, — որ նրանք (մոնղոլները) ոչ մի մարդու հետ պայմանագիր չեն կնքում, եթե նրանք չեն ենթարկվում նրանց, որովհետև ինչպես վերը հիշեցինք, նրանք ունեն Չինգիզ խանի հրամանը՝ հնարավորության դեպքում ամբողջ աշխարհը իրենց ենթարկել։ Ահա թե ինչու մոնղոլները պահանջում են նրանցից, որպեսզի նրանք գնան մոնղոլների զորքերի հետ կովելու բոլոր նրանց դեմ, ում դեմ նրանք կցանկանան»<sup>1</sup>։

Հեթում Ա թագավորի պայմանագիրը, անշուշտ, ունեցել է գործնական նշանակություն։ Երբ նա վերադառնում է Մոնղոլիայից, անձամբ մասնակցում է այն ռազմական գործողություններին, որոնք ձեռնարկել էին մոնղոլները Ասորիքի ու Միջագետքի ուղղությամբ։ Այդ մասին վկայում է 13-րդ դարի հայ պատմիչ Վարդան Արևելցին, որը խոսելով Հուլավու խանի 1259 թ. արշավանքի մասին՝ գրում է. «Շամի երկիրը զրավելու ժամանակ նրա (Հուլավու խանի) արշավանք-

<sup>1</sup> Плано Карпини, История монголов, перевод А. Маленина, СПб, 1911, стр. 33.

- ներին մասնակցում էր նաև մեր օծյալը (Հեթում Ա-ինը), որը ամեն տեղ հասնելով ազատում էր մահից քրիստոնյաներին, եկեղեցականներին և աշխարհականներին»։ (Վճնդ նմա էր ի յառնույն դամենայն աշխարհն Շամայ՝ և մեր պսակաւորն Հեթում, ազատելով ի մահուանէ զքրիստոնեայսն, զեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով)¹:

Հայ-մոնղոլական դաշինքը բավականին ամուր էր և ստեղծված էր փոխադարձ շահավետութեան վրա: Պատմիչներին վկայութեամբ, Հուլավու խանը շատ հաճախ ինքն էր «ունկնդրում Հեթումի խորհուրդներին»²: Իվ վերջապես Կիլիկյան Հայաստանը Մերձավոր արևելյան այն արտոնյալ երկրների թվին էր պատկանում, որոնք մոնղոլներին համարյա թե հարկ չէին վճարում³:

Ոչ միայն Կիլիկյան Հայաստանում, այլև Մեծ Հայաստանում Հայոց կղերականությունը իրեն տրված արտոնությունները նկատի ունենալով՝ ձգտում էր հնազանդ պահել ժողովրդին: Այսպես, օրինակ, հայոց կաթողիկոս Կոստանդինը Կիլիկիայից հատուկ գրությամբ դիմում էր Մեծ Հայաստանի բնակչությանը, համոզելով, որ նրանք հնազանդ լինեն մոնղոլներին, խոստանալով, որ «խանը կթեթևացնի ձեզանից զանձվող մալը, քանի որ,— շարունակում է կաթողիկոսը, թագավորների սիրտը գտնվում է աստծու ձեռքում. այս ամ-

բողջ աշխարհը նա է պարգևել խանին»: [Վանին կամքն արձականայ և թեթևացուցանէ զմալն, զի սիրտ թագաւորաց ի ձեռին աստուծոյ են և նա է տուեալ զամենայն աշխարհս զանին»¹]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Կիլիկիայի թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնավոր իշխանությունները շահագրգռված էին հայ-մոնղոլական նման հարաբերությունների պահպանմամբ և ձգտում էին ավելի ուժեղացնել այդ համագործակցությունը:

Ոմանք Հեթում Պատմիչի բերած վերոհիշյալ պայմանագիրը հավաստի չեն համարում, հեղինակին անվանելով պալատական կեղծ պատմագիր²: Ինչպես վերևում նկատեցինք, դա չափազանցություն է:

Իրականությունը չի համապատասխանում նաև այն, թե Մանգու խանի և Հեթում թագավորի միջև կնքված պայմանագիրը «անպետք որպես պատմություն, պիտանի է որպես լեգենդ»³ կարծիքը:

«Պատմութիւն թաթարաց» գիրքը, ինչպես նաև նրա մեջ բերված պայմանագիրը, պատմական մեծարժեք տվյալներ են, որի հեղինակությունը ընդունում է ոչ միայն ողջ հայագիտությունը, այլ նաև արևելագիտությունը:

Մոնղոլական արքունիքում գործում էին մի շարք հայ գործիչներ, որոնք եվրոպական պատմիչների վկայությամբ,

¹ Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 151:

² Têurnebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1900, p. 211:

³ Микаелян Г. Г., История Киликийского Армянского государства, Ереван, 1952, стр. 316.

¹ Խաչիկյան, Եկոստանդին Բարձրերդցու խորտական թուղթը, (Վան-րի մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 280):

² Գ. Ալրունյան, Մոնղոլական արշավանքները, Վաղարշապատ, 1913, էջ 40:

³ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1957, էջ 175:

զբաղվում էին դիվանագիտությամբ, թարգմանությամբ և գորավարներ էին: Մոնղոլների կայսրության մեջ հայերը, ինչպես նաև այլ քրիստոնյաներ, բավականին մեծ ազդեցություն ունեին: Ռաշիդ-էդ-դինը բողոքում է, որ Գուլուկ խանի արքունիքում քրիստոնյաները այնքան էին ուժեղացել, որ «մահ-մեղականները չէին համարձակվում նրանց մոտ բարձր խոսել»<sup>1</sup>: Դեռ ավելի՛ն. մեզ հասել են նյութական կուլտուրայի բազմաթիվ հուշարձաններ, որոնք ցույց են տալիս, որ մոնղոլական կայսրության մեջ այդ շրջանում կառուցվում են եկեղեցիներ, վանքեր,<sup>2</sup> բազմաթիվ դամբարաններ, որոնց վրա կան հայերեն հետաքրքիր արձանագրություններ<sup>3</sup>: Հայտնի է, որ 1247 թվականին, Գուլուկ խանի և Հոտմի Ինոկենտիոս Գ պապի միջև բանակցությունները վարում էր հայ դիվանագետ Սարգիսը<sup>4</sup>, իսկ 1258 թվականին մոնղոլական դեսպանության գլուխ անցած հայ զորավար Պոռո<sup>5</sup> իշխանը մտալ Բաղդատ և առաջարկեց արաբական վերջին խալիֆին հանձնվել մոնղոլներին: Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, որ հայ-մոնղոլական հարաբերությունները հետագայում ավելի զարգանալու համար ունեին բոլոր նախադրյալները:

<sup>1</sup> Ա. Գալստյան, «Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից», էջ 21:

<sup>2</sup> Н. Я. Марр, Аркауи, Монгольское название христиан, в связи с вопросом об армяно-халкедонитах, («Византийский временник», т. XII, вып. 1—4, стр. 46).

<sup>3</sup> В. Бартольд, «История изучения Востока в Европе и России» (издание второе), Ленинград, 1925, стр. 78.

<sup>4</sup> Pelle Poliotte, Les Mongols et la papauté, extrait de la revue de l'orient chrétien, 3-e série, t. III, Paris, 1929. p. 11—12.

<sup>5</sup> Կիբակու Գանձակեցի, էջ 365:

Բաշու Նոյոնին մեծ զորքով ուղարկելով Փոքր Ասիա, Հուլավուն Հեթում Ա-ի զորքերի օժանդակությամբ նվաճեց Փոքր Ասիայի գավառներն ու քաղաքները մինչև Միջերկրական ծովը: Բաշու Նոյոնը իր գոհունակությունը հայտնելով Հեթում Ա-ի զորքերի մարտական գործունեությունների նկատմամբ, հատուկ գրություն է ուղարկում իր հրամանատարին. «Թուղթ գոհութեան զբնաց առ Հուլավուն»<sup>1</sup>: Հենց այս ժամանակն էր՝ 1257 թվականին, երբ Հեթում Ա-ն կարողացավ իր թագավորությանը միացնել ռազմա-ստրատեգիական խոշոր նշանակություն ունեցող Իսալրա քաղաքը իր շրջակա մի քանի բնակավայրերով, որոնք առաջ պատկանում էին հայոց թագավորությանը:

Ըստ պատմիչների վկայության, Հեթում Ա թագավորը Բաշու Նոյոնին օժանդակելու համար պատերազմ է դուրս բերել «12 հազար հեծեալ և 40 հազար հետևակ»<sup>1</sup>:

Կարելի է բերել նման բազմաթիվ վկայություններ ու փաստեր, որոնք հաստատում են ինչպես Սմբատ Սպարապետի, այնպես էլ Հեթում Ա-ի վարած բանակցությունների իրական նշանակությունը Կիլիկյան հայոց թագավորության համար:

Հայ-մոնղոլական դաշինքը ոչ միայն փրկեց երկիրը սպառնացող վտանգից, այլև Կիլիկյան Հայաստանը մոնղոլների օգնությամբ ետ ստացավ իր մի շարք գավառները, որոնք նրանից նվաճել էին իր հարևան մահմեդական պետությունները, և ամրացրեց իր թագավորությունը:

Այսպիսով, Սմբատ Սպարապետը մոնղոլ զորավարների ու խաների հետ մի շարք հաջող բանակցություններ վարեց,

<sup>1</sup> Հեթում Պատմիչ, էջ 47:

որոնք կարևոր նշանակություն ունեցան իր երկրի ու ժողովրդի բախտի համար:

Քն ուրիշ էլ ի՞նչ բանակցություն է վարել Սմբատը, այդ մասին մեր ձեռքի տակ նյութեր չունենք: Առաջին բանակցություններինց քսան տարուց հետո միայն հիշատակվում է, որ Սմբատը դարձյալ գնացել է մոնղոլների մոտ: Հեթում Բ-ի տարեգրությունում այդ մասին ասված է «ԶԻԱ(721 = 1272)... գնաց պարոն Սմբատ Գունդուտապլն ի թաթարն յԱրղուն(ն), վերայ Լեոն թագաւորին»<sup>1</sup>: Այդ մասին հիշատակում է նաև Ալիշանը<sup>2</sup>: Բայց ի՞նչ նպատակով է գնացել և ի՞նչ նշանակություն է ունեցել Կիլիկյան հայոց թագավորության համար այդ, ոչինչ ասել չենք կարող նյութերի բացակայության պատճառով:

Մեզ հասել է նաև մի փաստաթուղթ, որը վկայում է այն մասին, որ Սմբատ Սպարապետը բանակցություններ է վարել նաև գերմանական ասպետական օրդենի հետ: Այդ մասին Սմբատի ստորագրությամբ մեզ հասել է մի պայմանագրի ոչ լրիվ տեքստը, որից եզրակացնում ենք, որ իրոք Սմբատը գերմանացիների հետ «Փոխադարձ օգնության» դաշինք է կնքել ընդդեմ թուրքերի:

Այսպիսով, Սմբատ Սպարապետը կարողացել է երկրի փրկության համար հաջող դիվանագիտություն վարել ինչպես մոնղոլների, այնպես էլ ուրիշ պետությունների հետ, ավերածություններից իր երկրի ու ժողովրդի ապահովության համար:

Նախքան Սմբատ Սպարապետի թողած գրական ժառանգության վերլուծությանը անդրադառնալը, մի քանի խոսք ասենք նրա լեզվի մասին: Սմբատ Սպարապետը ինչպես իր սեփական ստեղծագործությունները, այնպես էլ թարգմանությունները գրել է պարզ, ժողովրդին հասկանալի լեզվով: Ինչպես իրավացիորեն նկատում է մեծանուն գիտնական Մանուկ Աբեղյանը, նա «իր աշխատությունները հորինել է այն լեզվով, որով խոսում էր ինքն ուրիշների հետ»:

Սմբատ Սպարապետը կիլիկյան հայ բարբառի գրավոր օգտագործման հիմքը դրեց: «Մենք, — գրում է Ալիշանը, — կարող ենք շնորհավորել այդ թանկարժեք երևույթը, որը իր արտահայտությունն է գտել մեր ազգային գրականության մեջ»:

Իրոք, Սմբատ Սպարապետը բացառիկ այն հայ մատենագիրներից է, որ դեռ XIII դարում իր բոլոր գործերը, ինչպես նաև կատարած թարգմանությունները գրել է ժողովրդին հասկանալի լեզվով: Բանասեր Հովհ. Մկրյանի խոսքերով ասած, «Ամենուն դյուրիմաց ընելու համար»<sup>3</sup>:

Նույն կարծիքին են շատերը<sup>4</sup>: Սմբատ Սպարապետը ինքը ևս նշում է, որ իր գործերը շարագրել է «Մեր հեշտալուր և ի

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Բ, Երևան, 1946, էջ 209:

<sup>2</sup> Assises d' Antioche, p. XVI.

<sup>3</sup> «Յոյս», 1870, ապր. թիւ 43, էջ 68:

<sup>4</sup> Սմբատ, Վեներտիկ (առաջարան 2. Սերոբե Աբրլյանի, էջ ԺԲ, ծան. 6):

<sup>1</sup> «Մանր ժամանակագրություններ», հատ. Ա, էջ 84:

<sup>2</sup> Ալիշան, Սիսուան, էջ 210:

սովորական բառ»<sup>1</sup>։ Այս տեսակետից Սմբատը XIII դարի առաջադեմ մատենագիր է եղել և գրելով իր ժամանակի խոսակցական լեզվով, ցանկացել է ժողովրդին մատչելի դարձնել իր գրվածքները։

Սմբատի գործերը գնահատվեցին ոչ միայն իր ժամանակին, այլ նաև նրանից հետո։ Այսպես, օրինակ, Սմբատ Սպարապետի գրական լեզվի ուսումնասիրության հիման վրա Ղևոնդ Հովնանյանը 1897 թվականին գրեց իր «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրա»<sup>2</sup> հայտնի ուսումնասիրությունը, իսկ գերմանական ականավոր գիտնական հայագետ Կարստը կազմեց իր «Historische Grammatik des Kilikisch-armenischen» նշանավոր աշխատությունը, որը իրավամբ համարվում է միջին հայերենի համար եզակի գործ հայ լեզվաբանության պատմության մեջ<sup>3</sup>։ Եվ վերջապես. Սովետական շրջանի բարբառագիտության ուսումնասիրության համար Սմբատի թողած գրական ժառանգությունը կարևորագույն աղբյուրներից մեկն է հանդիսանում։ Սմբատ Սպարապետի գործերի ավելի խորը ուսումնասիրությանը զբաղվեց գերմանացի գիտնական Կարստը, որը 1905 թ. Սմբատի Գատաստանագիրքը թարգմանեց գերմաներենի։ Կարստը իր թարգմանություններին կցել է օգտակար ծանոթագրություններ, ինչպես նաև բնդարձակ առաջաբաններ։ Այնուհետև Սրմբատի գործերից բաղվածաբար օգտվել են Չամչյանը, Ալի-

շանը, Բաստամյանը, Օրմանյանը, Սամուելյանը, Ղլըճյանը, Մանանդյանը, Արեղյանը, Ա. Ալպոյաճյանը և ուրիշներ։ Սրմբատի գրական ժառանգությանը զբաղվել են մի շարք հայագետներ։ 1918 թ. Ղլըճյանը հրատարակեց Սմբատի «Գատաստանագիրքը»։ Նա գրքի ներածականում կանգ է առնում Սմբատի կենսագրության մի քանի հարցերի լուսարանման վրա<sup>1</sup>։ Նրանից հետո պրոֆ. Գ. Միքայելյանը իր գրքում հանգամանորեն քննարկում է Սմբատի «Գատաստանագիրքի» սոցիալ-տնտեսական նշանակությունը<sup>2</sup>։ «Բազմավեպում» ուսումնասիրություններ են հրատարակել նաև Հ. Սերոբե Ազըլյանը<sup>3</sup> և Հ. Քյուրտյանը<sup>4</sup>։ Գարեգին Հովսեփյանը իր «Ցիշատակարանք»-ում հրատարակել է Սմբատի մի շարք ոտանավորները, բարեխղճությամբ ցույց տալով ավելի վաղ հրատարակությունների վրիպումներն ու թերությունները<sup>5</sup>։ Տողերիս հեղինակը ևս մի քանի հոդվածներ է հրատարակել նվիրված Սմբատ Սպարապետի գրական ժառանգության հարցերին։ Այդ հոդվածները վերաբերում են հատկապես Սմբատի «Գատաստանագիրքի» ուսումնասիրության հարցերին։ 1956 թվականին ռուսերեն լեզվով մի այլ հոդված հրատարակեցինք՝

<sup>1</sup> Գատաստանագիրք Սմբատայ իշխանի, լրջա ընծայեց Ա. Ղլըճյան, ս. էջմիածին, 1918։

<sup>2</sup> Микаелян Г., укр. соч., стр. 262—276.

<sup>3</sup> Հ. Սերոբե վ. Ազըլյան, Առաջին խաչակրությունը և Երուսաղեմի ազատումը (համառոտ. Կիլիկյան տարիգրքին, «Բազմավեպ», 1949, № 1—2, էջ 15—19)։

<sup>4</sup> Քյուրտյան Հարություն, Նորագիտ օրինակ մը «Անսիզք Անտիոքայ» օրինաբրին (տե՛ս «Բազմավեպ» 1956, № 1—12, էջ 15)։

<sup>5</sup> Յովսեփյան Գ. Ցիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա (Ե գարից մինչև 1250 թ.) Անթիլիաս, 1951։

<sup>1</sup> Սմբատ, Գատաստանագիրք, Երևան, 1958, էջ 5։

<sup>2</sup> Ղ. Հովնանյան, Հետազոտությունք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննա, 1897։

<sup>3</sup> S. u. Historische Grammatik des Kilikisch—Armenischen, Von Dr. Josef Karst, Strassburg, 1901.

նվիրված Սմբատի թողած ընդհանուր կուլտուրական ժառանգությունը<sup>1</sup>։ Եվ վերջապես երկար պրպտումներից հետո մեզ հաջողվեց կազմել Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» գիտա-համեմատական լրիվ տեքստը, որը ուսաներեն թարգմանություն հետ միասին հրատարակվեց 1958 թվականին<sup>2</sup>։

### III. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՔԸ»

Սմբատ Սպարապետի գործերից առանձնապես ուշագրավ է նրա «Տարեգրքը», որը երկար ժամանակ մնում էր անհայտ։ Առաջին անգամ այդ գործին ուշադրություն դարձրեց պատմաբան Մ. Չամչյանը։ Վերջինս, օգտվելով դրանից, այդ աշխատությունը համարում էր անհայտ հեղինակի գործ։ Բայց 3-րդ հատորում արդեն որոշակի կերպով նա ընդունում է, որ գրքի հեղինակը Սմբատ Սպարապետը պետք է լինի. «Բայց որոշակի ևս եղև ականատես պատմիչն Կիլիկիեցուց որ թուի լինել Սմբատ Կիլիկիցի»<sup>3</sup>։

Դրանից հետո Սմբատի աշխատությունը զարձյալ շարունակվեց մնալ արխիվներում, այնքան ժամանակ, մինչև որ այն առաջին անգամ Մոսկվայում հրատարակեց Ոսկան

<sup>1</sup> Галстян А., Интересные сведения о деятельности Смбага Гундстабля в области культуры, (Տե՛ս ՀՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր», հասար. գիտ., № 7, Երևան, 1956, էջ 101, 108)։

<sup>2</sup> Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք (հավաքական տեքստը, ուսաներեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի), Երևան, Հայպետհրատ, 1958։

<sup>3</sup> Չամչյան, Պատմութիւն հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1784, էջ 335։

Հովհաննեսյանը<sup>1</sup>, իսկ երկրորդ անգամ Փարիզում՝ Կարապետ Ծահնազարյանը<sup>2</sup> և, վերջապես, լրիվ տեքստը հրատարակվեց 1956 թվականին Վենետիկում<sup>3</sup>։ Ըստ այս վերջին հրատարակության հրատարակիչ Վ. Ազըլյանի, «Գրչության ժամանակն է, հաւանօրէն, 1280-էն վերջ, 1315-էն առաջ»<sup>4</sup>։

Պիտի նշել, որ այս հրատարակության ծավալը երկու ուկես անգամ ավելի է, քան Մոսկվայում և Փարիզում հրատարակվածներինը։ Այդ հրատարակությունը կատարված է Սըմբատի ամենահին ձեռագիր տեքստից, որը պահվում է Վենետիկի Մատենադարանում։

Սմբատի «Տարեգրքի» մի մասը 1862 թվականին Ֆրանսերենի է թարգմանել ռուսական կայսերական ակադեմիայի իսկական անգամ Վիկտոր Լանգլուան և հրատարակել Պետերբուրգում<sup>5</sup>, իսկ պրոֆ. Պատկանովը Սմբատի «Տարեգրքից» միայն երկու էջ է թարգմանել ռուսերենի, որտեղ տրվում է մոնղոլների Միջին Ասիայից Իրան անցնելու պատմությունը<sup>6</sup>։

<sup>1</sup> Սմբատ Սպարապետի եզրոր Հեթմոյ առաջնոյ արքայի հայոց, պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս և հայոց մեծաց, ըստ կարգի ժամանակաց, Մոսկվա, 1856։

<sup>2</sup> Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի հայոց, որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, Փարիզ, 1859։ Սմբատի «Տարեգրքն» 18-րդ դարի ձեռագրերում հիշատակվում է «Պատմագիրք Հայոց» գրքերի շարքում։ (Տե՛ս Հակոբ Անասյան, Հայկական Մատենագրություն, հատ. Ա., էջ LV.)

<sup>3</sup> Սմբատ Սպարապետի Տարեգրքը, Վենետիկ, Ս. Չազար, 1956։

<sup>4</sup> նույնը, էջ 6։

<sup>5</sup> Langlois V., Extrait de la chronique de Sempad, St. Pétersbourg, 1862.

<sup>6</sup> Տե՛ս Из летописи Конетабля Сембата, писателя XII века, в

Սմբատ Սպարապետը իր «Տարեգիրքը»-ն սկսում է 915 թվականից և վերջացնում է 1274 թվականով: Այնուհետև այն շարունակում են երկու անձինք, մեկն սկսում է 1274 թվականից և հասցնում 1286 թվականը, իսկ երկրորդը՝ մինչև 1331 թվականը:

Ոմանք կարծում են, որ Սմբատը, ինչպես Հեթում պատմիչը, իր «Տարեգիրքը» նախապես գրել է Ֆրանսերեն և հետո միայն թարգմանել հայերենի: Այդ կարծիքն արտահայտել է Սմբատի «Տարեգրքի» Փարիզի հրատարակիչ Կ. Շահնազարյանը, հիմք ընդունելով Սմբատի «Թարգմանող տառիս և պատմութեանս» արտահայտությունը, որից եզրակացնում է, իբր Սմբատը ինքն է ասում, թե իր գիրքը ինքն է թարգմանել հայերենի: Շահնազարյանը Սմբատի այդ միտքը ճիշտ չի հասկացել: «Թարգմանութիւն» բառը նշանակում է ոչ միայն «թարգմանող», այլև ներկա իմաստով կարող է լինել «կազմող», «շարագրող» կամ «պատմող»: Միջնադարյան շատ հեղինակների մոտ<sup>2</sup> շատ հաճախ «թարգմանութիւն» ասելով հասկացել են ճիշտ այնպես, ինչպես գրծ է անում Սմբատը: Այդպես են կարծում նաև ուրիշները<sup>3</sup>:

Զարմանալի է, որ Սմբատի «Տարեգրքի» մասին Գ. Ալթունյանը կասկածանքով է խոսում, գրելով թե Սմբատի

книге: История монголов по армянским источникам, вып. I, перевод и объяснение К. П. Патканова, СПб, 1873, стр. 65—67.

<sup>1</sup> Սմբատ, Փարիզ, ներածություն, էջ 18:

<sup>2</sup> Տե՛ս Մասննադարանի ձեռագիր, № 4584, էջ 371, տե՛ս նաև ձեռագիր № 1900, էջ 45:

<sup>3</sup> Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 5, ծան. 2: Տարեգրքի հրատարակիչը նույնպես կարծում է «Հեղինակի մը գրչին տակ «թարգմանող» կը նշանակեր նաև ճառող և պատմող»:

առնուձեռով մեզ հասել է այսպես կոչված «Տարեգրութիւնը», որը համառոտակի պատմում է 951—1336 թթ. անցքերը<sup>1</sup>:

Իր «Տարեգիրքը» շարագրելիս Սմբատն օգտագործել է իրենից առաջ եղած պատմիչների՝ Մատթեոս Ուռհայեցու, Միքայել Ասորու, Կուլիմեոս Տուրայեցու և այլոց աշխատությունները: «Տարեգրքի» առաջին մասի նյութերը բացառապես վերցրել է Մատթեոս Ուռհայեցու «Պատմութիւն»-ից:

Այն նյութերը, որոնք վերաբերում են 10—12-րդ դարերի առաջին քառորդին, Սմբատը շարագրում է ուրիշ հեղինակներից քաղելով կամ լսելով, իսկ դրանից հետո, իր ժամանակի իրադարձությունների պատմությունը գրում է իբրև ականատես ու մասնակից: Իր «Տարեգրքի» մեջ Սմբատը հանգամանորեն կանգ է առնում հայ-բյուզանդական, հայ-արաբական, հայ-վրացական, հայ-թուրքական, հայ-պարսկական և այլ հարաբերությունների պատմության վրա: Նա բավականին հետաքրքրական ու մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մեծ Հայքից դեպի օտար երկրներ, հատկապես դեպի բյուզանդական կայսրություն հայերի գաղթի պատմության վերաբերյալ: Սմբատը պատմում է խաչակիրների արշավանքների և նրանց զավթողական քաղաքականության մասին: Նրա աշխատության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սմբատը սովորական պատմիչ չէ: Այս կամ այն դեպքի ու երեվույթի առնչությամբ նա իր վերաբերմունքն է դրսևորում:

Այսպես, օրինակ, 1071 թվականի Մանազկերտի ճակատամարտի պարտության մասին խոսելիս նա մեղադրում է

<sup>1</sup> Գ. Ալթունյան, Մոնղոլական արշավանքներ, էջ 69:



բյուզանդական կայսրերին ու նրանց կուսակալներին, այն բանի համար, որ նրանք թշնամաբար էին տրամադրված հայերի հանդեպ: «Որովհետև հույները,— գրում է Սմբատը,— քաջ ու պատերազմին հմուտ հայ զորավարներին ազատում էին, իսկ նրանց փոխարեն զորքերի հրամանատար էին նշանակում քրդերին և նրանց օգնությունը ուզում էին պաշտպանել Արևելյան աշխարհը»:

[«Զի,— գրում է Սմբատը,— զարս քաջս և պատերազմօղբս Հայոց հանեալ Յոյնք վարդեցին ի տեղի նոցա զԿրտսերն (քրդեր) զօրագլուխս, և այնու կամէին պահել զաշխարհն Արեւելից» ]<sup>1</sup>:

Սմբատը կշտամբում է հույներին նրա համար, որ նրանք չեբր հայերից քաջ զորավար էին գտնում, նրա աչքն էին հանում, և ինչպես տկար շներ շնն կարողանում պաշտպանել իրենց հոտը գայլերից, այնպես էլ նրանք փախչում էին, թողնելով երկիրը թշնամիների ավերին ու գերությունը»:

[«Թե քաջ զօրական գտանէին ի Հայոց, զաչքն հանէին. եւ իւրեանք, որպես տկար շունք որ շկարեն պահել զհօտն ի գայլոց, այնպէս փախչին, և թողուին զաշխարհն թշնամեացն յաւար եւ ի գերութիւն» ]<sup>2</sup>:

Սմբատը ատելությունը է խոստում բյուզանդական կայսրերի ու պատրիարքների մասին, որոնք նպատակ ունեին ոչնչացնել հայկական կրոնը և ստիպել հայերին ընդունել հունական դավանանքը: Հայ-բյուզանդական հարաբերությունները կրոնական ու քաղաքական գծով այն աստիճան

էին սրվել, որ հայերը որոշում են նրանց փոխարեն բարեկամություն հաստատել սելջուկների հետ: «Եվ զկնի աւուրց ինչ թագաւորն հայոց և իշխանքն արարին սէր և միաբանութիւն ընդ մանուկ ամիրային», հաստատում է պատմիչը<sup>1</sup>:

Այնուհետև Սմբատը հանգամանորեն խոստում է Հայոց իշխան և կոն Ա-ի որդի թորոս իշխանի կողմից Կիլիկյան հայոց իշխանությունը վերականգնելու մասին:

Ինչպես հայտնի է, XII դարում բյուզանդացիք ջախջախեցին Ռուբինյանների իշխանությունը Կիլիկիայում և ևս Ա-ին գերի տարան Բյուզանդիա: Լևոնը 1141 թվականին մեռնում է գերություն մեջ, իսկ նրա որդին՝ թորոսը ծառայություն է մտնում բյուզանդական կայսրական բանակում: Երբ հունաց Հովհաննես Բ Կոմնենոս կայսրը (1118—1143) զորքով շարժվում է Կիլիկիա՝ նպատակ ունենալով ոչնչացնելու հայկական իշխանությունները, Սմբատը պատմում է, որ թորոս Բ-ն հունական բանակից փախչում է և հայրենիք գալով միանում իր Ստեփանե և Մլեհ եղբայրներին: Նրանց հետ թորոսը կազմակերպում է ուժեղ բանակ, ապստամբում է հունական զորքերի դեմ ու ջախջախելով նրանց, դուրս է բշում Կիլիկիայից: Այսպիսով, թորոսը 1145 թվականին վերականգնում է Ռուբինյան հայոց իշխանությունը: Ահա այդ պատճառով էլ Սմբատը թորոս Բ իշխանի մասին գովեստով է խոսում: Նա գրում է, «Նա (թորոսը) զգաստ ու աստվածաբանական ուսմունքին հմուտ, պատերազմներում հաջողակ էր: Արտաքինով թուխ, երկար բեղերով, գեղեցիկ, բայց վախ

<sup>1</sup> Սմբատ, Վեներիկ, էջ 44:

<sup>2</sup> Սմբատ, Փարիզ, 74:

<sup>1</sup> Այդ մասին Կիրակոս Գանձակեցին (էջ 179) նույնպես գրում է, որ «Արար սէր և միաբանութիւն ընդ սուլթանի շոտոնոց՝ որում անուն էր Ալադին»:

ներշնչող դեմքով, գանգուր մաղերով և շնորհքով լեցուն մի անձնավորություն էր» [«Զի էր այր զգաստ և հմուտ աստուածային դպրութեանց, և ի պատերազմունս յաջողակս, տեսլեամբ թխամորթ, երկայն ունչ, դիմօք գեղեցիկ և ահարկու, գանգրահեր և լի շնորհիւ»<sup>1</sup>]:

Սմբատը այդպիսի բարձր գնահատական է տալիս նաև վահրամ Պահլավունի իշխանին, ներսես Շնորհալուն, Գևորգ Մեղրիկին և ուրիշներին, նրանց անվանելով «հանճարեղ», «տաղանդավոր», «խոհեմ», «իմաստուն» և այլն: Սմբատ Սպարապետը Լևոն Բ-ի բերանով խորհուրդ է տալիս հայերին լինել միասնական՝ «անքակտելի մնալ ի սէր միմեանց և արիագոյն ի պահ աշխարհին»<sup>2</sup>:

Սմբատը հայ ժողովրդի նկատմամբ թշնամաբար տրամադրված ֆեոդալների, դավաճան իշխանների մասին խոսելիս, լինեն դրանք հայեր թե օտարազգիներ, ատելությամբ է հիշատակում: Ակնարկելով մի քանի ֆեոդալների, Սմբատը գրում է, որ նրանք ոչ թե մեռան, այլ «սատակեցին»: Խոսելով հույն ֆեոդալ Մարկոսի մահվան մասին, նշում է, որ նա «սատակեց»:

Ի տարբերություն բազմաթիվ հայ պատմիչների, որոնք հաճախ գովեստով են խոսում խաչակիրների մասին, Սմբատը՝ ընդհակառակն, մերկացնում է նրանց ավանտյուրիստական բաղաբախտությունը: Նա գտնում է, որ 1117 թվականին «Քրանկների կոմսերը այնպես էին նեղում հայ իշխաններին, մինչև որ շատերին քչեցին իրենց շրջաններից և բերդերից, և

<sup>1</sup> Սմբատ, Վեներտիկ, էջ 164:

<sup>2</sup> Նույնը, էջ 222:

ոչ ոք չի կարող պատմել այն բոլոր դառնությունների մասին, որ պատճառեցին Ֆրանկները հայերին»:

[«Այնպէս նեղեցին կոմսերն Փոանգաց զիշխանսն Հայոց, մինչև հանին ի գաւառաց և յամրոցաց իւրեանց, և ոչ ոք կարէ պատմել զդառնութիւն զոր ածին Ֆոանգնին ի վերայ հայոց»<sup>1</sup>]:

Սմբատը զայրույթով է խոսում հայ ժողովրդի դավաճան իշխանների մասին, որոնք, միանալով թշնամու հետ, սրի էին անցկացրել յուրայիններին: Օրինակ, Կոստանդին իշխանը, միանալով Իկոնիայի սուլթան Խոսրովին, նրա զորքերի օգնությամբ ներխուժում է Կիլիկիա և ժողովրդին սպանում ու կոզոպատում է: Հատկապես անարգանքի սյունին է գամում Լևոն Ա-ի որդի իշխան Մլեհին: Վերջինիս մասին Սմբատը գրում է. «Նա (Մլեհը) օգնություն ստանալով Նուր-ադ-դինից, որը Հալեբի տերն էր, բազմաթիվ թուրք զինվորներով եկավ և ներխուժեց Կիլիկիա... Եպիսկոպոսների ատամները ջարդեց, որտեղ ոսկի կամ արծաթ էր տեսնում, հափշտակում էր, որտեղ պարկեշտ ու համեստ կին էր գտնում, խայտառակում էր և զաղբելի պոռնկությամբ, անամոթ լրբությամբ ապականում էր»:

[«Յոգնութիւն ի Նուրըտնէն որ էր տէր Հալպայ, և բազում թուրքով եկն ևմուտ յերկիրն Կիլիկեցոց... յեպիսկոպոսունս ատամնաթափ առնէր, և ուր կասկածէր թէ գոյր ոսկի կամ արծաթ, յափշտակէր: Որ և զկանայս պարկեշտս և համեստս խայտառակէր և աղետալի պոռնկութեամբ և անամօթ լրբութեամբ ապականէր»<sup>1</sup>]:

<sup>1</sup> Սմբատ, Վեներտիկ, էջ 145:

<sup>2</sup> Նույնը, էջ 189—190:

Այդ դավաճանին Սմբատը բնութագրում է հետևյալ խոսքերով. «Նա (Մլեհը) գազանամիտ, շարաբարո և դաժան մարդ էր: Բոլորը նրան ատում էին»: [«Եւ էր սա այր գազանամիտ, շարաբարո և անողորմ, և ատէին զնա ամենեքեան»<sup>1</sup>]:

Սմբատը դատապարտում է հայոց իշխան Վեստ-Սարգսին, այն բանի համար, որ վերջինս միանալով Պետրոս Կաթողիկոսին, դավաճանեց 16-ամյա հայոց թագավոր Գագիկ Բ-ին (1042—1045), որը դեռ նոր էր թագադրվել: Ինչպես հայտնի է, Վեստ-Սարգիսը, հատուկ բանակցություններ վարելով բյուզանդական կայսր Կոստանդին Մոնոմախի հետ, խաբեությամբ Գագիկին ուղարկեց Բյուզանդիա, իսկ Մոնոմախը նենգություններ կալանավորեց նրան: Սմբատը մանրամասն պատմում է, թե ինչպես Գագիկը դիմադրում է Մոնոմախին՝ ասելով. «Հայոց թագավորը ես եմ և Անին քեզ չեմ հանձնի, քանի որ սուտ երդումով եք ինձ բերել Կոստանդինուպոլիս»: [«Թագաւոր տանն Հայոց ես եմ, և ոչ տամ զԱնի ի ձեռս քո, զի սուտ երդմամբ ածեր զիս ի Կոստանդինուպոլիս»<sup>2</sup>]:

Մինչև դեռ պայքար էր գնում հայոց պատանի թագավորի և բյուզանդական նենգ կայսեր Մոնոմախի միջև, դավաճան Վեստ-Սարգիսը Մոնոմախին ուղարկեց Անիի 40 բանալիներ: Մոնոմախը, Սմբատի ասելով, հայտարարեց. «զամենայն Արևելս ետուն իշխանին քո ի ձեռս իմ», որից հետո «բարձաւ թագաւորութիւնն հայոց, և անկաւ տէրութիւնն

<sup>1</sup> Սմբատ, Վեհեթիկ, 190:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 41:

բազրատունեաց»: Այս բոլորի պատճառը, Սմբատի կարծիքով, դավաճան Վեստ-Սարգիսն ու նրա համախոհներն էին:

Սմբատ Սպարապետը միակ մատենագիրն է, որ իր գրքում թվարկում է բոլոր այն հայ ֆեոդալներին, որոնք մասնակցել էին Լևոն Բ-ի թագադրմանը, նշելով նրանց անունը, ազգանունը, նրանց պատկանող գավառներն ու իրավունքները: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ճշտելու Կիլիկյան հայոց թագավորության պետական սահմանները, գավառները, հայ իշխանների տիրապետությունների սահմանները և ֆեոդալական իրավունքները:

Սմբատ Սպարապետը թեև համառոտ, բայց բովանդակալից տեղեկություններ է տալիս հայ-մոնղոլական հարաբերությունների մասին: Նա հանգամանորեն պատմում է Հեթում Ա թագավորի Մոնղոլիա կատարած ճանապարհորդությունը, ինչպես նաև հայ-սելջուկյան և հայ-բյուզանդական պատերազմների մասին: Այնուհետև Սմբատը կանգ է առնում Կիլիկյան Հայաստանի ներքին ու արտաքին հարաբերությունների վրա, գրում է օտար երկրների հետ ունեցած դաշնազան առևտրական գործարքների մասին և այլն:

Սմբատը կանգ է առնում հայ ֆեոդալների ներքին համարառությունների, իշխանության համար նրանց մղած պայքարի վրա: Սմբատի գրքում կան երկրի ներքին կյանքին նվիրված որոշ նյութեր, որոնք ազոտ կերպով ներկայացնում են տնտեսական ու սոցիալ-քաղաքական հարաբերությունների ընդհանուր վիճակը:

Այսպիսով, Սմբատի «Տարեգիրքը» կարևոր աղբյուր է հայ ժողովրդի, Կիլիկյան Հայաստանի սոցիալ-քաղաքական ու տնտեսական հարաբերությունների, Մերձավոր ու Միջին

Ասիայի, Իրանի ու Կովկասի պատմութիւնն ուսումնասիրութեան համար:

Բացի «Տարեգրքից» Սմբատը թողել է նաև նամակներ: Առանձնապես արժեքավոր նյութեր է պարունակում 1247 թվականին Սմբատի գրած մի նամակը՝ հասցեագրված Կիպրոսի թագավոր Հենրիխ Լուզինյանին, որը նա գրել է Մոնղոլիա գնալու ճանապարհին: Հեղինակը հարուստ փաստեր է բերում ինչպես մոնղոլների նվաճումների, նրանց նիստ ու կացի, սովորութիւնների մասին, այնպես էլ Իրանի, Միջին ասիական երկրների մասին: Չրանսերեն գրած իր այդ նամակում Սմբատը հանգամանորեն պատմում է իր կատարած ճանապարհորդութեան մասին: «Ես,— գրում է նա,— եղա Սամարղանդ քաղաքում, անցնելով շատ երկրներ, թողնելով Հնդկաստանը հետևում, մենք անցանք Բուդակի շատ երկրներ, այդ ճանապարհորդութեան վրա կորցնելով երկու ամիս»:

Այնուհետև Սմբատը խոսում է մոնղոլ նվաճողների կողմից կատարված ավերածութիւնների մասին, ասելով. «Այնտեղ ես տեսա մի քանի քաղաքներ, որոնք ավերվել էին թաթարների կողմից: Այդ քաղաքների հզորութիւնն ու հարուստութիւնն անասելի էր: Նրանցից մի քանիսին ես տեսա երեք օրվա ճանապարհի հեռավորութեան վրա, որտեղ թաթարների սպանած մարդկանց դիակներից բլուրներ էին կազմել»: Այնուհետև Սմբատը շարունակում է. «Ինչ վերաբերում է թաթարներին, նրանք այնքան շատ են...: Նրանք հիանալի նետաձիգներ են: Նրանց արտաքին տեսքը սարսափելի է և տարբերվում են միմյանցից: Մեզ համար շատ դժվար է հան-

գամանորեն նկարագրել նրանց ամբողջ կենցաղն ու սովորութիւնները»:

Սմբատը հատկապես ուշադրութիւն է դարձրել մոնղոլների կայսրութեան մեջ բնակվող քրիստոնյա բնակչութեան գրութեան վրա: Նա գրում է. «Այդ երկրների բնակիչների մեծ մասը քրիստոնյաներ են: Անձամբ ես ինքս այցելեցի նրանց եկեղեցիներ և տեսա այնտեղ Հիսուս Քրիստոսի պատկերը... Խանը և նրա մերձավորները համարյա թե քրիստոնյաներ էին: Նրանք իրենց արքունիքի առաջ ունեին եկեղեցի և դանգատուն, որտեղից նրանք հնչեցնում էին դանգերը, խփելով փայտից շինված գործիքով, և մինչև կայսրի այցը նրանք նախօրոք պարտավոր էին սկզբից ողջունել Հիսուս Քրիստոսին»: Սմբատը այնուհետև շարունակում է. «Քրիստոնյա բնակիչները, որոնք պատիվ էին համարում այցելելու խանին, թաթարներից ստանում էին ազատութիւն և պաշտպանութիւն ամեն տեսակի նեղութիւններից»: «Կար մի ոմն քրիստոնյա թագավոր,— վկայում է Սմբատը,— որը շրջապատման մեջ էր ընկել իր հարևան սարակինոսների թագավորութիւնների կողմից, որոնք սկսել էին դաժան ու սուր պատերազմ մղել նրա դեմ, այնքան ժամանակ, մինչև եկան թաթարները: Նա (քրիստոնյա թագավորը) միացել էր իր շորքերով թաթարներին և խիզախութեամբ հարձակվել իր հակառակորդների՝ սարակինոսների վրա ու ջախջախելով նրանց՝ դրավել Հնդկաստանի մեծ մասը, որտեղ մինչև այսօր կան մահմեդական զբերիներ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Սմբատ Սպարապետի նամակը թարգմանել ենք Պիեռ Բեռտեանի ֆրանսերեն հրատարակութեանից (Sh'ou Pierre Bergeron. voyage en Asie, tome I, p. 154):

Սմբատ Սպարապետի նամակում կան շատ հետաքրքիր նմանօրինակ նյութեր, որոնք այդ փաստաթղթին տալիս են պատմական արժեք և կարևոր նշանակություն:

Այժմ մի քանի խոսք Սմբատի շափածո գրվածքների մասին: Նախ անհրաժեշտ է նշել, որ նրա գրած համարյա թե բոլոր ոտանավորները ունեն գերազանցապես պատմական ու փիլիսոփայական բովանդակություն: Նրանց մեծ մասը գեղարվեստական առանձին արժեք չեն ներկայացնում:

Սմբատի շափածո գրվածքներից ամենահինը 1244 թվականի Ադանայում գրած ոտանավորն է, որի հետ կա Սմբատի ձեռքով գրված մի հիշատակում, որտեղ ասված է. «Մեղավոր հողածինս Սմբատ հայոց սպարապետս հիշեցիք ի պատիվ Քրիստոսի և նա հիշողին կգթա. ամեն»: («Զմեղաւոր հողս զՍմբատ՝ հայոց սպարապետս յիշեսջիք ի Քրիստոս և լնք(ն) յիշողաց ողորմեսցի. ամեն»<sup>1</sup>):

Հիշատակարանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սմբատը այդ շափածոն գրել է Հովհաննես Գամասկեցու «Յաղագս դոյի էութեան» փիլիսոփայական աշխատության ձեռագրի ցանկի վերջում: Իսկ այդ ձեռագիրը արտագրված է Սմբատի կարգադրությամբ և նրա նյութական միջոցներով: Այդ մասին նույն գրքում հիշատակություն ունի գրիչը, որտեղ ասված է. «Այս հանձարեղ պատմության՝ աստվածիմաստ Գրիգորի կազմության գիրքը գրվեց նվաստիս՝ Ստեփաննոս անարվեստ գրչիս և մեղապարտիս ձեռքով, հայոց մեծ սպարապետի, հայոց մեծ աթոռապահ Կոստանդինի որդու և հայոց Հեթում թագավորի եղբայր մեծ սպարապետ հա-

յոց Սմբատի պատվերով, որ և ստացավ այս (ձեռագիրը) իր նյութական միջոցներով՝ իր և յուրայինների օգտագործման և հողու հիշատակի համար: Սա գրվեց 1244 թվականին»:

[«Գրեցաւ գիրս կազմութեան հանձարայեղց բանի՝ Գրիգորի աստուածիմաստ անձին, ձեռամբ Ստեփաննոսի նուաստի՝ անարուեստ գրչի և մեղապարտ անձին, ի խնդրոյ մեծ սպարապետին հայոց Սմբատա՝ որդույ Կոստանդեա մեծ աթոռապահին հայոց և եղբար թագաւորին հայոց Հեթումոյ, որ և ստացաւ զսա ի յազատ արգեանց իւրոց՝ ի վայելումն իւր և իւրոցն և ի յիշատակ հողույ իւրոյ յետ աստեացս: Գրեցաւ սա ի թուականութեանս ՈՂԳ (693—1244)»<sup>1</sup>]:

Նույն ձեռագրի վերջին էջի լուսանցքում Սմբատի ձեռքով կտրմիր թանաքով ավելացված է: «Դաւանիմ ճշմարտապէս զորպիսութիւնք հաւգոյն ըստ ճշգրիտելոյ բանից սուրբ վարդապետիս և զայլսն խոտան ի բաց ընկեցի ես տրուպս Սըմբատ Գուն(դ)ուտապլ և աղաչմ որ լավ հասկանայք զբանս»<sup>2</sup>:

Պոեմներից ղգացվում է, որ Սմբատը ծանոթ է եղել հայկական և հունական փիլիսոփայությանը: Սմբատը առանձնապես գիտակ էր Արիստոտելի փիլիսոփայական դրույթներին, այդ նկատվում է ստորև բերված նրա տողերից.

«... Որ սա գլուխ է մն սէկիս (1),  
Զորս անուանեաց Արիստոտէլ  
Ստորագրութիւնք մն (1) սեկիս,  
Եւ զոր գրեաց Արիստոտէլ  
Նամակ և գիր զարմանալիս  
Առ Ալեքսանդրն իւր աշակերտն՝

<sup>1</sup> Գ. Հովսեփյան, «Յիշատակարանք», էջ 951:

<sup>1</sup> Գ. Հովսեփյան, «Յիշատակարանք», էջ 953:

<sup>2</sup> Նույնը, էջ 951:

Տիեզերակալ Գ կուսիս,  
երբ հեռացեալ էր ի նմանէն  
Առնուլ զԴ կողմ աշխարհիս,  
Ջորս ընթանրեաց ի թիչ տեղիս՝  
Ջզիտութիւն (ս) անճառելիս»:

Այս պոեմում բացի փիլիսոփայական կարգի դատողութիւններէ, Սմբատը տալիս է նաև տեղեկութիւն իր և իր հարազատների մասին:

«Տէր և պարոն Պապեոսիս  
եղբայր Հեթմոյ թագաւորիս  
եւ սպայապետ Հայոց գնդիս»<sup>1</sup>:

Պահպանվել է նաև Սմբատի շափածո մի արձանագրութիւնը. փորագրված 1251 թվականին իր «Սմբատակալ» (կամ Սմբատկալ) ամբոցի պատին: Այդ տեքստի լուսանկարը մենք հրատարակել ենք Սմբատի «Գատաստանագրքի» ուսերեն հրատարակութիւն մեր ներածականում: Այդ արձանագրութիւն մեջ Սմբատը իր մասին զրուս է հետևյալը.

«Սմբատ անունս Հայկազան,  
Տէր գղեկիս հայրենական  
եւ Գունգստապլլըս գիւսական»<sup>2</sup>:

Սմբատի պոեմներից առանձնապես պատմական նշանակութիւն ունի 1269 թվականին գրած «Ի ճաշոց գրիս» պոե-

մը, որը նվիրված է Մառի հայտնի ճակատամարտին: Այս պոեմում Սմբատը ոչ միայն կարևոր պատմա-քաղաքական բովանդակութիւններ նյութեր է հաղորդում մեզ, այլև այդ արյունալի ճակատամարտի տխուր հետևանքների մասին տալիս է մանրակրկիտ տեղեկութիւններ: Բերենք մի հատված այդ պոեմից: Սմբատը զրուս է.

«Սկիզբն էր ի շար ժամանակի,  
երբ Մարցին եկն ի Մառի  
Վ'եսպան զԹորոս թագաւորի,  
եւ այլք բազումք ի նոյն զկնի,  
Վայրեց զՍիս եւ զՄսիս,  
եւ ինչ որ շէն կայր 'ի միջի.  
եւ զլեւոն աւագ որդի  
Հեթմոյ Հայոց մեծ արթայի՝  
Տարու ծառա վ'եղ ի բանտի  
Ի քաղաքին եզրատուսի»:

Սմբատ Սպարապետը բազմաթանր հեղինակ է: Բացի վերոհիշյալ գրական ժառանգութիւնից նա զբաղվել է նաև քերականութիւնով և երաժշտութիւնով: Մեզ է հասել Սմբատ Սպարապետի պատկանող «Ավետարան» ձեռագիրը: Մագաղաթյա բոլորագիր, նկարազարդ այդ ձեռագիրը Երևանի Մատենադարանի թանկագին ձեռագրերից մեկն է: Այդ ձեռագրի էջերում կան մի քանի հիշատակութիւններ, կատարված հենց իրեն՝ Սմբատ Սպարապետի ձեռքով: Դրանցից առանձնապես մեզ հետաքրքրում են երկուսը: Մեկը այն է, որ Սմբատը վկայում է, որ ինքը զբաղվել է քերականութիւնով և իր անձնա-

<sup>1</sup> Գ. Հովսեփյան, «Յիշատակարանք», էջ 955:

<sup>2</sup> Սմբատ, Գատաստանագրք, էջ VIII:

<sup>1</sup> Տե՛ս Assises d' Antioche, էջ 93:

կան «Ավետարան» ձեռագրի քերականական շտկումները ինքրն է կատարել: Այդ մասին նա վկայում է. «Հալածեցա քերականական ուղղել ըզսա»<sup>1</sup>: Երկրորդ վկայությունը այն է, որ նա զբաղվել է նրաժշտությունը: Նա իր ձեռքով վերահիշյալ «Ավետարան» ձեռագրում կատարել է առողանությունն նշանների լրացումներ, որպեսզի ընթերցողը կարողանա ճիշտ կարգալ կամ երգել: Ձեռագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ 14 ա էջից մինչև 68 ա էջը առողանության նշանները դրված են սև թանաքով ուրիշի կողմից, իսկ 68 բ էջից մինչև 148 ա էջը կատարված է կարմիր թանաքով Սմբատ Սպարապետի ձեռքով: Այդ մասին ձեռագրի հիշատակարանում ուղղակի ասված է: «Ի կարգալն սորա հետ կարմիր նշանոյն երթայք»: Ինչպես երևում է, խազերով առողանության նշանները սկզբից կատարել է գրիչ Գրիգորը սև թանաքով, այսինքն ճիշտ այն թանաքով, որով գրված է ձեռագիրը: Իսկ կարմիր թանաքով կատարել է ինքը Սմբատ Սպարապետը: Ձեռագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ առողանության նշանների նշանակումը Սմբատը ինչ-ինչ պատճառներով չի կարողացել ավարտել:

Այդ «ավետարան» ձեռագրում Սմբատ Սպարապետի կողմից թողած հիշատակարանում կա մի շատ կարևոր նախադասություն, որը ցույց է տալիս առողանության նշանների գործածություն կարևորությունը և նրանից օգտվելու դժվարությունը<sup>2</sup>: Սմբատը այդ բացատրում է նրանով, որ այդ

դժվար արվեստին, որին առաջներում տիրապետելիս են եղել հայերը, այժմ մոռացվել է, իր խոսքերով ասած, «Դժվարագոյն է վասն զի մոռացել են ազգս ի վաղուց հետէ և օտարացեալք»:

Սմբատը պարզ վկայում է, որ հայերը, որպես բարձր կուլտուրա ունեցող ժողովուրդ, դեռ շատ առաջ տիրապետել են բանաստեղծական առողանության նշանների բարձր արվեստին, իսկ հետագայում, դժբախտաբար, այն «մոռացվել» և «օտարացվել» է: Հիշատակարանում ասված է.

«Մեղավոր հողածինս՝ Սմբատս, որ ստացա այս աստվածախոս ավետարանը և այն առողանեցի բանաստեղծական արվեստի տասն սկզբունքների համաձայն, բարին հիշեցեք Քրիստոսի հետ միասին — հիշելով, իմաստուն զավակներ և սուրբ Սիոնի ծնունդներ՝ երբ այս ընթերցեք, հետևեցեք կարմիր նշաններին և կարգալու ձևը (նրանցով) տարեք (այն դեպքում) ընթերցման եղանակը ճիշտ կլինի: Բայց շատ զրժվար է, որովհետև մեր ազգը վաղուց այն մոռացել է և հեռացել այն տիրապետելուց»:

[«Ձմեղաւոր հողս՝ որ ստացա զաստուածախաւս աւետար(րա)նըս և ոռողեցի՛ ըզսա քերթութեան արհեստին տասն»<sup>2</sup>

սել են առողանության խազերից» (Հայկական խաղային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 12):

<sup>1</sup> «Ոռողեցի», այսինքն, առողանեցի, ոռողանություն բառից է, որը նշանակում է կարգալ կամ երգել: «Ոռողեցի» նշանակում է նաև առողանության նշանները դրեցի:

<sup>2</sup> Իրոք, առողանության նշանները տասն ն՛ն՝ շեշտ, բուժ, պարույկ, սող, երկար, թավ, սոսկ, ապաթարց, ենթամնա և ստորատ, որոնք շատ մաքուր կատարված են Սմբատի կողմից՝ իրեն պատկանող «ավետարան» ձեռագրի էջերում:

<sup>1</sup> Մատենադարանի Ձեռագիր № 7644, էջ 189 բ:

<sup>2</sup> Ա. թոյանը իր հետազոտության գրքում առողանության խազերի մասին նշում է, որ «առողանության ու երաժշտական խազերի միմյանց հետ կապված լինելը, շատերը երաժշտական խազերի լուսարանության իրենց փորձերը սկզբ

սոսականութեամբն, յիշեցչիք բարի յիշմամբ ի Քրիստոս: Ու  
որդիք մակացութեան և ծնունդ սրբոյն Սիոնի՝ եթէ ի կարգալն  
տորա յետ կարմիր նշանացն երթայք և տանիք զեղանակ կար-  
գալոյն, լաւ առնեք, բայց դժուարագոյն է, վասն զի մոռացել  
են ազգս ի վաղուց հետէ աւտարացեալք ի հմու(տու)թիննէ՝  
ս(ո)րին»<sup>1</sup>։

Այսպիսով, Սմբատ Սպարապետը իր բազմակողմանի գոր-  
ծերի հետ միասին, տիրապետելով առաջնութեան նշաննե-  
րի բարդ արվեստին, այն օգտագործել է իր ժամանակաշրջա-  
նում, որպէսզի ընթերցող հասարակութիւնը կարողանա  
ճիշտ կարգալ կամ երգել այն գրական ժառանգութիւնը, որ  
թողել են մեր նախնիները։

Բ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ  
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՅ» ԳՐԲԻ ԼԵՏ

Այժմ մի քանի խոսք Լեթում Պատմիչի «Պատմութիւն Թա-  
թարաց» գրքի հետ ունեցած Սմբատ Սպարապետի առնչու-  
թեան մասին։

Ներկա աշխատութիւնում մեջ ենք բերել «Պատմութիւն  
Թաթարաց» գրքի 23-րդ գլխից հատված, որտեղ տեղավոր-  
ված է պայմանագրի տեքստը, կնքված մոնղոլական մեծ  
խան Մանգուի և Կիլիկիայի հայոց Լեթում Ա թագավորի մի-  
ջև։ Ինչպէս հայտնի է, այդ գրքի հեղինակն Սմբատ Սպարա-  
պետի Օշին եղբոր որդի Լեթումն է, որին «Պատմիչ» են ան-  
վանում։ Այդ գիրքը գրվել է Ֆրանսիայում 1307 թվականին,

<sup>1</sup> Մատենագրանի ձեռագիր Մ 7644, էջ 124ա

Պուատյե քաղաքում։ Լեթումի «Պատմութիւն Թաթարաց»  
աշխատանքը իրավամբ համարվում է մոնղոլական շրջանի  
պատմութեան լավագոյն աղբյուրներից մեկը։ XIII դարի հայ  
ոչ մի հեղինակի գործ այնքան լայն տարածում չի գտել հա-  
մաշխարհային գրականութեան մեջ, որքան Լեթումի այդ  
գործը։ XIV դարից սկսած այն թարգմանված է եվրոպական  
մի շարք լեզուների՝ ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն,  
գերմաներեն, իտալերեն և այլն։ Հին ֆրանսերեն տեքստը  
հրատարակված է Պիեռ Բեռտեռոնի կողմից<sup>2</sup>, որից օգտվել  
ենք նաև մենք։

<sup>1</sup> Լեթում Պատմիչը եղել է Սմբատի նման Լայոց գործերի գլխավոր  
հրամանատարը 1305 թվականին հրաժարվում է ծառայուց, ընդունվում է  
Կիպրոսի Պրեմոնտրեական լատինական միաբանութեան մեջ «Եղբայր  
Անտոն» անունով։ Լեթումի Կղեմեսու Ե պապի պահանջով իր անձնական քար-  
տուղար Նիկոլայ Սալկոնի օգնութեամբ գրի է առնում իր «Պատմութիւն Թա-  
թարաց» գիրքը։ Այդ մասին նա գրում է. «Ահա արևելյան երկրների պատ-  
մութիւնը, հավաքված Կոստիոսի իշխան, Լայոց թագավորի ազգական մե-  
ծահարգո եղբայր Լեթումի կողմից, որ ես, Նիկոլայ Սալկոնս Պուատիե եղած  
ժամանակ վեհագոյն Լայոսպետ Կղեմես Ե Պապի հրամանով սկզբից այն  
գրեցի ֆրանսերեն այնպէս, ինչպէս թելադրեց հիշյալ եղբայր Լեթումը,  
առանց որևէ գրանցման, առանց սկզբնաղբյուրի։ Ես հետազայում, այսինքն  
1307 թվականի օգոստոս ամսին ֆրանսերենից այն թարգմանեցի լատիներեն»։

Նիկոլայ Սալկոնի այս վկայութեան մեջ կա ակնբախ հակասութիւն։ Նա  
մեկ գրում է, որ այս պատմութիւնը «հավաքված է» Լեթումի կողմից, իսկ  
հետո ասում է՝ Լեթումը ինձ թելադրեց «առանց որևէ գրանցման, առանց  
սկզբնաղբյուրի»։ Ընդհին Լեթումը կարողանար մի ամբողջ գիրք թելա-  
գրութեամբ գրի առնել։ Մեզ հավանական է թվում այն, որ Լեթում Պատ-  
միչը սկզբից հավաքել է զանազան նյութեր հայերեն լեզվով և գրանք թե-  
լադրել է քարտուղարին՝ Նիկոլայ Սալկոնին ֆրանսերեն, իսկ հետո նա  
թարգմանել է լատիներեն։

<sup>2</sup> Pierre Bergeron, Voyages en Asie, tome II, էջ 41



Հեթում Պատմիչի «Պատմութիւն թաթարաց» գրքի լատիներեն տեքստը հայագետ Ավգերյանը 1842 թվականին թարգմանել է դրաբար:

Հեթումի «Պատմութիւն թաթարաց» գործը շատ բարձր է գնահատվել ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի արևելագետների կողմից: Հայտնի արևելագետ Գ-Օսսոնը, արաբագետ Կլոդ Կայեն և շատ ուրիշներ գտնում են, որ Հեթումի թողած այդ հուշարձանը մոնղոլների պատմության վերաբերյալ լավագույն աղբյուրներից է: Արևելագետ Պոլինի կարծիքով՝ Հեթումի հաղորդած տեղեկությունների հիման վրա հնարավոր է դառնում պարզել Մարկո Պոլոյի «ճանապարհորդություն» գրքի մի շարք անհասկանալի տեղերը:

Հեթումի աշխատությունը բազմակողմանի ու հանգամանորեն քննարկման ենթարկեց սովետական գիտնական Ս. Մ. Միրնին: Ուսումնասիրելով XIII դարի բազմաթիվ աղբյուրներ, նա հանգել է այն եզրակացության, որ Հեթումի աշխատությունը՝ համեմատած Պլանո Կարպինի, Վիլհելմ դը Ռուբրուկի, Ասցելինի, Մարկո Պոլոյի և ուրիշ հեղինակների գործերի հետ, ավելի հարուստ և բովանդակալից նյութ է պարունակում: Նրա կարծիքով Հեթումի «Պատմութիւն թաթարաց» գիրքը հավաստի աղբյուր է ինչպես Միջին Ասիայի, Կովկասի, Հարավային Ռուսաստանի, այնպես էլ հատկապես մոնղոլների պատմության վերաբերյալ: Ս. Մ. Միրնին Հեթումին համարում է XIV դարի ամենաառաջադեմ մարդկանցից մեկը և նրան բարձր է դասում իր ժամանակաշրջանի արևմտաեվրոպական շատ պատմիչներից ու ճանապարհորդներից: Այդ մասին նա գրում է.

«Իր ժամանակին Եվրոպայի համար այդ (պատմական

հուշարձանը) հանդիսացել է Ասիայի, Կովկասի, Հարավային Ռուսիայի ժողովուրդների պատմության, աշխարհագրության, տնտեսական ու քաղաքական կյանքի և XIII դարի մոնղոլների պատմության առավել արժեքավոր աղբյուրներից մեկը»<sup>1</sup>: Հեղինակը այնուհետև շարունակում է.

«Նրա (Հեթումի) աշխատության միջոցով եվրոպացիք ծանոթացան Արևելքի երկրների քաղաքական փոխհարաբերությունների պրոբլեմներին, որոնք սովորաբար վրիպած են եղել Մարկո Պոլոյի ուշադրությունից»<sup>2</sup>:

Բերված փաստերից ակներև է, որ ինչպես անցյալի, այնպես էլ սովետական արևելագետները բարձր են գնահատել Հեթում Պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը, գերադասելով նրան մոնղոլական շրջանի Արևմտյան Եվրոպայի շատ անվանի ճանապարհորդներից ու գիտնականներից:

Հարց է առաջ գալիս, ինչպե՞ս կարող էր Հեթում պատմիչը, որն ականատես չի եղել ղեպերին և ոչ մի անգամ չի եղել Մոնղոլիայում, չի բանակցել մոնղոլ խաների հետ, մոտ հիսունչորս տարի հետո զբեղ ավելի հավաստի տեղեկություններ մոնղոլների կյանքի ու կենցաղի, նրանց սովորությունների, ռազմական արվեստի, սոցիալ-քաղաքական ու տրնտեսական հարաբերությունների, ինչպես նաև Միջին և Մերձավոր Ասիայի բազմաթիվ երկրների պատմա-քաղաքական հարաբերությունների մասին ավելի հաջող, ավելի բովան-

<sup>1</sup> С. М. Мирный, «La flor des estoires de terres d' Orient» Гафтона как историко-географический источник по истории монголов (См. «Советское Востоковедение», Москва, 1956, стр. 73).

<sup>2</sup> Там же, стр. 75.

դակալից, բան Պլանո Կարպինին, Վիլհելմ դը Ռուբրուկը, Ասցելինը, Մարկո Պոլոն և ուրիշներ, որոնք անձամբ եղել են Մոնղոլիայում, բանակցություններ վարել մոնղոլ խաների հետ, որպես մասնակիցներ և ականատեսներ, գրել տվյալ ժամանակի պատմա-քաղաքական իրադրությունների պատմությունը:

Ուսումնասիրելով «Պատմութիւն թաթարաց» գիրքը, մենք հանգում ենք այն եզրակացութեան, որ Հեթում Պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատութեանն իբրև հիմք ու աղբյուր ծառայել են իրենից առաջ մի ուրիշ հայ հեղինակի թողած նյութերը, որը տվյալ ժամանակաշրջանում եղել է Մոնղոլիայում, բանակցություններ վարել մոնղոլ խաների հետ, ականատես եղել այն բոլոր իրադարձություններին, որի մասին այնքան հանգամանորեն գրված է «Պատմութիւն թաթարաց» գրքում:

Իսկ ո՞վ է եղել իր ժամանակի այդ զարգացած հայ ճանապարհորդը, որը եվրոպական շատ ճանապարհորդներից առաջ եղել է Մոնղոլիայում և հավաքել ինչպես մոնղոլների, այնպես էլ Միջին ու Մերձավոր Ասիայի շատ երկրների, ինչպես նաև Հայաստանի մասին մանրամասն ու արժեքավոր տեղեկություններ: Այդ անձնավորությունը, ինչպես հայտնի է, եղել է հենց ինքը Սմբատ Սպարապետը:

Պետք է ենթադրել, որ այն պայմանագիրը, որ կնքված է Հեթում Ա-ի և Մանգու խանի միջև, կազմված է եղել Սմբատի կողմից, որովհետև Կիլիկյան հայոց թագավորության պատվիրակության կազմում աչքի ընկնող մտավորականը Սմբատն էր: Շատ հավանական է, որ այդ բանակցություններին Սմբատը հատկացրել է մի ամբողջ գիրք, որից օգտվել է

Հեթում Պատմիչը իր «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը գրելիս:

Հեթում Պատմիչը Սմբատի մահից հետո, ձեռքի տակ ունենալով իր հորեղբայր Սմբատի աշխատությունները, օգտագործել է դրանք իր «Պատմութիւն թաթարաց» գիրքը գրելիս: Այդ մասին մենք ունենք հենց իր՝ Հեթում Պատմիչի ուղղակի վկայությունը, որն իր գրքի 46-րդ գլխում երրորդ գեմբով գրում է, թե «Պատմութիւն թաթարաց» գիրքը կազմելիս ինքը նյութերը վերցրել է երեք աղբյուրներից՝ «Չինգիզ-խանի ժամանակաշրջանից սկսած, որը մոնղոլների առաջին կայսրն էր, մինչև Մանգու խանը, որը մոնղոլների չորրորդն (կայսրն) էր; վերցրել է մոնղոլների պատմությունից, Մանգու խանի ժամանակից սկսած մինչև Հուլաղու խանը, այն, ինչ գրել է, նա իմացել է իր մեծահարգ հորեղբորից»<sup>1</sup>, իսկ երրորդ բաժինը նա գրել է որպես ականատես ու ժամանակակից:

Հեթում Պատմիչի գրքի Ավգերյանի գրաբար թարգմանության մեջ այս տեղը ճիշտ չի թարգմանված: Նա գրում է.

«Հաւատարիմ յօրինիչ գրոյս զայն իրս զորս պատմէ ի ժամանակէ Ճինկիզ խանին մինչև ի Մանգոյ խան, էսո ի պատմութեանց Թաթարաց: Ի Մանգոյ խանէ մինչև ի մահ Հուլաղուի պատմէ զոր միանգամ լուաւ ի քեռոյ իւրմէ՝ որ առաջիկայ գտաւ եղելոցն ամենայնի»<sup>2</sup>:

Ուշադրության արժանի է «ի քեռոյ իւրմէ» արտահայտությունը: Ըստ Ավգերյանի, դուրս է գալիս, որ Հեթումը իր գրքի

<sup>1</sup> S'e'u Histoire d' orientales. էջ 68:

<sup>2</sup> Հեթում Պատմիչ, գլ. Խ2, էջ 68:

պատմութեան երկրորդ բաժինը վերցրել է իր քեռու նյութերից: Բայց ինչպես հայտնի է, թե՛ Ֆրանսերենում և թե՛ լատիներենում «բեռի» առանձին բառ չկա: Լատիներենում և Ֆրանսերենում «oncle» բառը ունի երկու նշանակություն՝ «քեռի»՝ «մորեղբայր» և «հորեղբայր»: Ավգերյանը «oncle» բառը կամայական կերպով թարգմանել է «բեռի», դրանով իսկ թյուրիմացութեան մեջ գցել ընթերցողին: Այսպիսով, «oncle» բառը, ըստ «Պատմութիւն թաթարաց» գրքի բովանդակութեան, պիտի թարգմանել ոչ թե «բեռի», այլ «հորեղբայր», քանի որ Հեթում Պատմիչը քեռի չի ունեցել: Այստեղ խոսքը վերաբերում է Հեթում Պատմիչի հորեղբորը, այսինքն՝ Սմբատ Սպարապետին: Կարող են առարկել, թե ինչո՞ւ նրա հիշատակած «հորեղբայրը» անպայման Սմբատը պիտի լինի և ոչ թե մեկ ուրիշը: Հեթում Պատմիչը, ինչպես վերը գրեցինք, ունեցել է 7 հորեղբայր: Այդ հարցին ճիշտ պատասխանելու համար անհրաժեշտ է տեսնել, թե ովքեր են եղել Կոստանդին թագավորահոր որդիները, ինչով են զբաղվել նրանք և ո՞վ կարող էր այդպիսի գործ գրել: Ինչպես Սմբատ Սպարապետի կենսագրութեան մեջ նշեցինք, Կոստանդինի 8 տղաներից Հեթումը թագավոր էր, Սմբատը՝ սպարապետ, երկուսը՝ Տեր Բարսեղը և Հովհաննեսը, բարձրաստիճան հոգևորականներ էին, որոնք երկրից դուրս չեն եկել, մյուս եղբայրները եղել են աննշան ֆեոդալներ՝ Վասիլը Զանճոյ գավառի իշխան էր, Լևոնը՝ Բարդասի տեր:

<sup>1</sup> Սմբատի մյուս երկու եղբայրների մասին բոլորովին տեղեկություններ, թե նրանք ինչով են զբաղվել: Համենայն դեպս, դիվանագետներ չեն եղել, հայրենիքից դուրս չեն եկել, գիտական ժողովուրդում չեն փողել:

Այսպիսով պարզվում է, որ Կոստանդին թագավորահոր 8 որդիներից միայն Սմբատն է եղել աչքի ընկնող դիվանագետ և երկու անգամ եղել մեծ խանի արքունիքում, վարել դիվանագիտական հաջող բանակցություններ մոնղոլների հետ և, ինչպես ասում են, «հրաշքով փրկել երկիրը»: Նա է որ համոզողական հարաբերություններում մեծ դեր է խաղացել, ինչպես նաև գիտութեամբ է զբաղվել:

Այս բոլորից հետո կարծում ենք կասկածից դուրս է, որ «Պատմութիւն թաթարաց» գործի երկրորդ մասը, որը գրքի բովանդակութեան հիմնական բաժինն է կազմում, նյութերը պատկանել են Սմբատ Սպարապետին, որի մահից հետո Հեթում Պատմիչը՝ նրա եղբոր որդին, իր ձեռքի տակ ունենալով այդ նյութերը, «Պատմութիւն թաթարաց» գիրքը գրելիս օգտագործել է դրանք:

#### Գ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախ քան Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում համառոտ տեղեկություններ տալ նրա իրավագիտական թարգմանությունների մասին, որոնք նշանակություն են ունեցել Կիլիկիայի հայոց պետականութեան կյանքում և Սմբատ Սպարապետի կազմած «Դատաստանագրքի» համար:

Սմբատ Սպարապետը թարգմանել է «Անսիզք Երուսաղեմայ» և «Անսիզք Անտիոքայ» իրավագիտական գործերը: Այդ թարգմանություններից մեզ հասել է Անտիոքի խաչակիր ֆեոդալական իշխանութեան օրենքները, որը Սմբատ Սպարապետի

տը XIII դարի երկրորդ կեսի սկզբին ֆրանսերենից թարգմանել է հայերեն: Ֆրանսերեն բնագիրը չի պահպանվել, մեզ հասել է միայն Սմբատի կատարած թարգմանությունը, որը ընդունում են բնագրի տեղ:

Սմբատ Սպարապետի թարգմանած այդ միջնադարյան իրավագիտական արժեքավոր հուշարձանը առաջին անգամ հայերենից վերստին թարգմանել է ֆրանսերենի Ղ. Ալիշանը և հրատարակել է Սմբատ Սպարապետի մահվան վեցհարյուրամյակի առթիվ Վենետիկում 1876 թվականին, «Assises d'Antioche» խորագրով:

«Անսիզք Անտիոքայ»-ի հայերեն ձեռագրերից մեզ հասել են շորսը: Առաջինը պահվում է Վենետիկի Մատենադարանում, արտագրված 1331 թվականին ոմն Սարգիս գրչի ձեռքով: Այդ ձեռագրից է Ղ. Ալիշանը թարգմանություն կատարել<sup>1</sup>: Այդ ձեռագիրը հայտարարվել է Սիրիայի Հալեպ քաղաքում պատահաբար<sup>2</sup>: Երկրորդ ձեռագիրը, որը արտագրված է 1618 թվականին, պահվում է Երևանի Մատենադարանում<sup>3</sup>: Ձեռագիրը թերի է, սկզբի մասից մի շարք հոգվածներ բացակայում են: Կա նաև երրորդ ձեռագիրը, որը պահվում է Վիեննայի Մխիթարյանների գրադարանում<sup>4</sup>: Հարություն Քյուրտ-

<sup>1</sup> St'us Assises d' Antioche, reproduites en français et publiées (par H. Alishan) au sixième centenaire de la mort de Sempad le conne'table, leur ancien traducteur arménien, Venise, 1876.

<sup>2</sup> Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. Ա, էջ 95:

<sup>3</sup> Մատենադարանի ձեռագիր № 487, էջ 5ր.:

<sup>4</sup> St'us Yakobus p. Dr. Daschian, Katalog der armenischen Handschriften in der Mechitaristen-Bibliothek Zu Wien, 1895, էջ 903—905:

յանը 1956 թվականին հրատարակեց լրացուցիչ նյութեր<sup>1</sup> մի ուրիշ ձեռագրից, որը լրացնում է այդ «Անսիզք Անտիոքայ»-ի ձեռագրերը:

Այսպիսով, Սմբատ Սպարապետի թարգմանության շնորհիվ կորստից փրկվել է միջնադարյան իրավագիտական այդ պատմական հուշարձանը: 1958 թվականին Երևանում հրատարակվեց «Անսիզք Անտիոքայ» գործի ուսուներեն թարգմանությունը, որը կատարել է հանգուցյալ Ա. Պապովյանը<sup>2</sup>: Անհրաժեշտ է նշել, որ դեռ մինչև հիմա ոչ մի ուսումնասիրություն չի նվիրված այդ իրավագիտական արժեքավոր գործին:

Ոմանք անգամ շփոթել են զրբի վերնագիրը, կարծելով, որ «Անսիզք Անտիոքայ»-ն ոչ թե զրբի վերնագիր է, այլ հեղինակի անուն-ազգանուն: Այսպես, օրինակ, Երևանի Պետական համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել «Матенадаран в его ценнейших уникумах» գրքույկը, որտեղ թվարկում է Մատենադարանում պահպանված հին և միջին դարերի մի շարք ձեռագրերի օտար հեղինակների անուն-ազգանունները: Այդ գրքույկում հիշատակվում է նաև «Անսիզք Անտիոքայ» զրբի վերնագիրը, բայց ոչ թե որպես զրբի վերնագիր, այլ որպես հեղինակի անուն և ազգանուն: Այսինքն, որ օտարազգի հեղինակների շարքին է պատկանում նաև «Асиза Антиохийского», այսինքն, Անտիոքեցի Ասիզը<sup>3</sup>:

<sup>1</sup> St'us «Բաղմավեպ», 1956, Հունվար—փետրվար:

<sup>2</sup> «Անսիզք Անտիոքայ» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 332—376, 1958):

<sup>3</sup> St'us «Матенадаран в его ценнейших уникумах», изд. Ереванского Государственного Университета, стр. 9.

ի՞նչ է իրենից ներկայացնում «Անսիզք Անտիոքայ» օրենք-  
ների ժողովածուն և ի՞նչ նշանակություն է ունեցել այն Սըմ-  
բատ Սպարապետի «Դատաստանագիրքը» կազմելու գործում:

Անտիոքի խաչակիր իշխանությունների կողմից ստեղծված  
այդ արժեքավոր իրավագիտական հուշարձանը համաշխար-  
հային իրավունքի պատմության համար ունի վերին աստի-  
ճանի կարևոր նշանակություն:

«Անսիզք Անտիոքայ» օրենքների գիրքը երկու մասից է:  
Առաջին մասը բաղկացած է 17 հոդվածից, երկրորդը՝ 21 հոդ-  
ված:

Ուսումնասիրելով «Անսիզք Անտիոքայ» օրենքների բո-  
վանդակությունը, նկատում ենք, որ առաջին մասում ար-  
ժարծվում են սենյորի ու վասալի իրավական հարաբերու-  
թյունները, ունեցվածքային, քրեական, սահմանային, ինչ-  
պես նաև դատարանին վերաբերող այլ հարցեր:

Երկրորդ մասը ընդգրկում է գատական-քաղաքացիական  
հարցեր՝ ընտանեկան, ժառանգական, ֆինանսական, ներքին  
և արտաքին առևտրի և այլ հարցերի վերաբերող հոդ-  
վածներ:

Թե ինչպիսիք է Սմբատ Սպարապետը ձեռք բերել և թարգ-  
մանել «Անսիզք Անտիոքայ» գործը, այդ մասին պատմում  
է ինքը Սմբատը «Անսիզք Անտիոքայ» գրքի առաջաբանում:  
Նա գրում է. «Այդ օրենքները, ես Սմբատս աստու ծառա,  
հայոց Գունդուստարս Կոստանդնի որդի և բարեպաշտ Հեթում  
թագավորի եղբայր և տեր Պապեոնի, խնդրեցի բարեշնորհ  
արնակից բարեկամ սիր Սիմոնից, Անտիոքի Գունդուստարից:  
Վերջինս ուներ այն տեքստը, որը պրինց Բոհեմոնտի օրոք  
գրավոր հաստատել էին սիր Պեո դը Ռավինդելը և սիր Թո-

մաս Մարշալը և Անտիոքի այլ իմաստուն ու գիտնական սի-  
նյորները: Այս (տեքստը) ստացել էր Քրիստոսի մոտ զնա-  
ցած հանգուցյալ հայր՝ սիր Մանուէլ Գունդուստարը իր հորից  
և նվիրել իր որդի սիր Սիմոնին, նա էլ իմ սիրո և խնդրանքով  
ինձ նվիրեց: Իսկ ես շարչարվեցի և այն թարգմանեցի հայե-  
րեն... Եվ երբ ես թարգմանեցի, կրկին ուղարկեցի Անտիոքի  
արքունիք և այն համեմատեցին տեքստի հետ և իրենց ձեռ-  
քով հաստատեցին, որ թարգմանությունը ստույգ է և բառ առ  
բառ համընկնում է: Այժմ ով ցանկանում է ղեկավարվել այդ  
օրենքներով, թող իմանա, որ սա Անտիոքի իսկական օրենք-  
ներն են»:

[«Խնդրեցի ևս Սմբատ ծառայ Աստուծոյ և Գունդուստապլ  
Հայոց, և որդի Կոստանդեայ և եղբայր բարեպաշտ թագա-  
տրին հայոց Հեթումը և տէր Պապաոսին, ի մեծազարմ իշ-  
խանաց իշխանէն և յարեան մերձաւորէն մերոյ ի Սիր Սիմոն  
յԱնտաքոյ Գունդուստապլէն: Եւ ինքն ուներ զոր ի Բրինց  
Պըմընդին ժամանակն Սիր Փէր Տ՛Րանդելին և Սիր Թումաս  
Մարաջախտն և այլ իմաստուն և գիտուն իշխանայքն Անտա-  
քոյ էին գրով հաստատել: Հանգուցեալն ի Քրիստոս Սիր  
Մանուէլ Գունդուստապլն իր հայրն էր առել ի նացմէ և իր որ-  
դոյն Սիր Սիմոնին պարգևել. և ինք վասն իմ սիրոյս հաւա-  
սիս ինձ պարգևեաց. և ես աշխատեցայ, և փոխեցի ի հայ  
լեզուս... և երբ փոխեցի ես՝ յուղարկեցի դարձեալ ի յԱնտա-  
քոյ դարպասն, որ ղիմընդղիմեցին և հաստատեցին իրենց  
ձեռնգրերովն և վկայութեամբն ու ստոյգ է և ըլորդ բան բա-  
նի: Եւ արդ որ կամի ճշմարտութեամբ ուղղել զԱնսիզս և զի-  
բաւունս, նայ այս է ըլորդ Անսիզն Անտաքոյ» Կ:

1 Մատենադարանի ձեռագիր, № 487, էջ 4:

Պատմական գրականություն մեջ գոյություն ունի այն կարծիքը, որ իբր թե Անսիզներն ավելի ուշ են թարգմանվել, քան գրվել է Սմբատի «Դատաստանագիրքը»: Այդ սխալ կարծիքին է պրոֆեսոր Գ. Միքայելյանը<sup>1</sup>: Նա գրում է՝ Սմբատը իր «Դատաստանագիրքը» գրել է 1264 թվականին, իսկ «Անսիզք Անտիոքայ» գիրքը թարգմանել է 1269 թվականին Մառի ճակատամարտից հետո<sup>2</sup>:

Նախ պետք է նշել, որ պրոֆ. Գ. Միքայելյանը Սմբատի «Դատաստանագիրքը» կազմելու տարեթիվը, որ ցույց է տալիս 1264 թվականը<sup>3</sup>, ճիշտ չէ: Սմբատը ինքն իր «Դատաստանագրքի» առաջաբանում ուղղակի նշում է, որ իր «Դատաստանագիրքը» գրել է «Ի թրականութեան Հայոց ՉԺԴ (714=1265) ամին՝ ի հայրապետութեան Տեառն Կոստանդնայ եւ ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ եւ որդոյ սորա Լեւոնին»<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է պրոֆ. Գ. Միքայելյանի այն կարծիքին, որ իբր թե Սմբատը «Անսիզք Անտիոքայ» օրենքները թարգմանել է 1266 թվականի պատերազմից հետո, այն նկատառումով, որ պատերազմում ֆեոդալ իշխանների որոշ մասը լքեց թագավորին, այդ օրենքներով ամրապնդի միապետությունը, այս ենթադրությունը պետք է համարել ոչ ճիշտ: Ինչու, որովհետև Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» գոյության ղեպքում այդպիսի նպատակով թարգմանության հարկ չէր զգացվի, քանի որ Սմբատի «Դատաստանագրքում»

միապետության վերաբերյալ հարկ եղած ձևակերպումներով օրենքներ շատ կան<sup>5</sup>:

Այստեղ, իհարկե, հետաքրքիր է որոշել թե երբ են թարգմանվել Սմբատի կողմից Անտիոքի Անսիզները: Գծախտաբար Սմբատը այդ մասին չի նշում: Ալիշանը Անսիզների թարգմանության իր առաջաբանում գրում է, թե Սմբատը այն թարգմանել է 1265 թվականից առաջ<sup>6</sup>: Նույնը կրկնում է նաև պրոֆ. Աճառյանը<sup>7</sup>, այսինքն Սմբատի Դատաստանագրքից առաջ:

Բայց թե՛ Ալիշանը և թե՛ Աճառյանը չեն փորձել ճշտելու «Անսիզք Անտիոքայ»-ի թարգմանության ժամանակը:

Պրոֆ. Խ. Սամուելյանը իր «Հին հայ իրավունքի պատմությունը» աշխատության մեջ նույնպես անզրադառնում է այդ հարցին և ընդհանրապես գտնում է, որ «Անսիզք Անտիոքայ» գործը Սմբատ Սպարապետի կողմից թարգմանվել է XIII դարի առաջին կեսին: Բայց դարձյալ չի ցույց տալիս թարգմանության ճիշտ թիվը: Որպեսզի այդ հարցը պարզվի, անհրաժեշտ է քննության առնել այն անձնավորությունների արած ժամանակը, որոնց հիշատակում է Սմբատ Սպարապետը իր թարգմանության առաջաբանում:

Սմբատ Սպարապետը Անսիզների իր առաջաբանում նշում է Անտիոքի Գուսդատար Խանվելի որդու սիր Սիմոնի անունը, որը Անսիզների ձեռագրի պատճենը նվիրել է Սըմբատին: Այդ օրենքները Սմբատին նվիրվել է Անտիոքի Բո-

<sup>1</sup> Г. Микаелян, ук. соч., стр. 269.

<sup>2</sup> Նույնը, էջ 284:

<sup>3</sup> Նույնը, էջ 262:

<sup>4</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 4:

<sup>5</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 8, 10:

<sup>6</sup> Տե՛ս «Assises d' Antioche», p. XIX:

<sup>7</sup> Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. 4, էջ 558:

հեմոնդ իշխանի տիրապետության ժամանակ: Սմբատի ժամանակաշրջանի Անտիոքի տիրող իշխաններից մեզ հայտնի են երկու Բոհեմոնդ: Մեկը՝ Բոհեմոնդ 4-րդը (1201—1225), մյուսը՝ Բոհեմոնդ 5-րդը (1235—1253): Մեզ հավանական է թվում, որ խոսքը այստեղ վերաբերում է Բոհեմոնդ 5-րդին, քանի որ Բոհեմոնդ 4-րդի տիրապետության ժամանակաշրջանում Սմբատը դեռ երեխա էր և չէր կարող Անտիոքի բարձրաստիճան իշխանների հետ մտերմություն ունենալ կամ բանակցություններ վարել:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Անտիոքի Անսիզները թարգմանված պիտի լինեն 1253 թվականից առաջ, այսինքն Բոհեմոնդ 5-րդ իշխանի տիրապետության ժամանակ: Կա նաև մի ուրիշ փաստ: Դա այն է, որ Սմբատը «Անսիզների» թարգմանության առաջաբանում հիշատակում է միայն Հեթում թագավորի անունը, իսկ իր «Դատաստանագրքի» առաջաբանում, որը գրված է 1265 թվականին, հիշատակվում է թե՛ Հեթումի և թե՛ նրա ավագ որդի Լևոն թագաժողովի անունը, որը քաղաքական ասպարեզ ելավ 1264 թվականից հետո: Վերջապես մեր ուսումնասիրությունից պարզվում է, որ Անսիզների շատ հողվածներ օգտագործված են Սմբատի կողմից իր «Դատաստանագրքը» կազմելիս:

Պրոֆ. Խ. Սամուելյանը կասկածանքով է խոսում Սմբատ Սպարապետի կատարած թարգմանության մասին, գրելով թե՛ «Ենթադրվում է, որ այդ օրենքների թարգմանիչը եղել է Սմբատ Սպարապետը»<sup>1</sup>: Շատ հավանական է, որ «Անսիզք Անտիոքայ» գրքի թարգմանության առաջաբանը չի ընկել

պրոֆ. Խ. Սամուելյանի ձեռքը, այլապես նա կանկածանքի չէր ենթարկի այն բացարձակ ճշմարտությունը, որ իրոք «Անսիզների» թարգմանողը Սմբատ Սպարապետն է եղել:

#### դ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐԷՆ»

Սմբատ Սպարապետի մատենագրական գործերի մեջ առանձնապես աչքի է ընկնում նրա «Դատաստանագրքը»:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» հայերեն տեքստերի հրատարակիչներ թե՛ Հովհաննեսյանը, թե՛ Շահնազարյանը և թե՛ Վիկտոր Լանգուան (վերջինս «Տարեգրքի» երկրորդ մասը թարգմանել է Ֆրանսերենի), իրենց հրատարակությունների ներածականում ոչ մի խոսք չեն գրել Սմբատի «Դատաստանագրքի» մասին:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» վերաբերյալ առաջին անգամ մեզ տեղեկություն է տալիս Պոլսի պատրիարքի փոխանորդ Հովհաննես Մկրյանը: Նա 1870 թվականին Մարաշի վանքում հրատարակվող «Յոյս» ամսագրում «Օրէնսգիրք և դատաստանագիրք մեր Թուրքիեաց» Հեթում և Լևոն թագավորների» խորագրով հողված է տպել, որտեղ գրում է. «Արդ՝ ես մինչև յայժմ չէի լսած և չեսած, որ ծանոթ եկեղեցական կանոնագրքէն և Մխիթար Գօշի Դատաստանագրքէն զատ, հայոց թագավարութեանց ժամանակ գործածուած ուրիշ մէկ օրինագիրք մը կեցած լինի: Ազգային պատմութեանց մէջ այսպիսի նշան մը տեսած չեմ»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Յոյս», ամսագիր րանսիրական, 1870, չորրորդ տարի, թիւ 48, էջ 67:

<sup>1</sup> Խ. Սամուելյան, Հին հայ Իրավունքի պատմությունը, հատ. 1, էջ 91:

Հովհաննես Մկրչանը շնայած առաջինը բարձր գնահատեց Սմբատի այդ գործը, բայց այն համարում է «Անսիզնե-րի» թարգմանությունը, գրելով. «օրենսգիրքը թարգմանու-թիւն ըլլալով այն «անսիզնեհէն», որ Անտիոքոյ գիտուն և իմաստուն իշխանքն էին գրով հաստատել»:

Ինչպես կտեսնենք հետագայում, Սմբատի «Դատաստա-նագիրքը» բոլորովին առանձին գործ է և ըստ բովանդակու-թյան տարբերվում է «Անսիզք Անտիոքայ»-ի օրենքներից: Հովհաննես Մկրչանը նման կարծիք հայտնելու ոչ մի հիմք չունի, քանի որ այդ երկու օրենսգրքերը թե՛ բովանդակու-թյամբ և թե՛ հոգվածների ձևակերպումներով խիստ տար-բերվում են միմյանցից:

Վահան Բաստամյանը Գոշի «Դատաստանագրքի» իր ընդ-արձակ առաջաբանում գրում է թե Կիլիկյան հայոց թագավո-րությունը «բաւականացաւ վարել իւր ներքին գործերը ժողո-վրդի իրաւաբանական սովորութիւններով, Մխիթար Գօշի համառօտացրած դատաստանագրքով և օտար պետութիւննե-րից, օրինակ՝ Անտիոքից վերցրած և հայերէն թարգմանած օրէնքներով, արտաքին առևտրական գործերի համար — առանձին դաշնագրութիւններով երոպական տէրութիւնների կամ վաճառականական ընկերութիւնների հետ, իսկ ընդհանուր պետական գործերի համար — արքայական հրովարտակնե-րով»<sup>1</sup>:

Վահան Բաստամյանի այն կարծիքը, թե Սմբատի «Դա-տաստանագիրքը» Գոշի «Դատաստանագրքի» համառոտու-

թյունն է, հետագայում կտեսնենք, որ այդ կարծիքը ևս ճիշտ չէ: Բացի այդ, Վահան Բաստամյանը կարծում է, թե Սմբա-տի «թարգմանված» Գոշի «Դատաստանագիրքը» օգտագործ-վում էր «ներքին» գործերի համար, իսկ ավելի բարձր դա-տարանների և արտաքին հարաբերությունների համար օգ-տագործվում էին ավելի «կատարելագործված» օրենքներ, այսինքն՝ Անտիոքի օրենքները: Նույն կարծիքին է նաև բա-նասեր Գ. Զարբհանյանը, որը իր «Հայկական հին դպրու-թիւն» գրքում այդ մասին գրում է. «Բացի Տարեգրոց և առ-քոյրն և քնռայլն գրած թղթերէն, Սմբատ ուրիշ երկու կա-րևոր և հետաքննական երկասիրութիւնք ալ թողած է. ասոնց-մէ մէկն է թարգմանութիւն Անսիզացն Անտիոքայ, և միւսն համառօտութիւն մը օրինաց և կարգաց՝ ծաղկաբաղ ի դա-տաստանագրոցն Մխիթարայ Գոշի և Բիզանդական օրինա-գրոց, որ արդեն ծանօթք էին յազգային թարգմանութեամբ կամբրոնացոյց»<sup>2</sup>:

Իսկ Մ. Օրմանյանը գտնում է, որ Սմբատի Օրենսգիրքը կազմված է 1265 թվին՝ Գոշի «Դատաստանագիրքը» և կամբ-րոնացու թարգմանած բիզանդական օրինագիրքը «կարգա-վորելով և համառոտելով»<sup>3</sup>:

Սմբատի «Դատաստանագիրքը» առաջին անգամ բանա-սիրության նյութ դարձնող Ղեվոնդ Հովնանյանը շնայած շատ բարձր է գնահատում Սմբատի գործը, հայտարարելով, որ «...Յերեւան ելաւ Մատեանս, որ կրնայ առանց շափազան-ցութեան նկատուիլ իբրեւ մի ի պատուական գոհարաց ոչ մի-

<sup>1</sup> Տե՛ս Մխիթար Գոշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, (Վահան Բաստամյանի ներածականը, էջ 53):

<sup>1</sup> Գ. Զարբհանյան, Հայկ. հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 774:  
<sup>2</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում Բ—մաս, էջ 1696:



այն ռամկօրէն, այլ նաեւ բովանդակ հայ գրականութեան», այնուամենայնիւ Գոշի և Սմբատի դատաստանագրքերից նույնանման հոգւածներ կողք-կողքի բերելով, նա ևս եղբակացնում է, թե Սմբատի գրվածքը հանդիսանում է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ռամկորեն թարգմանութիւնը<sup>1</sup>:

Սմբատի «Դատաստանագրք»-ով ավելի հանգամանորեն զբաղվել է գերմանական գիտնական Հ. Կարստը: Նա կազմել է Սմբատի «Դատաստանագրքի» գիտա-համեմատական տեքստը և այն գերմաներեն թարգմանութիւնը 1905 թվականին հրատարակել է Ստրասբուրգ քաղաքում «Sempadscher Kodex» վերնագրով<sup>2</sup>: Նա գրքի տողատակերին Գոշի «Դատաստանագրքից» հոգւածներ է տպագրել, որոնք նմանութիւն ունեն Սմբատի կազմած օրենքներին, դրանով ցանկանալով ապացուցել, որ Սմբատի «Դատաստանագրքը» Գոշի «Դատաստանագրքի» թարգմանութիւնն է:

Գտնվեցին նաև այնպիսիներ, որոնք աշխատում էին ընդհանրապէս ժխտել ոչ Ճիայն Սմբատի, այլև Գոշի «Դատաստանագրքի» նշանակութիւնը որպէս հայ իրավունքի պատմութիւն ուսումնասիրութիւն աղբյուրներ: Այդպիսի ժխտողներից մեկն էր նաև իրավաբանութիւն գոկտոր Արսեն Ղլտճյանը: Նա մեխանիկորեն կրկնելով այն, ինչ ասել են ուրիշները Սմբատի «Դատաստանագրքի» մասին, ժխտում է նաև Գոշի և Սմբատի դատաստանագրքերի կարևորութիւնը, որպէս հայ իրավունքի պատմութիւն արժեքավոր աղբյուր-

ների: Այսպէս, օրինակ՝ Արսեն Ղլտճյանը այդ հարցում բանավեճի մեջ մտնելով գերմանական գիտնական Քոլերի հետ, ուղղակի գրում է. «Քոլերը մատնանշել է, թե պետք է հայ սովորութի իրավունքն ու հայկական իրավունքի ազգային աղբյուրները նկատի առնվեն: Իսկ ես ձգտել եմ ցույց տալ, և այն ոչ առանց աջողութեան, որ զուտ հայկական աղբյուրների շարքում Գոշի և Սմբատի դատաստանագրքերը տեղ չունին բռնելու ու նոցա տվյալները իբր ազգային իրավունքի նիւթ ոչ կարելի է ընդունել, և ոչ էլ օգտագործել, առանց խիստ վերապահումների»<sup>3</sup>:

Այսպիսով, Արսեն Ղլտճյանը արժեքազրկում է ոչ միայն Սմբատի «Դատաստանագրքը», այլև Մխիթար Գոշինը, որոնք հայ ժողովրդի միջնադարյան իրավունքի արժեքավոր հուշարձաններ են և պատվավոր տեղ են զբաղում միջնադարյան իրավագիտութիւն համաշխարհային պատմութիւն մեջ:

Ձրանսիական հայագետ Մորգանը իր Hist. du peuple arm. աշխատութիւն մեջ գրում է, որ Սմբատը «Գոնհկացման ենթարկեց Մխիթար Գոշի «Դատաստանագրքը»<sup>4</sup>:

Ահա հիմնականում այն բոլոր հեղինակները ու նրանց տեսակետները, որոնք Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքը» համարում են ոչ թե ինքնուրույն կազմած օրենսգիրք, այլ թարգմանութիւն:

Սովետահայ պատմագրութիւն մեջ, ինչպէս վերը նշեցինք, տողերիս հեղինակն է առաջին անգամ Սմբատի «Դա-

<sup>1</sup> Յովհաննէս, Հետազոտութիւն նախնեաց ռամկորէնի վրայ, Վիեննա, 1897, էջ 185:

<sup>2</sup> Karst, Sempadscher Kodex aus dem XIII Jahrhundert, Strassburg, 1905.

<sup>3</sup> Ա. Ղլտճյան, Հայոց Հին իրավունք, Ալեքսանդրոպոլ, 1913, էջ 27:

<sup>4</sup> Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1919, p. 203—204.

տաստանագրքին» նվիրած հոգված հրատարակել<sup>1</sup>, որի նպատակն էր ցույց տալ Սմբատի աշխատության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի միջնադարյան իրավունքի պատմության մեջ, ժխտելով միաժամանակ նախասովետական շրջանում Սմբատի գործի վերաբերյալ տարածված այն հակադիտական տեսակետը, թե իբր այն ոչ թե ինքնուրույն, այլ թարգմանական գործ է: Առանց լրջորեն ուսումնասիրելու Սմբատի «Դատաստանագիրքը», նախասովետական շրջանի հայ պատմագրությունը թերագնահատել, սովերի տակ էր թողել հայ ժողովրդի բազմավաստակ գործչի՝ Սմբատ Սպարապետի ստեղծագործական ինքնուրույնությունը: Այդ հարցին մենք անդրադարձանք «Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» բնութագրման հարցի շուրջը» խորագրով մեր մի ուրիշ հոգվածում<sup>2</sup>: Ավելի հանգամանորեն այդ խնդիրը մենք լուսաբանեցինք 1958 թվականին Սմբատի «Դատաստանագիրք»-ի մեր ուսերեն թարգմանության առաջաբանում<sup>3</sup>:

Հարց է առաջ գալիս, ի՞նչ կովաններ ունեն բուրք նրանք, ովքեր պնդում են թե Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» ինքնուրույն ստեղծագործություն չէ, այլ թարգմանություն: Նրանց կովանները կրկուսն են:

Առաջին կովան: Մի քանի բանասերներ ելնելով Սմբատի «Դատաստանագրքի» առաջաբանում գրված «փոխեցի զսա»

<sup>1</sup> Ա. Գալստյան, Սմբատ Գունդսաբլի «Դատաստանագրք»-ի մասին, Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադ. հաս. գիտ. «Տեղեկագիր» № 2, Երևան, 1952, էջ 90—104:

<sup>2</sup> Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետի «Դատաստանագրք»-ի բնութագրման հարցի շուրջը, Հայկ. Պետական հեռակա մակ. ինստիտուտի գիտ. աշխատ. ժողովածու № 3, Երևան, 1956:

<sup>3</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 4:

արտահայտությունից, եզրակացնում են, թե Սմբատի «զսա» սաածը Գոշի «Դատաստանագրքին» է վերաբերում:

Երկրորդ կովան: Երկու դատաստանագրքերում որոշ հոգվածների նմանություններն են:

Այժմ տեսնենք, թե ո՞րքան լուրջ են այդ փաստարկները, և կարո՞ղ են արդյոք դրանք հիմք տալ պնդելու, թե Սմբատի «Դատաստանագիրքը» Գոշի «Դատաստանագրքի» «թարգմանություն» է և ոչ ինքնուրույն ստեղծագործություն:

Նախ անդրադառնանք «փոխեցի զսա» արտահայտությանը: Անշուշտ, այդ վկայությունը վերին աստիճանի ուշադրավ է: Իրոք, «Դատաստանագրքի» առաջաբանում գրված է.

«Բազում աշխատանուբ աշխատեցյալ ի դատաստանագիրքս ծերացեալ մտաւք, վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց, որ իսկի չէին ի հասկնալ, եւ ոչ յոգտել գայր: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ ի դժուարաբառ եւ յանհասկնալի գրոց ի մեր հնշտալուր եւ ի սովորական բառս»<sup>1</sup>:

Այս քաղվածքի մեջ հետաքրքրական են «այլակերպած», «դժուարաբառ», «որ իսկի չէին ի հասկնալ» ու «յանհասկնալի» և «յոգտել գայր» բառերը: Հարց է առաջ գալիս, արդյոք այդ արտահայտությունները կարո՞ղ են վերաբերել Գոշի «Դատաստանագրքին»: Իհարկե ո՛չ: Նախ՝ լեզվի տեսակետից. Գոշը նույնպես դասական գրաբար լեզվով չի գրել: Երկրորդը, Գոշի «Դատաստանագրքի» լեզուն Սմբատի համար «այլակերպած» և «յանհասկնալի» չէր կարող լինել, քանի որ

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 4:

ժամանակի տեսակետից այդ երկու հեղինակների ապրած ժամանակների հեռավորությունը բոլորովին էլ մեծ չէ: Գոչը մահացել է 1213 թվականին, շավարտելով իր «Գատաստանագիրքը», իսկ Սմբատը իր գործը ավարտել է 1265 թվականին: Ինչպես տեսնում ենք, տարբերությունը մոտ հիսուն տարի է: Ուրեմն պատմական այդքան կարճ ժամանակամիջոցում Գոչի «Գատաստանագիրքը», գրված մագաղաթի վրա, չէր կարող լինել ոչ «այլակերպած» և ոչ էլ «դժուարաբառ» ու «չյանհասկնալի»:

Բայց ի՞նչ է, ուրեմն, նկատի ունեցել Սմբատը գրելով «բազում աշխատութեամբ փոխեցի գառ»: Կարո՞ղ էր արդյոք նա իր ձեռքի տակ ունենալ իրավական այլ աղբյուրներ: Այո, կարող էր: Սմբատը այստեղ նկատի է ունեցել, անշուշտ, ինչ-որ իրավական աղբյուր: Մեր կարծիքով այդ իրավական աղբյուրը «Կանոնագիրք Հայոց»-ն է, որը Սմբատի «Գատաստանագրքի» հիմնական աղբյուրներից մեկն է: Փորձենք այս մեր կարծիքը հիմնավորել:

Նախ՝ ի՞նչ է իրենից ներկայացնում «Կանոնագիրք Հայոց»-ը: Դա հայ ժողովրդի ամենահնագույն իրավագիտական հուշարձանն է, որը բաղկացած է շուրջ 60 գլուխներից, մոտ 1500 կանոններով: Այդ Կանոնագիրքն իր մեջ ընդգրկում է օտար և ազգային, կրոնական և աշխարհիկ բովանդակությամբ զանազան կանոնախմբեր, հավաքված մի ընդհանուր ժողովածուի մեջ, որ կոչվում է «Կանոնագիրք Հայոց»: Այստեղ գրի են առնված ոչ միայն եկեղեցական կանոններ, այլև գերազանցապես աշխարհիկ օրենքներ: Այսպես, օրինակ, Շահապիվանի 447 թվականի կանոններում խոսվում է կաշառակերու-

թյան<sup>1</sup>, դրամ տոկոսով տալու<sup>2</sup>, գերեվարություն<sup>3</sup> և այլ խընդիրների մասին: Իսկ Ներսես կաթողիկոսի կանոններում կան կանոններ սեռական սանձարձակության, ապահարզանի, կենցաղալին այլանդակությունների մասին: Հովհան Մանդակունու կանոններում<sup>4</sup> կան ոչ միայն առանձին մտքեր, այլև հատուկ հոգվածներ, ինչպիսին են՝ «Վասն պոռնկաց», «Վասն սպանողաց», «Վասն արբեցողաց», «Վասն գողաց» և այլ: Ներսես կաթողիկոսին և Ներշապուհ Մամիկոնյան եպիսկոպոսին վերագրվող կանոնների մեջ կան բազմաթիվ հոգվածներ<sup>5</sup> վաճառականության, վաշխատության և այլ խնդիրների մասին: Շատ կանոններում խոսվում է զինվորական կարգ ու կանոնի, անգամ նրանց հանդերձանքի մասին և այլն: Իրոք, այսպիսի կանոնագիրքը ծառայում էր որպես դատաստանագիրք: Այս տեսակետից իրավացի է Ա. Մ. Գարագաշյանը, երբ գրում է որ «Կանոնագիրք Հայոց»-ը եղավ ոչ միայն հիմը երկրին օրենսդրութեան, այլև նոյն օրենսդրություն<sup>6</sup>: Այդ իրավագիտական հուշարձանը զարբեր շարունակ բազմաթիվ գրիչների կողմից արտագրվել և տարածվել է զանազան հայաբնակ վայրերում: Այդ կանոնագրքի օրինակներից մեկը անշուշտ եղել է նաև Կիլիկյան Հայաստանում: Մեր այս ենթադրությունը հաստատվում է Ներսես Լամբրոնացու հու-

<sup>1</sup> Կանոնագիրք Հայոց (խմբագրություն Ա. Ղևոնդյանի), Քիֆլիս, 1913, էջ 77:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 93:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>6</sup> Ա. Գարագաշյան, «Քննական պատմություն Հայոց», մաս Բ, Քիֆլիս, 1895, էջ 17:

նարենից Թարգմանած «Քաղաքային օրենքներ» գրքի առաջարանի հետևյալ խոսքերով. «...հուզեալ ընդ յարկղս գրոց կաթողիկոսարանին՝ ոչ դտաք սորին, բայց միայն ղկանոնականս, որ ի սուրբ հարցն ժողովելոց էր գրեալ»<sup>1</sup>, այսինքն, կաթողիկոսի գրապահոցը ստուգելիս ոչ մի օրենքի գիրք չեն գտել, բացի «Կանոնագրքից»:

Նույն կամբրոնացու մի ուրիշ վկայությունից երևում է, որ իրոք, Կիլիկյան Հայաստանում ուրիշ հայերեն դատաստանագիրք չի եղել: Կիլիկյան հայերը, վկայում է կամբրոնացին, «Ոչ ունեին գիրս որով ընտրեսցին իրաւունս, յոր այլոց աղգաց տեսանէին»: Այսինքն, Կիլիկիայի հայկական Թագավորությունը չի ունեցել իրեն սեփական օրենսգրքերը, այլ հարկադրված էր ուրիշ պետությունների օրենքներով ղեկավարվել: Եվ վերջապես, եթե Կիլիկյան Հայաստանում ուրիշ դատաստանագիրք կամ դատական օրենքներ լինեին, ապա Ներսես կամբրոնացին «Քաղաքային օրենք» և «Զինվորական օրենք»<sup>2</sup> իրավագիտական գործերը հունարենից չէր Թարգմանի հայերենի: Բացի այդ, 1243 թվականին Սսի ժողովի կանոնների մեջ օգտագործված են «Կանոնագիրք Հայոց»-ից Գրիգոր Լուսավորչի, Հովհան Օձնեցու<sup>3</sup> և այլոց կանոնները: Վերջապես, Կոստանդինի «Սահմանք»-ում ասված է, որ այդ «կանոնները գրեցի ի կանոնաց գրոց»<sup>4</sup>: Այսինքն, ուզում է

1 Կամբրոնացի Ն., «Քաղաքային օրենք» Պարիզ, 1907, էջ 5:

2 Կամբրոնացի Ն., «Զինվորական օրենք», տե՛ս «Ելումայ», 1909, հատ.

3-րդ:

3 Մատենադարանի ձեռագիր № 477, էջ 168ա:

4 Կ. Հովսեփյան, Զագավանից ժողովը, «Շողակաթ», Հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 45:

ասել, որ կանոնները կազմելիս օգտագործել է «Կանոնագիրք Հայոց»-ը: Այս բոլոր փաստերը պերճախոս կերպով հաստատում են, որ իրոք «Կանոնագիրք Հայոց»-ը օգտագործվել է Կիլիկյան Հայաստանում: Ինչ վերաբերում է Սմբատի այն վկայությանը, որ իր ձեռքի տակ եղած գիրքը շատ «հնամաշ» ու «այլակերպած» է եղել և ոչ «յօգտել զայր», շատ հավանական է, որ Սմբատի ձեռքում եղել է «Կանոնագիրք Հայոց»-ի հնագույն օրինակներից մեկը, որից գծվարությամբ է օգտվել: Այն հանգամանքը, որ Կանոնագրքի հնագույն օրինակներից հասել են Սմբատին, դա երևում է մեզ հասած «Կանոնագրքի» մի քանի ձեռագրերից: Իրոք, Կանոնագրքի առանձին օրինակներ դարերի ընթացքում ձեռքից ձեռք անցնելով քայքայվել, անընթեռնելի են դարձել: Այսպես, օրինակ, Մատենադարանի № 6496 ձեռագիր «Կանոնագրքի» գրիչը տրտնջում է իր ձեռքի տակ եղած «Կանոնագրքի» հնության ու մաշվածության առթիվ: Նա թվարկելով Կանոնագրքի թերությունները, գրում է. «...հինգերորդ... հին ամենևին եղծած, վեցերորդ՝ քրթեցն խառն, և յոթերորդ՝ կանոնք խառնաբերքոչ էր»<sup>1</sup>:

Սմբատի ժամանակակից այս գրչի վկայությունը հաստատում է որ իրոք, այդպիսի մի «Կանոնագրքի» «հնամաշ» ձեռագրի տեքստը եղած կլիներ Սմբատի ձեռքում, որը նույնպես եղել է անընթեռնելի և «չայնհասկնալի» հնագույն օրենքներից մեկը: Բայց կարող են ասել, որ «Կանոնագրքի» հետ միասին Սմբատն ունեցել է նաև Գոշի «Գատաստանագիրքը»: Գա նույնպես հավանական է: Բայց պիտի նշել, որ Սմբատի

1 Մատենադարանի ձեռագիր № 6496, էջ 222բ:

ձեռքի տակ եղածը կլինենր ոչ թե Բաստամյանի հրատարակած տեքստը, այլ Գոշի «Դատաստանագրքի» մի այլ ձեռագիր, որը չի ունեցել այն ծավալը, որ մեզ ներկայացնում է Բաստամյանը:

Նախնական ձեռագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Գոշի XIII դարի ձեռագիրը ունեցել է մոտավորապես 174 հոդված և ծավալով մոտ երեք անգամ փոքր է, քան այն, որ ներկայումս հրատարակել է Բաստամյանը: Գոշի «Դատաստանագիրքը» XVII—XVIII դարերում հեղեղվել է զանազան եկեղեցական ու շշխարհիկ կանոններով: Այդ է պատճառը, որ ոմանք ոչ իրավացիորեն մերժում են Գոշի «Դատաստանագիրքը», համարելով այն «արժեքազուրկ», «ոնցիպցիական» և այլն:

Եթե վաճան Բաստամյանը ծայրահեղություն մեջ ընկնելով, Գոշի «Դատաստանագրքի» գնահատման հարցում դրսևում է, որ «Հայկական պետությունը ո՛չ Մխիթար Գոշից առաջ և ո՛չ նորանից յետոյ շունչը իւր սեփական ազգային օրէնագիրք և դատաստանագիրք իբրև ժողովածու հայկական հին և նոր օրէնքների»<sup>1</sup>, ապա Ա. Մ. Գարագաշյանը բոլորովին հակառակ, արժեքազրկում է Գոշի «Դատաստանագիրքը», ասելով, որ «Գրուած մը ԺԲ դարէն յանուն Մխիթարայ Գոշի՛ ոչ այլ ինչ է, եթե ոչ մեծաւ մասամբ քաղուած սահմանադրութեանց գրոյն առաքելական կանոնաց և եկեղեցական ժողովոց և շարժեր իսկ Դատաստանագիր անունը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Յառաջաբանութիւն, էջ 62:

<sup>2</sup> Գարագաշեան Ա. Մ., «Քննական պատմություն Հայոց», մաս Բ, էջ 17: (Ընդգծումը մերն է):

նույն ձևով է արտահայտվում Բենիամին Հարությունյանը, ասելով, թե միակ իրավաբանական կոդեքսը, եթե միայն կարելի է այս անվանել օրենքների մի անսխառն ժողովածու, այդ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»-ն է XIII դարի սկզբին գրած...»<sup>1</sup>:

Պրոֆ. Խ. Սամուելյանը խոսելով երկու դատաստանագրքերի մասին՝ գտնում է, որ «Մինչդեռ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հիմնականում հանդիսանում է ոնցիպցիական գրավոր և մասամբ սովորութական իրավունքների տարրերից շարահյուսված օրենսգիրք, ընդհակառակ Սմբատ Գունդստարլի Դատաստանագիրքն իր վերամշակված նյութով ներկայացնում է թեև ազգային, բայց տեղական, որոշ երկրային իրավունք»<sup>2</sup>: Իսկ Օրմանյանը գտնում է, որ Գոշի «Դատաստանագիրքը» «Մինչև այսօր ալ մեր եկեղեցւոյն համար ընտրելագոյն կանոնագիրքն է»<sup>3</sup>: Ըստ Օրմանյանի դուրս է գալիս, որ Գոշի գործը ոչ թե դատաստանագիրք է, այլ կանոնագիրք, որը իհարկե ճիշտ չէ:

Այսպիսով, ինչպես ասացինք, հիմք ընդունելով Սմբատի «փոխեցի գրա» — արտահայտությունը, հանգել են այն եզրակացություն, թե դա նշանակում է Սմբատը թարգմանել է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», չի համապատասխանում իրականությանը: Չէ՞ որ նույն այդ դատաստանագրքում Սմբատը բազմաթիվ առիթներով ուղղակի գրում է, որ այդ

<sup>1</sup> Բ. Հարությունյան, Feod-ին և beneficium-ին համապատասխանող տերմինները հայ միջնադարյան գրականության մեջ: («Տեղեկագիր», Հայկ. ՍՍՌ ԳԱ, հասարակական գիտությունների, № 12, 1958, էջ 87):

<sup>2</sup> Սամուելյան, հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, էջ 94:

<sup>3</sup> Օրմանյան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1571:

գիրքը ինքն է գրել: Ինչպե՞ս կարելի է կառչել միայն այդ մի արտահայտությունից և հանգել սխալ եզրակացությունների: Նախ «փոխեցի» կարող է նշանակել նաև «հորինեցի», «կազմեցի» և «շարադրեցի»: Միջին դարերում նման արտահայտություններ շատ են հանդիպում:

Տեսնենք թե Սմբատը շունի՞ որևէ ուրիշ վկայություն իր «Դատաստանագրքի» մասին: Նա բազմաթիվ հոգովածներում այդ մասին ուղղակի գրում է. «Նա զեղ որ գրեցաք»<sup>1</sup>: ԾՁԶ հոգովածի վերջում ասված է. «Ձոր այն ենք գրել»<sup>2</sup>: ԾՂԸ հոգովածում՝ «Եւ զայս իրաւամբք գրեմք»<sup>3</sup>: ԻԱ հոգովածում՝ «Բայց այնչաք զհնազանդութիւն գրեցաք»<sup>4</sup>: «Բայց մեք զոր կարցաք ճշմարտել յարինացն՝ նա այս է. եւ թող այս հաստատուն մնայ»<sup>5</sup>, «Նամաւան դրել ենք ի յառաջ—եւ այս եւ այն»<sup>6</sup>: ԼԳ հոգովածում՝ «բայց այժմ զվաներոյ սահմանն, համառատեցաք եւ գրեցաք»<sup>7</sup>, «յայս տեղս չկարացի ես գրաւոս Սմբատըս զինչ սուրբն Սահակ գրել էր ի հուս արինաւր... Թէ զայն զամէնն գրել էի՝ նա կարի շատ էր լսել: Բայց զայսչաքս պատեհ համարեցայ գրել»<sup>8</sup>: ՍԸ հոգովածում ասված է. «տես ի յերեսուն գլուխն ի սուրբ Գրիգոր Լուսաւորչին,— զի ես Սմբատ սպարապետս փնտոեցի ի կանոնքն եւ գտայ, որ

գրել էր զայս: ԼԳ հոգովածում գրված է. «Ամա ով ուզէ որ ուանի՞ նա թող անտի ուանի. զի մեք յայս կանոնս չհամարձակեցաք այլ ինչ գրել: Բայց ինձ Սմբատայ՝ ծառայիս Քրիստոսի՝ յոյժ հարկ եղև յայս տեղիս գտնուլ զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ սահմանն, եւ անտի ճշմարտեցի զուղղութիւն սահմանիս եւ զայս անտի գրեցաք համառատ»<sup>2</sup>: ԻՆչպիսի համեստություն, ո՞րպիսի բարեխղճություն ղեպի իր գործը և ղեպի այն աղբյուրները, որոնցից նա օգտվել է. և այս բոլորից հետո միանգամայն անհիմն է պնդել, թե Սմբատը իրը թաքցնում է իր օգտագործած աղբյուրները. այդ առնվազն անբարեխղճություն է:

Երկրորդ կովանի՞ երկու դատաստանագրքերի որոշ հոգովածների նմանություն մասին:

Ինչպես Ղ. Հովնանյանը իր «Հետազոտութիւնք նախնեաց Թամկորենի վրայ», արևպես էլ Հ. Կարստը «Sempadscher Kodex» գրքերում բերում են Գոշի և Սմբատի դատաստանագրքից իրար նման հոգովածներ, որպեսզի ապացուցեն, որ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը ոչ թե ինքնուրույն գործ է, այլ թարգմանություն: Այդ նմանությունները, մեր կարծիքով, պետք է բացատրել նրանով, որ երկու հեղինակներն էլ իրենց նյութերը վերցրել են միևնույն աղբյուրներից: Այդ աղբյուրներից մեկը Մովսիսական օրենքներն են, որոնցից օգտվել են թե՛ Մխիթար Գոշը և թե՛ Սմբատ Սպարապետը: Մեր այս կարծիքը հաստատելու համար բերենք մի քանի փաստեր:

1 Սմբատ, Դատաստանագիրք, էջ 165:

2 Նույնը, էջ 159:

3 Նույնը, էջ 170:

4 Նույնը, էջ 27:

5 Նույնը, էջ 172:

6 Նույնը, էջ 132:

7 Նույնը, էջ 39:

8 Նույնը, էջ 41:

1 Սմբատ, Դատաստանագիրք, էջ 62:

2 Նույնը, էջ 36:

Մովսիսական օրենքների ի՞նչ հոգւածում ասված է, եթե մեկին վնաս պատճառեն, ապա անձի փոխարեն անձը դնի, աչքի փոխարեն աչքը, ձեռքի փոխարեն ձեռքը, ոտքի փոխարեն ոտքը և այլն:

«Ապա թէ կերպարանեալ իցէ,— ասված է աստվածաշնչի մեջ,— տացէ անձն ընդ անձն, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ ոտին, խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածոյ»<sup>1</sup>:

### ԳՈՇ

«Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ ոտին, խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածոյ:

Եւ այս դատաստան աստուածային շնորհօք անտարանին տուղանօք վճարեսցի ըստ քանականի զնոյ արեանն համեմատեալ Մակայն յառաւելն եւ ի նուազն ի զգալութիւնն քննութիւն լիցի եւ յանդաման եւ ի գործան, եւ ի բաժանումըն իւրաքանչիւր յանգաման եւ ի զգալութիւնն քան եւ վեց դահեկան եւ վեց դահեկան ու կէս դանկ, գարի պակաս»<sup>2</sup>:

### ՍՄՐԱՍ

«Վասն, որ մարդ զմարդ ծեծէ կամ վիրաւորէ, կու հրամայէ արէնքս, որ ական ընդ ական լինի, եւ ատամն ընդ ատաման, եւ ձեռք ընդ ձեռաց, եւ վէր ընդ վիրի. վասն զի հետն հրամայածն այս է՝ թէ զինչ քեզ պեղծ է, զոքոք ընկերին մի՛ առներ, եւ Քրիստոս զհինն ի նորս վերանորոգեց, թէ մի՛ առնէք ումք շար փոխանակ շարի:

Ամ մի այնչէր. ու թէ այնէ, որ զայս՝ նա դատարոք արինաբ զնոյն պարտին արբուցանել անազացն: Բայց թէ ի զին հանեն դատարոք զքշտածին կամաք զիբ դարկան՝ նա թէ կոտորած զազված կենայ՝ զինչ ու լինի, կամ ակուայ ձգած, նա ԻԶ մթխալ ոսկի զեկան:

է զինն՝ յիստակ ոսկի: Եւ թէ զարկըն մարդոյ ի խալապայն, որ պեղծ զարկան ունայ, եւ հետ այնոր տեսուն իսկի որ զարկածն ելնէ ի շուրջ կու գայ՝ նա թէ այլ յիտեմեկն, նա ելած է քշտաւոյն ի մահուն պարտուցն ի դարպակ եւ ընկած է ի յեկեղեցուցն պարտն եւ ի յապաշխարութիւն, որ քաւէ. ապա զարկուցն կարէ առնուլ դարպասն տուղանք, եւ զշեղզինն ու զքշչկիրոյն կամ ի յազոն տայ, կամ ի հոգին: Եւ այլ մանտր մանտր ծեծերն՝ որ լինեն կապոյտ կամ անարգանք կամ քաշել ուժով նա կու հրամայէ արենքս որ այնոր վճարն ծեծնաք եւ բով, լինի հայնց որ հանի իրաւանց տէրն՝ ու ինք խրատվի, որ այլ շայնէ խումբութիւն»<sup>3</sup>:

Այս երկու հոգւածների համեմատութիւնից նկատվում է, որ նախ՝ ծավալի տեսակետից Սմբատի «Դատաստանագրքի» բերած հոգւածը երկու ու կես անգամ շատ է, քան այն, որ Գոշը ունի իր «Դատաստանագրքում»: Երկրորդ՝ կարևոր հանգամանքը այն է, որ այդ երկու հոգւածների բովանդակութիւնը բավականին տարբերվում է: Ինչպես տեսնում ենք, Մխիթար Գոշը անփոփոխ արտագրելով Մովսիսական օրենքի Ելից բաժնի ԻԱ զլխի 24 կանոնը, վերջում ավելացնում է միայն այն, որ սպանութիւն կատարելու դեպքում հարկա-

<sup>1</sup> Մովսիսական օրենք, Ելից, ԻԱ, 24, 25:

<sup>2</sup> Գոշ, Դատաստանագրք, գլ. ԻԹ, էջ 342:

<sup>3</sup> Սմբատ, Դատաստանագրք, գլ. ԸԳԶ, էջ 144—145:

վոր է վճարել քսանվեց դահեկան և կես դանկ: Սմբատի մոտ նույնպես օգտագործված է մովսիսական այդ օրենքը, բայց ոչ թե բառացի, այլ զարգացնելով ու հարստացնելով այն: Նա այնտեղ մի շարք նոր խնդիրներ է արժարժում, որոնք բոլորովին բացակայում են թե՛ մովսիսականում և թե՛ Գոշի «Դատաստանագրքում»: Այսպես օրինակ՝ Սմբատը բացատրում է զանազան հանցագործությունների նկատմամբ նախատեսված պատժի շափերը ու տուգանքի ենթարկելու մեթոդները՝ թե ո՛ր դեպքում տվյալ հանցագործին կարելի է դատի հանձնել և ո՛ր դեպքում գործը հանձնել եկեղեցուն՝ ապաշխարություն կատարելու: Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ «Թարգմանություն» և ոչ էլ «համառոտություն» մասին խոսք լինել չի կարող:

Թերևե՛ք մի ուրիշ փաստ:

Բանասիրական մեր ուսումնասիրություններից պարզվում է, որ երկու դատաստանագրքերի համար էլ հիմնական աղբյուրներից մեկը եղել է «Կանոնագիրք Հայոց»-ը, որից առատ նյութեր են բաղել թե՛ Գոշը և թե՛ Սմբատը: Մեր կարծիքը հաստատելու համար այստեղ ևս կրեթենք «Կանոնագիրք Հայոց»-ի մի քանի հոդվածներ, որոնք օգտագործված են երկու հեղինակների կողմից, և զուգահեռ, կողք-կողքի դնելով, փորձենք ապացուցել մեր դրույթը: Այսպես, օրինակ, Գանգրայի ժողովի ժե կանոնում ասված է, որ եթե հայրը հող չտանի իր որդու խնամքի համար, և շափահաս դառնալուց հետո պայմաններ չստեղծի նրա ինքնուրույն ապրելու համար, ապա նա ենթակա է դատապարտման<sup>1</sup>:

«Ոյք հարկանեն թողուն զորդիս իւրեանց և ոչ սնուցանեն և որչափ ձեռնհաս իցեն, ոչ փոյթ առնիցեն վասն աստուծոյ կարգին և սննդեանն մինչև ի կատարմանն հասակին, այլ որպեսզի պատճառս պահոց և վանականութեան արհամարիցէ և անփոյթ առնիցէ, նզովեալ լիցի»:

### ԳՈՇ

«Ոյք հարկանեն թողուն զորդիս իւրեանց և ոչ սնուցանեն և որչափ ձեռնհաս իցեն ոչ փոյթ առնիցեն վասն ըստ Աստուծոյ կարգին և սննդեանն մինչև ի կատարմանն հասակի, այլ որպէս թէ ի պատճառս պահոց և վանականութեան արհամարհիցէ և անփոյթ առնիցէ, նզովեալ լիցի»:

Եւ զայս սահման կանոնի թէպէտ և յաղագս աղանդոյն կարծեմք սաստի լինել, որք զանձինս սուրբս քարոզէին և բազում նորածնութիւնս առնէին, որպես վաւրն պտղոյ կեկեղեցոյ և այլոց, այլ սակայն աստուածային գրոց հրաման է ըստ կա՛մաց Աստուծոյ սնուցանել զորդիս, զի մի՛ հեօսացին յԱստուծոյ օրինացն: Եւ թէպէտ ինքեանք այ՛որքք կարծին մերձատր լինել Աստուծոյ, դատաստանաւ է որոշելն, զի պատճառն եղեն ձեռնոցն հեռանալ ի Տեառնէ՛ս:

### ՍՄԲԱՏ

«Այլվայ կու կրկնաբանէ արէնքս և կու պնդէ, որ այն հայրն՝ որ շան պէս զիւր միջաց բերած որդիքն ուրանայ, և շնուցանէ ու ի շափ հասակի բերէ, և ապա արէնութեամբ բաժնէ լիբմէն, հայնց որ կարենան ապրել՝ նա դատի յԱստուծոյ»:

Եւ այն որդին որ զսնուցանալ և զգարմանաւ հայրն ուրանայ, և թողու զինք, ու առանց արհնութեան և առանց կամաց հարն առ այլք երթայ՝ նա այլ խիստ այն է անիծած յԱստուծոյ և յարիկաց: Զի դրեալ է յարկնսն, որ՝ զեռ թէ որդին արհամարհէ զհայրն և ի յուխտ և կամ աստուածապաշտութեան կարգ երթայ՝ առանց հարն հրամանացն՝ նա նզոված է յԱստուծոյ և յարիկացս: Զի թէպէտ և Քրիստոս հրամայեաց թէ՛ որ ոք եթող զհայր կամ զմայր, և զայն որ ի կարգի՛ բայց կու հրամայէ արէնքս որ զէդ ինք Քրիստոս

<sup>1</sup> Մատենագարանի, ձեռագիր № 4631, էջ 70ա:



հար կամաւ արար զինչ եւ արար յերկրի՝ նույնպէս եւ որդին պատե՛հ է որ զինչ այնէ՝ հարն կամաւ արար այնէ. թէ ոչ՝ նա չէ ընդունելի առաջի Աստուծոյ եւ նշոված է»<sup>1</sup>:

Այս երկու հոգիվածները բովանդակութիւնից երևում է, որ այստեղ կա միայն ընդհանուր նմանութիւն. այսինքն, այն, որ երկու հեղինակներն ել խոսում են ծնողի զեպի իր որդին ունեցած պարտավորութիւն մասին: Բայց երբ խորը վերլուծութիւն ենք ենթարկում, պարզվում է, որ Գոշը իր հոգիվածում կանգ է առնում աղանդավորների կողմից զրկած օրենքների մասին, եկեղեցուն տրվելիք հարկերի («պտուղ») և այլ պարտավորութիւնների մասին, որոնք անգամ նյութի հետ չեն առնչվում: Իսկ Սմբատը բոլորովին այլ կերպ է շարադրում իր հոգիվածը: Նա ոչ թէ Գոշի պէս բառ առ բառ արտագրել է Գանգրայի ժողովի ժԾ կանոնը, այլ այդ կանոնի հիման վրա զարգացնում և ստեղծում է բոլորովին նոր օրենք: Նա նույն միտքը շարադրել է իր խոսքերով, նոր որակ տալով հոգիվածին: Եթէ Գոշը սահմանում է միայն ծնողի զեպի անչափահաս որդին ունեցած պարտականութիւնը, ապա Սմբատը այն լրացնում է չափահաս որդու զեպի ծնողը ունենալիք պարտականութիւնը:

Նիկիայի ժողովի ընդունած կանոնների 5-րդ կանոնում ասված է, որ եթէ հոգևորականին բանադրում են, ապա ոչ

ոք իրավունք չունի նրան բանադրանքից ազատելու, բացի այն վարդապետից, որը նրան բանադրել է<sup>2</sup>:

Գոշը այդ հոգիվածը, ինչպէս միշտ, վերցնում է անփոփոխ<sup>3</sup>: Իսկ Սմբատը զարգացնելով, նույն հոգիվածը տարածում է ոչ միայն կրոնավորների, այլև աշխարհականների վրա, ասելով. «նոյնպէս եւ թէ աշխարհական լինի բանադրած»<sup>4</sup>:

Գանգրայի ժողովի ԻԱ կանոնում խոսվում է կրոնական ծեսերը խախտողների նկատմամբ պատիժ սահմանելու մասին<sup>5</sup>: Գոշը արտագրելով այդ հոգիվածը՝ ավելացնում է, որ թող իմանան հույները և վրացիները Գանգրայի ժողովի պատը պահելու կարգի մասին որոշումները<sup>6</sup>: Սմբատի մոտ ոչ «վրացի» կա, ոչ «հույն»<sup>7</sup>: Ապա ո՞րն է այստեղ թարգմանութիւնը:

Քերենք մի ուրիշ փաստ: Մեր երկու հեղինակներն էլ հատուկ հոգիված ունեն կտակի վերաբերյալ: Գոշը գտնում է, որ անհրաժեշտ է կտակ կազմել հիվանդութիւնից երեք օր հետո. «զկնի երեք ւաւուրց հիւանդութեան կոշիցէ հիւանդացեալն... արասցէ կտակն»<sup>8</sup>: Սմբատը անհրաժեշտ պայման է համարում հիվանդի գիտակցական վիճակը: Բացի դա, Սմբատի մոտ կա մի կարևոր կետ, որը չունի Գոշը: Այն, որ

1 Մատենադարանի ձեռագիր, № 4631, էջ 49ա:

2 Գոշ, Գատաստանագիրք, էջ 145:

3 Սմբատ, Գատաստանագիրք, էջ 59:

4 Մատենադարանի ձեռագիր № 477, էջ 71ա:

5 Գոշ, Գատաստանագիրք, էջ 164—165:

6 Սմբատ, Գատաստանագիրք, էջ 80:

7 Գոշ, Գատաստանագիրք, էջ 94:

1 Սմբատ, Գատաստանագիրք, գլ. ԺԻԱ, էջ 113—114:

եթե հիվանդը գյուղական վայրումն է դտնվում և այնտեղ չկա նոտար, ապա կտակը կազմելու իրավունքը վերապահում է գյուղական բահանային. «Մինչդեռ հիւանդն աղէկ ուննայ զիր խելքն,— գրում է Սմբատը,— նա կոչէ զիր ծանաթիքն և զնոմիկոսն, և թէ գեղ լինայ նայ զգեղջին երէցն և երեք վկայով գրել տայ զիր իրքն»<sup>1</sup>:

Երկու դատաստանագրքերումն էլ խոսվում է ամուսինների գերի ընկնելու մասին: Այդ հոդվածը Դվինի 5-րդ ժողովի է՞ր կանոնն է: Գոչը այդ հոդվածը արտագրել է անփոփոխ, Սմբատը նույնպես օգտագործել է այդ հոդվածը, բայց այն տարբերութեամբ, որ խոսելով կնոջ պարտականութիւնների մասին նրա ամուսնու բացակայութեան դեպքում, միաժամանակ խնդիր է դնում, որ կինը գերի ընկնելու դեպքում ամուսինը նույնպես պարտավոր է 7 տարի սպասել: «Նոյնպէս թէ զկնիկն տանին, նա այրիկն համբերէ (7 տարի) ու չհամբերէ՝ նա նուն պատիժ է»<sup>2</sup>:

Սմբատի «Դատաստանագրքում» կան շատ հոդվածներ, որ չկան Գոչի մոտ: Օրինակ՝ «Տնփեսայութեան» վերաբերյալ օրենքը: Ա. Ղլտճյանը դեռ 1913 թվականին անդրադառնալով այդ հարցին՝ գտնում էր, որ տնփեսայութիւնը «Հայ ժողովրդի կյանքի մեջ խոր արմատներ գցած մի հիմնարկութիւն է և գործում է Հայաստանում»<sup>3</sup>:

Կան նաև այնպիսի հոդվածներ, որ երկու՞ դատաստա-

նագրքումն էլ օգտագործված են, բայց բոլորովին տարբեր առումներով<sup>4</sup>:

Վերցնենք թեկուզ գետի ջրի օգտագործման վերաբերյալ հոդվածը: Երկու հեղինակների մոտ էլ կա այդ հոդվածը: Գոչը այդ մասին գրում է. «Գետք ուտի ակն ելանէ նոցա է և ոչ առ ուր հասանեն»<sup>5</sup>: Սմբատը ուղղակի գրում է. «Եւ ջուր հասնել ի գետոց ջրելոյ կամ ջաղցնոյ՝ չկարէ որ արգելու կամ ասել թե՛ սինառուս իմ է, մի՛ հանել ջուր. քանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամէն մարդոյ գետններ ի յիր հողն և շինել զինչ իւր պիտենայ»<sup>6</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ դարձյալ չի կարող թարգմանութեան մասին խոսք լինել:

Բերենք ևս մի հոդված: Մովսիսական օրենքներում ասված է, որ եթե մեկի արտը կամ այգին վնասեն, ապա փոխարեն կարելի է հատուցել «զընտիր կողմն անդոյ իւրոյ և զընտիր կողմն այգւոյ իւրոյ տուգանեսցի»<sup>4</sup>: Սմբատը զրտնում է, որ նման դեպքում վնասը չափել չվանով և ըստ այնմ հատուցել: Սմբատի խոսքով ասած՝ «չափին շուանով զկերածըն»: Իսկ եթե վնաս տվողը ոչ արտ ունի և ոչ այգի, ապա ինչպե՞ս վնասը հատուցել: Այդ հարցի պատասխանը թե՛ Մովսիսականում և թե՛ Գոչի մոտ չկա: Այդ հարցի պատասխանը տալիս է միայն Սմբատը: Նա գրում է. «զղննն դեկան վճարել», այսինքն, վնասն հատուցել դրամով»<sup>5</sup>:

Սմբատի «Դատաստանագրքի» հետևյալ հոդվածները ևս

1 Սմբատ, Դատաստանագիրք, էջ 130:

2 Նույն տեղում, էջ 48:

3 Ղլտճյան Ա. Հայոց Հին իրաւունք, Ալեքսանդրոպոլ, 1913, էջ 27:

4 Գոչ, Դատաստանագիրք, էջ 352:

1 Սմբատ, Դատաստանագիրք, էջ 135:

2 Գոչ, Դատաստանագիրք, էջ 327, ԺԸ:

3 Սմբատ, Դատաստանագիրք, էջ 16:

4 Մովսիսական օրենք, Ելից, ԻՐ. 5:

5 Սմբատ, Դատաստանագիրք, էջ 135:

Գոշի մոտ շկան, օրինակ՝ «Վասն որ շարկու յիշվէ ու իրք տանի (հող. ՃԻԹ), վասն հրձգութեան» (ՃԼ), «Վասն խե— ու պեղծ ալրկանն», «Եթէ խարվի որ ու թուրքանայ» (Ղ), «Վասն որ տառպիլ մարդոյ ուժ այնէ» և այլն:

Սմբատի «Դատաստանագրքի» մեր հրատարակութեան 36 էջից մինչև 47-րդ էջը եղած բոլոր հոդվածները Գոշի «Դատաստանագրքում» չկան:

Վերջապես Սմբատ Սպարապետը չի օգտագործել Գոշի «Դատաստանագրքի» «Նախադրութիւնը»: Ինչպես հայտնի է, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» բաղկացած է երեք մասից. ա) Նախադրութիւն, բ) Եկեղեցական կանոնք, գ) Աշխարհական հոդվածներ: Անհրաժեշտ է նշել, որ այս երեք բաժիններից Գոշի «Դատաստանագրքի» ամենակարեւորն ու արժեքավորը Նախադրութիւնն է: Այստեղ է, որ Մխիթար Գոշը գրեւորել է իր ամբողջ իմաստունութիւնը: Իր «Նախադրութիւն»-ում Գոշը բացառիկ հաջողութեամբ կազմել է դատավորութեան և դատակազմութեան վերաբերյալ մի շարք գործնական նշանակութիւն ունեցող հոդվածներ, որոնք կատարյալ ձևակերպումներով Սմբատի մոտ չկան: Հարց է ծագում, եթէ «Նախադրութիւնը» լինէր Սմբատի ձեռքում, մի՞թէ նա իր «Դատաստանագրքի» մեջ չէր օգտագործի այդ վերին աստիճանի կարեւոր հոդվածները: Իհարկէ կօգտագործեր:

Անհրաժեշտ է նշել, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» բացի «Նախադրութիւն»-ից կան նաև 57 ընդարձակ հոդվածներ, որոնք նույնպես չեն օգտագործված Սմբատի «Դատաստանագրքում»: Օրինակ, Գոշի մոտ կան այնպիսի

հոդվածներ, որոնց նմանը Սմբատը չունի՝ երիտասարդին սպանելու (ՃԺԹ), կին վաճառելու (ՃԻԱ), աչքը հանելու (Խ), անառակ որդու մասին (Հ) և այլ հոդվածները:

Անհրաժեշտ է այստեղ հատկապես նշել Գոշի «Յաղագօ դատաստանաց նաւաց բեկելոց ի ծովու» (ՃԾ) հոդվածը, որտեղ խոսվում է ծովային ավազակների դեմ պայքար կազմակերպելու, նավերը խորտակումից փրկելու և այլ հարցերի մասին: Այսպիսի հոդվածների կարիք ավելի շատ պիտի զգար կիրիկյան Հայաստանը, որը ծովային երկիր էր: Հետևապես Սմբատը այդ հոդվածները անշուշտ օգտագործած կլինէր, եթէ իր ձեռքի տակ ունենար Գոշի «Դատաստանագիրքը»:

Թվում է թէ, մեր բերած փաստերը համոզիչ կերպով ցույց են տալիս երկու դատաստանագրքերի միանգամայն ինքնուրույն լինելը, և այսու հետ խոսք չի կարող լինել Սըմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» թարգմանութիւն լինելու մասին՝ թե՛ Գոշի «Դատաստանագրքից» և թէ Ասիզներից:

Այսքանով չի սահմանափակվում «Դատաստանագիրք»-ը կազմելու համար Սմբատի օգտագործած աղբյուրների ուսումնասիրութիւնը: Նա օգտագործել է ոչ միայն Մովսիսական օրենքները, «Հայոց կանոնագիրքը», այլև առատ նյութ է բաղել ու ֆիրսացիայի ենթարկել իր ժամանակաշրջանում օրենքի ուժ ունեցող և գործող թե՛ հայկական և թե՛ օտար ինչպես աշխարհիկ օրենքները, այնպես էլ եկեղեցական ու զանազան կանոններ:

Սմբատը օգտագործել է նաև Սսի 1243 թվականի կանոնները: Հայոց մայրաքաղաք Սսի այս կանոնների մշակմանը

\* Գոշ, Դատաստանագիրք, էջ. 352:

մասնակցել է նաև Սմբատը: Այդ կանոնները վարդան Արևելցու միջոցով ուղարկվել են Մեծ Հայաստան ու քննարկման ենթարկվել Հաղբատի և Զագավանի եկեղեցական բազմամարդ ժողովներում: Այդ կանոններում շոշափվում են գերազանցապես աշխարհիկ հարցեր: Սաի կանոնների մշակումը 1243 թվականին ցույց է տալիս, որ Կիլիկյան Հայաստանում մինչև այդ չկային դատաստանագրքեր: Հավանաբար լի եղել նաև Գոշի «Դատաստանագիրքը»: Հասկանալի է, որ եթե այն լիներ Կիլիկյան Հայաստանում, ապա կարիք չէր լինի մշակելու Սաի կանոնները, որոնք Գոշի «Դատաստանագրքի» հոդվածների համեմատությամբ առանձնապես արժեք չեն ներկայացնում:

Անշուշտ, Սմբատի համար ավելի հեշտ կլիներ օգտագործել կամ ինչպես ասում են, «Թարգմանել» Գոշի «Դատաստանագիրքը», քան նորը կազմել: Ահա թե ինչու «ի շար եւ ի դառն ժամանակի», ինչպես ասում է Սմբատը, ձեռնամուխ եղավ իր «Դատաստանագրքի» կազմման ծանր գործին: Բայց նա չկարողացավ միանգամից կազմել իր գիրքը: Նա թարգմանեց նախ «Անտիոքի Անսիզները» և հետո միայն՝ 1265 թվականին գրեց իր «Դատաստանագիրքը»:

Հարց կարող է ծագել, այդ երկու իրավագիտական հուշարձաններից ո՞րն է բովանդակալի՝ «Անսիզք Անտիոքայ»-ն թե՛ Սմբատի գրած «Դատաստանագիրք»-ը:

Նախ և առաջ, ինչպես վերը նշեցինք, «Անսիզք Անտիոքայ»-ն բաղկացած է ընդամենը 38 հոդվածներից, որոնք գերազանցապես վերաբերում են տնտեսական ու առևտրական հարցերին: Իսկ Սմբատի «Դատաստանագիրքը» բացկացած է 202 հոդվածներից և ընդգրկում է գրեթե կյանքի բոլոր կող-

մերը: Բացի այն, «Անսիզք Անտիոքայ»-ն չէր համապատասխանում Հայաստանի ներքին կյանքին, որի մասին վկայում է ինքը Սմբատ Սպարապետը: Նա գրում է.

«Որովհետև ըստ սովորությանմ այդ անսիզներով էին ղեկավարվում թե՛ մեր ժողովուրդը և թե հայոց արքունիքը, այդ պատճառով շահականալով նրանց (օրենքների) էությունը, թույլ էին տրվում մեզ մոտ (կոպիտ) սխալներ, որոնք հանդում էին մեր հոգու վտանգմանը»:

[«Վասն զի սովորութեամբ այդ Անսիզովն կու գնայր ազգս մեր ի դարպասս Հայոց, սխալումն ինչ կու զայր մեզ վասն տգիտութեան և վտանգութիւնք ոգոց»]:

Ինչպես այդ վկայությունից պարզվում է, անհասկանալի լինելով, «Անսիզք Անտիոքայ» օրենքներով ղեկավարվելիս սխալներ են թույլ տրվել:

Ահա թե ինչո՞ւ այդ անխոնջ մտավորականը հարկադրված է եղել կազմել մի նոր ամբողջական «Դատաստանագիրք», որն ավելի մոտ լիներ հայ ժողովրդի կենցաղին ու սովորույթներին և ըխեր իր ժամանակի ոգուց: Կիլիկյան հայ պետականությունն անբերին զարգացման օրինաչափությունը զարգացման այն աստիճանին էր հասել, որ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և կրոնական գործերը հնարավոր չէր այլևս կարգավորել և կառավարել առանց գրավոր կայուն օրենքների սահմանման: Բացի այդ, XIII դարի կեսերին խաչակրաց իշխանությունները Արևելքում մահմեդական ավելի հզոր պետությունների հարվածների տակ մեկը մյուսի ետևից կործանվում էին, և նվաճող մահմեդական աշխարհը իր ամ-

1 Մատենագրության ձեռագիր, № 487 էջ, 3—4:

բողջ ուժով շոտ էր դալիս դեպի Կիլիկյան Հայաստանի վրա, որը գտնվում էր նրանց շրջապատման մեջ: Այսպիսով, Սըմբատի նոր «Դատաստանագիրք» կազմելը երկրի համար հրամայական պահանջ էր: Պետք է ստեղծվեին նոր օրենքներ, աշխարհիկ օրենքներ, որոնց միջոցով հնարավոր լիներ կարգավորել երկրի հասարակական փոխհարաբերությունները, կենտրոնական իշխանության փոխհարաբերությունները ֆեոդալների-իշխանների, հատկապես անհնազանդ ու կենտրոնախույս ֆեոդալների նկատմամբ, կենտրոնացնել երկրի ռազմական բոլոր ուժերը, որպեսզի կարելի լիներ փրկել երկիրը:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» բովանդակությունը: Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ի՞նչ է իրենից ներկայացնում Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» և ի՞նչ նշանակություն ունի այն հայ իրավագիտություն պատմության մեջ:

Ականավոր պետական գործիչ Սմբատ Սպարապետը 1265 թվականին կազմեց Կիլիկյան հայկական թագավորության անդրանիկ դատաստանագիրքը: Այն բաղկացած է 202 հոդվածից և արտացոլում է տվյալ ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Սմբատի «Դատաստանագրքում» հանգամանորեն արտացոլված են թագավորի ու նրա վասսալների, աշխարհիկ իշխանների ու հոգևորականների, պարոնների ու ճորտերի իրավական փոխհարաբերությունները: «Դատաստանագիրքը» ընդգծում է նաև քաղաքային կյանքը, արհեստավորներին ու առևտրականներին վերաբերող օրենքներով:

Սմբատ Սպարապետի կողմից նոր դատաստանագիրք կազմելը նշանակալից երևույթ էր Կիլիկյան հայկական թա-

գավորության ու երկրի համար փանի որ մինչև այդ գործող օրենքները, որոնք գերազանցապես օտար օրենսգրքերից կատարած թարգմանություններ էին, չէին բավարարում երկրի և պետության աճող պահանջները: Այդ տեսակետից նոր դատաստանագրքի երևան գալը խիստ անհրաժեշտություն էր և բխում էր ժամանակի ոգուց:

Կիլիկյան հայկական թագավորությունը գտնվելով Արևելքի ու Արևմուտքի սահմանագլխին, շփման մեջ լինելով արևմտաեվրոպական ֆեոդալների և խաչակիրների հետ, իրենից ներկայացնում էր բավականին զարգացած մի երկիր, որտեղ ֆեոդալական հարաբերությունները գտնվում էին իրենց զարգացման բարձր աստիճանի վրա:

Յուրացնելով արևմտաեվրոպական ֆեոդալիզմի բնորոշ գծերը, Կիլիկյան հայ ֆեոդալները այն հարմարեցրին իրենց երկրի պայմաններին:

Այդ իր արտահայտությունը գտավ երկրի կառավարման ձևերի, ֆինանսական ու հարկային, ինչպես նաև առևտրական հարաբերությունների մեջ:

Կիլիկյան ֆեոդալիզմը շատ բաներով նմանվում էր արևմտաեվրոպական ֆեոդալական հարաբերությունների զարգացած ձևերին, միաժամանակ իր մեջ պահպանելով արևելյան, հատկապես Բագրատունյաց շրջանի ավատական յուրահատուկ ձևերը: Ֆրիդրիխ էնգելսը խոսելով ֆեոդալական հարաբերությունների զարգացած ձևերի մասին, գտնում է, որ ֆեոդալիզմը իր ամենազատ արտահայտությունը գտավ Երուսաղեմի թագավորության կարգերում և որ «նա (ֆեոդալիզմը — Ա. Գ.) — ամենից շատ իր իդեալին մոտեցավ Երուսաղեմի վաղանցիկ թագավորության մեջ, որն իրենից

հետո Երուսաղեմյան ասսիզներում թողեց Ֆեոդալական կարգի կլասիկ արտահայտությունը»<sup>1</sup>:

Երուսաղեմի ասսիզների նկատմամբ էնզելսի տված այս գնահատականը կարելի է տարածել նաև Կիլիկյան հայոց-թագավորությունում ստեղծված Ֆեոդալական հարաբերությունների վրա, որն իր բացառիկ արտահայտությունը գտավ Սմբատի «Դատաստանագրքում», քանի որ Սմբատն իր «Դատաստանագիրքը» կազմելիս, ինչպես վերը նշեցինք, օգտագործել է թե՛ «Անսիզք Երուսաղեմայ» և թե՛ «Անսիզք Անտիոքայ» իրավագիտական արժեքավոր հուշարձանները:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» Կիլիկյան հայոց թագավորության քաղաքական ինքնուրույնության խարտիան էր:

Թե ի՞նչ սկզբունքով է կազմել Սմբատ Սպարապետն իր «Դատաստանագիրքը» և ի՞նչպես է դասավորել հոդվածները, այդ մասին Սմբատի գրքի առաջաբանում ասված է. «Նախ և առաջ մենք նպատակահարմար գտանք զրել դատավորների պարտականությունների, առաջին հերթին թագավորների (պարտավորությունների) մասին, քանի որ թագավորությունը աստծու կողմից է կարգված: Իսկ (թագավորը) աստծու տեղակալն է երկրի վրա: Մենք (սկզբից) գրեցինք զրանց դատավորության ու իրավունքների մասին, իսկ հետո կրոնավորների, աշխարհիկ իշխանների և ամուսնական (իրավունքի) մասին»:

[«Յառաջ պատեհ համարեցաք զվիճակեալ դատաւորացն զրել. բուն յառաջ զթագաւորացն, վասն զի յԱստուծոյ կար-

գեցաւ թագաւորութիւնն եւ յԱստուծոյ տեղին է համարած ի յերկրի: Եւ զնոցին դատաստանն եւ զիրաւունքն գրեցաք. եւ ապա զկարգաւորացն եւ զաշխարհականացն եւ զայր ու կնոջն»<sup>1</sup>]:

Ըստ «Դատաստանագրքի», Կիլիկյան թագավորության Ֆեոդալական հիերարխիայի ամենաբարձր աստիճանը թագավորն էր, որին Սմբատը երբեմն «ինքնակալ» է համարում: Թագավոր, որպես առաջին խոշոր Ֆեոդալ ու սուզերեն, իր լայն լիազորություններով ու իրավունքներով տարբերվում է մյուս բոլոր Ֆեոդալ-իշխաններից: Թագավորի հեղինակությունը, նրա իշխանությունը վերաբերող հոդվածներում Սմբատը ձգտում է ուժեղացնել կենտրոնական իշխանությունը: Այսպես օրինակ՝ «Դատաստանագրքի» Ա հոդվածում խոսելով թագավորի իրավունքների մասին, ասվում է. «Միայն թագավորն իրավունք ունի զբամ կտրել, քաղաք, բերդ կառուցել և մեծ գետերի վրայով կամուրջ անցկացնել, զլիսավոր ճանապարհների և երկրի լեռնային անցումների վրա ապաստարաններ կառուցել: Իսկ եթե մի որեէ իշխան ինքը ցանկանա այդպիսի շինարարություններ կատարել, ապա այդ կարող է անել միայն թագավորի թույլտվությամբ: Ոչ ոք իրավունք չունի թագավորական զգեստ հագնել առանց թագավորի թույլտվության: Ոչ ոք իրավունք չունի նստել թագավորի մոտ առանց նրա թույլտվության»: [«Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ դեկան շինել՝ եւ քաղաք եւ բերդ՝ եւ մեծ գետոց կանդարայ՝ եւ հոգէտուն ի վերայ մեծ ճամփնի եւ ի կապննի երկրին: Եւ թե իշխան կամենայ յայսոց շինել, նա

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., том XXIX, стр. 394.

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 5:

թագաւորին՝ հրամանով շինէ: Եւ զթագաւորի հալաւ շիշխէ որ հագնել առանց իր հրամանին: Ի թագաւորի մաւտ մի՞ որ իշխեսցէ նստել՝ քաւէլ թէ ինք հրամմէ»<sup>1</sup>]:

Այնուհետեւ «Դատաստանագրքում» առանձին հողավածներում խոսվում է բնական հարստութիւնների և օգտակար հանածոների նկատմամբ ունեցած թագաւորի և իշխանների իրավունքների մասին: Եթե երկրում որեւէ ֆեոդալի տիրույթում հայտարարվի ոսկու հանք, այն թագաւորինն է, արծաթի հանքը թագուհունն է: Բայց դրանց որոշ մասը ըստ համաձայնութեան, տրվում է ֆեոդալին: Պատերազմի ավարը բաժանելու մասին ասված է. «ավար ձեռք բերելու դեպքում, եթե մեջը ոսկի և ոսկուց գործվածք լինի, այն տրվում է թագաւորին, իսկ արծաթը, արծաթե գործվածքը, մետաքսը տրվում է իշխաններին: Բրդեղենը, բամբակեղենը, պղինձըն ու երկաթը տրվում է զինւորներին»:

[«Ոսկի եւ ոսկով կտաւ, — ասված է հողավածում, — որ ի շահն ուրդի՝ թագաւորին է. եւ արծաթն ու արծթով կտաւ՝ եւ պրիսմէն՝ իշխանացն է. եւ բրդեղենն ու բամբակեղէնն եւ պղինձն ու երկաթն՝ զաւրացն է»<sup>2</sup>]:

Դ հողավածում ասված է, որ եթե գտնվի ոսկի կամ արծաթ, որը պատկանելիս լինի նախկին թագաւորին, միևնույն է, պետք է այն հանձնել թագաւորին: [«Նա այլվայ թագաւորին լինի»<sup>3</sup>]: Պատերազմներում ձեռք բերած ավարի կեսը դարձյալ թագաւորին է. «Եւ ինչ շահ կենայ՝ ըզորդն այն է՝ որ

զամէնն յիրուր բշտեն, ու կէսն թագաւորին է՝ եւ կէսն այլ իշխանացն՝ ըստ իրենց մարդաթլւին»<sup>1</sup>:

«Դատաստանագրքում» կան նաև մի շարք հողավածներ, որոնք սահմանափակում են ֆեոդալների իրավունքները: որոնք սահմանափակում են ֆեոդալների իրավունքները: նրանցից մեկում ասված է. «Հարկերը, որ սահմանված են գաւառների համար, հավաքում են պարոնները, և նրանցից ոչ որ իրավունք շունի առանց թագաւորի այն ավելացնել»:

[«Զգաւառաց հարկն սահմանովն որ սահմանած է՝ առնուն պարոնայքն. եւ շիշխէ որ՝ յայն որ առանց թագաւորին դիր յաւելցնէ»<sup>2</sup>]:

Զ հողավածով թագաւորն իրավունք ունի զրկելու իշխանական իրավունքից այն իշխանին, որին իշխանական իրավունքը ինքն է շնորհել: Այնտեղ ասված է. «Եւ իշխան՝ զոր ինք թագաւորն լինին իշխանացուցել, նա ինք (թագաւորը) կարէ ձգել»<sup>3</sup>:

Թագաւորի իրավասութեան մեջ է մտնում նաև շուկայական հարաբերութիւնների կարգաւորման հարցը: Ըստ «Դատաստանագրքի», թագաւորը պարտավոր է հավաքել բոլոր խոշոր ֆեոդալներին և գաւառապետներին, որպեսզի «քննեն եւ տնտղումն այնեն ի մուտն եւ ի տարին, եւ ի կանուխն եւ յանազան եւ նեհ զնեն ծախու»<sup>4</sup>:

Արևելյան զեսպոտիզմը՝ թագաւորի անսահմանափակ իշխանութիւնը, որը հատուկ էր պարսկական շահերին կամ արշակունյաց շրջանի հայ թագաւորներին, այստեղ զսպված

<sup>1</sup> Մմբատ, Դատաստանագիրք, էջ 9:

<sup>2</sup> Նույնը, էջ 12:

<sup>3</sup> Նույնը, էջ 17:

<sup>1</sup> Մմբատ, Դատաստանագիրք, էջ 11:

<sup>2</sup> Նույնը, էջ 13:

<sup>3</sup> Նույնը, էջ 81:

<sup>4</sup> Նույնը, էջ 127:

է: Այսպես, օրինակ՝ թագավորն իրավունք չունի ինքնակամ կերպով ոտնահարել ֆեոդալի օրինական իրավունքները կամ արտրել նրան երկրից, առանց մյուս ֆեոդալների համաձայնութեան: Օրենքը հսկողութեան տակ է առնում նույնիսկ թագավորի կենցաղավարութիւնը, մի կարևոր հանգամանք, որն անշուշտ բխում է պետական իշխանութեան շահերից: «Դատաստանագրքում» ասված է. «Չէ իրավունք որ թագաւոր անպսակ սիրողով կենայ»<sup>1</sup>: Դեռ ավելի՛ն. ՉՉ հոգվածում ասված է, որ եթե իշխանները դժգոհ են թագավորից, և նա այնքան վատն է, որ նրան տանել չեն կարող, ապա եկեղեցու ու երկրի բնակչութեան ընդհանուր համաձայնութեամբ կարող են թագավորին արտրել երկրից. [«հայնց պիղծ լինին, որ շկարէ հանդուրժել աշխարհն, նա ալլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչաւք երկրին կարեն արտրել»<sup>2</sup>]:

Հետաքրքիր է Սմբատի մտտեցումը թագավորի ընտրութեան հարցում գահը ժառանգելու մասին: Հանգամանորեն ուսումնասիրելով այդ հոգվածը, պարզվում է, որ նա բոլորովին նոր՝ ավելի առաջադեմ մտտեցում է դրսևորում, քան իր բոլոր նախորդները:

Այսպես օրինակ, վախճանված թագավորի փոխարեն նոր թագավոր ընտրելու մասին խոսելիս Սմբատը փոխում է մինչև այդ գոյութիւն ունեցող նորմները, որոնք գոյութիւն ունեին հայերի մեջ դեռևս արշակունյաց շրջանից: Մովսես Խորենացին իր «Պատմութիւն հայոց» գրքում պատմում է, որ հայոց թագավոր, Վաղարշակ Ա-ը իր ավագ որդու՝ Արշակին

իր մոտ վերցրեց իրրև թագաժառանգ<sup>1</sup>, իսկ մյուս որդիներին հեռացրեց արբունիքից, նրանց տնօրինութեանը հանձնելով առանձին գավառներ: Ուրեմն, ըստ հին հայկական սովորութի, թագավորի մահից հետո հորը փոխարինում էր անպայման ավագ որդին: Գոչը պահպանելով այդ սկզբունքը, իր «Դատաստանագրքում» որոշ փոփոխութեան է ենթարկում, գրելով, որ քանի դեռ ողջ են վախճանված թագավորի եղբայրները, նրա որդիները չեն կարող գահը ժառանգել: «Որքան եղբարք իցեն նորա՝ որդոց նորա ոչ է իրաւացի առնուլ թագաւորութիւն եւ ի հատանել եղբարց՝ ապա նստցին որդիք»<sup>2</sup>:

Թագավորի ընտրութեան հարցում Սմբատը չի կառուցում հին սովորութեանը, ըստ որի գահը անպայման ժառանգում էր ավագ որդին, այլ առաջարկում է թագավորական գահը հանձնել արքայորդիներից լավագույնին: Այդ մասին «Դատաստանագրքի» Ա հոգվածում ասված է.

«Չնայած օրենքով ավագ որդին պետք է դրվի ինքնակալութեան աթոռին, բայց երկրի շահերից ելնելով, արդարացի կլինի հոր, ինչպես նաև բոլոր գավառների ու գավառապետների հավանութեամբ, ս. եկեղեցու ընտրութեամբ առաջ քա-

<sup>1</sup> Մովսես Խորենացին այդ մասին այսպես է նկարագրում. «Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչը Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան»: Այնուհետև եզրակացնում է. «Եւ եղև այս յայնմ հետէ և առ յայս օրենք ի մէջ արշակունեաց, միոյ որդւոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեան, և այլ ուստերաց և զստերաց զնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին ժառանգութիւն»: (Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Տփլիս, 1881, էջ 118):

<sup>2</sup> Գոչ, Դատաստանագրք, էջ 300:

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 81:

<sup>2</sup> Նույն, էջ 9:

<sup>3</sup> Նույն, էջ 81:



շել թագավորական գահի համար որդիներին նրան, որը բարիներից բարին լինի, աստվածասեր, բարեխիղճ և արդարագատ, որն ընդունակ լինի կառավարել իր եղբայրներին ու երկրին...»:

[«Եւ թէպէտ ու նոմոսով է՝ զանդրանիկն կացուցանել յաթոռ ինքնակալութեանն, բայց վասն աւզտութեան աշխարհաց իրաւունք է՝ որ աղէկ տեսնու հայրն՝ իր ամէն գաւառաւքն եւ գաւառապետացն տեսովն եւ սուրբ եկեղեցովն, որ՝ յուր հաճին յորդոց թագաւորին եւ զիտնան, որ բարի բարուք լինի եւ աստուածասեր ու երկիրդով եւ ըռատակն, նա զայն կացուցանեն յաթոռ ինքնակալութեան հարն, որ հովվէ զեղբարքնն եւ զերկիրն»<sup>1</sup>]:

Սմբատ Սպարապետը, ինչպես զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի գաղափարախոս, իր «Դատաստանագրքի» բազմաթիվ հոդվածներով ձգտում է ամրապնդել ֆեոդալական հարաբերությունները: Նա հավաքել ու ֆիքսացիայի է ենթարկել իր համար մատչելի այն բոլոր օրենքները, որոնք բխում էին տվյալ ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերություններից: Այդ հարցում իրավացի է պրոֆ. Խ. Սամուելյանը, որը գրում է. «Մխիթար Գոշի Դատաստանագրքի համեմատությամբ Սմբատ Գունդատարի Դատաստանագիրքը հանդիսանում է ավելի որոշ ու շեշտակի գծերով կերտված ֆեոդալական իրավունքը, ուր մի կողմից՝ պարզ ու մեկին լայնացած և ամուր արտոնություններով ապահովված են ֆեոդալական իշխանների իրավունքները, մյուս կողմից՝ ավելի խիստ ու դաժան կարգերի մեջ են դր-

ված իսկական արտադրողներն, այսինքն՝ շահագործվող շինականներն ու ստրուկները»<sup>1</sup>:

Իրոք, Սմբատ Սպարապետը բազմաթիվ օրենքներով նպատակ է դրել ամրացնել ֆեոդալների իրավունքները շինականների նկատմամբ: ԸՀԱ հոդվածում ցայտուն կերպով դրսևորված են դասակարգային օրենսդրութան սկզբունքները. «Կու հրամայէ արէնքս, — ասված է «Դատաստանագրքում», — որ մարդկային ազգս շատ ազգեր են, եւ են, որ ազատք են ու հեծելվորք, եւ են, որ շեն՝ եւ յայլ ազգ գործերն որ գործ այն են»<sup>2</sup>: Այստեղ «ազատ»-ները ու «հեծյալները», որպես տիրապետող դասակարգի ներկայացուցիչներ, հակադրված են այլ գործերով զբաղվողներին, այսինքն՝ աշխատավորներին:

ԸՀ հոդվածում տրված են ֆեոդալների իրավական ֆունկցիաներն իրենց վասալների նկատմամբ, ուր խիստ կերպով պահպանված է ֆեոդալական հիերարխիան:

«Եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն եւ իրենց տեսովն. նոյնպէս եւ, զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքնն եւ լիճ ճորտերն՝ նա իրենցովն զիրենք դատեն իշխանաց իշխանքն. զթագավորին ճորտերն՝ թագավորին հրամանաւքն»<sup>3</sup>:

«Դատաստանագրքում» մենք հանդիպում ենք նաև «լիճ ճորտեր» տերմինին, որ փոխառություն է ֆրանկների ֆեոդալական սիստեմում գոյություն ունեցող «linge homme» տերմինից, որը որպես հոմանիշ բառ Դատաստանագրքում գործ է ածվում «ձիաւորք»-ի կողքին՝ «նոյնպէս եւ յազատքն՝

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 7:

<sup>1</sup> Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, էջ 94:

<sup>2</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 148:

<sup>3</sup> Նույնը, էջ 82:



հողատուրքից, ըստ «Դատաստանագրքի» գյուղացին պարտավոր է ֆեոդալին բահրա տալ: Բահրա տալով գյուղացու պարտավորութիւնները դրանով չէին սահմանափակվում, դրա հետ միասին նա պարտավոր էր «Եւ ի շարաթ ար մի պարոնին բանի»<sup>1</sup>: Բացի դա, գյուղացին ֆեոդալին պիտի «կողմ լիտր մի եղ տայ պարոնին. եւ այլ խոտչէք շտայ: Ոչ-խարն՝ եփ գառն կամ ուլ բերէ տարեկանի տասնէն մեկն առնու պարոնն»<sup>2</sup>:

Բանող անասունների՝ եզների, ձիերի, ջորիների համար ֆեոդալը գյուղացի ճորտից հարկ իրավունք չունի պահանջելու, բանի որ նրանք ձրի բանեցվում են նրա համար. «Եւ ջորին եւ ձին, եւ էշն շտայ. զի յամէն տաներտն որ են ի տարին՝ ժԲ տարապայ՝ գան ծառայեն պարոնին»<sup>3</sup>, այսինքն, դրանք տարվա մեջ 12 անգամ պարոնի համար ձրի աշխատեցվում են:

Սմբատ Սպարապետը, որպես հեռատես ականավոր գործիչ, իր «Դատաստանագրքի» որոշ հոդվածներով սահմանափակում է խարբրա ու ազահ կրոնավորների, վաշխառուների, անգութ ու դաժան իշխանների կամայականութիւնները, զգուշութիւն ցուցարբերելով աշխատավորների ծայրահեղ զժգոհութիւնների նկատմամբ, ինչպես այդ արել է Գոշը իր «Դատաստանագրքում»: Այստեղ, օրինակ, հարկերի ապօրինաբար ավելի գանձումների մասին խոսելով, օրենքը պարտավորութիւն է դնում թագավորի վրա՝ «եւ թագաւորն պար-

տի որ պահէ վաղբատն»<sup>4</sup>: Իսկ է հոդվածում նախազգուշացնում է, որ «Եթե որ մշակ վարձէ ու առանց խնամոց հանցչաք շատ հալածեցնէ ի բան, կամ իրք տայ վերցնել՝ որ մեռնի կամ վնասի»<sup>5</sup>, ապա վարձողը պատասխանատուութիւն պիտի կրի: Ընդէ հոդվածում պահանջվում է՝ այն վարձակալը, որ կտրում է մշակի վարձը<sup>6</sup>, մշակը վարձակալին դատի տալիս դատարանը պարտավոր է վարձակալից պահանջել վճարելու ոչ միայն մշակին հասանելիք աշխատավարձը, այլև «հանչաք մի այլ տուգանք ի դարպասն տայ»<sup>7</sup>, այսինքն, այդ շափով էլ արքունիքին վճարի որպես տուգանք: Գեո ալելին՝ ձէլ հոդվածում ասված է, որ եթե մեկը բանվորին ուղարկի վտանգավոր գործի, որի հետևանքով նա սպանվի և կամ որոգայթով մեռնի, ապա ուղարկողը «արեան տերն է»<sup>8</sup>:

ԶԳ հոդվածում ասված է, որ եպիսկոպոսները և պարոնները եկեղեցու համար բերած նվիրատուութիւնները չպետք է իրենք յուրացնեն, այն պետք է թողնեն եկեղեցու կարիքների համար:

Կիլիկյան Հայաստանը ուներ զարգացած քաղաքներ: Հատկապես աչքի էին ընկնում նրա բազմամարդ շուկաները: Սմբատը հատուկ օրենքներ է սահմանել նաև կարգավորելու շուկայական հարաբերութիւնները: Ընդ որում ընդարձակ հոդվածը նվիրված է շուկայի կարգավորման հարցերին: Հանգամանորհե սահմանվում են շուկայում կարգ ու կանոն-

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 13:

<sup>2</sup> Նույն, էջ 13:

<sup>3</sup> Նույնը:

<sup>4</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 13:

<sup>5</sup> Նույնը, էջ 18—19:

<sup>6</sup> Նույնը, էջ 145:

<sup>7</sup> Նույնը, էջ 146:

<sup>8</sup> Նույնը, էջ 151:

ները, կշիռների ու շափերի վրա հսկելը, ինչպես նաև շուկայի վրա հսկիչներ և այլ գործակալներ նշանակելու կարգը: Այդ հոդվածում Սմբատը ասում է. «Կու հրամայէ արեհնս՝ որ այն ծախաւղն, որ խարէ զանգէտն ու իր սուղ իրք ծախէ, նա զինք զէդ գող ու անհաւատ դատեն, զէդ որ գրել ենք վասն դողերոյն»<sup>1</sup>, այսինքն, նրանք ովքեր կհամարձակվեն խարել անփորձ գնորդին, վաճառելով նրան իրենց ապրանքը նախատեսված գներից բարձր, ապա այդ վաճառողին պետք է դատել գողերի համար նախատեսված օրենքներով:

Այնուհետև նույն հոդվածում ասված է, որ հացի, գինու և այլ մթերքների գները սահմանելու կապակցութեամբ անհրաժեշտ է ամեն աշնան թագավորը իր զավառապետների ու իշխանների հետ քննութեան առնի և պարզի բերքի շափը և այնպիսի գներ որոշի, որ ոչ ծախողը տուժի և ոչ առնողը. «Եւ զհացի ու զգինոյ եւ զայլ հնդերաց նեհն պատեհ է, որ թագաւորն ժողովէ զիր զամէն դաւառապետք եւ իշխանք ի յամենայն աշուն, երբ տարոյն մուտքն մտէ, որ քննեն եւ տնտղումն այնեն ի մուտն եւ ի տարին եւ ի կանուխն եւ յանագան, եւ նեհ գնեն ծախուն դպատեհ՛վորն ի վերայ շքաւորութեան տարոյն եւ լիութեանն, որ ոչ ծախաւղքն զրկին եւ ոչ գնաւղքն, եւ հովվի աշխարհն»<sup>2</sup>:

Սմբատի «Գատաստանագրքում» կտն նաև այնպիսի հոդվածներ, որոնք վերաբերում են երկրի պաշտպանութեան նպատակով հանրօգուտ աշխատանք կատարելուն: Այստեղ ասված է, թէ «ի քաղաքի եւ ի բերդի շէնք՝ պատեհ է որ ամէն

երկիրն աւգնեն ամէն իրաւք, զի ամէնին է, եւ տեղոյն բնակիչքն ավելի»<sup>3</sup>: Այսինքն, երկրի պաշտպանութեան նպատակով կառուցվող քաղաքի, բերդի և այլ շինարարական աշխատանքներին պարտավոր է ամբողջ բնակչութեան մասնակցութիւնը, քանի որ նման ձեռնարկումները բխում են ողջ հասարակութեան ու երկրի շահերից:

Բայց որովհետև նման շինարարութիւններ կառուցվում էին ոչ բոլոր շրջաններում, այլ զլիսավորապես ռազմա-ստրատեգիական նշանակութիւն ունեցող վայրերում, այդ պատճառով էլ «Գատաստանագրքում» խնդիր է դրված, որ տրվալ վայրի բնակիչները առավել ևս պարտավոր են իրենց ուժերը շինայել կառավարական այդ միջոցների կատարման համար:

Սմբատը բազմաթիւ հոդվածներով ձգտում է կարգավորել աշխարհիկ և հոգևոր իշխանութիւնների փոխհարաբերութիւնները: Կիլիկիան հայոց թագավորութեան համար այդ կարևոր նշանակութիւն ունեւր: Հայտնի է, որ Կիլիկիան հայոց թագավոր Լևոն Բ և հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը երկար ժամանակ պայքարի մեջ էին իրար հետ:

Հայոց կաթողիկոսութիւնը իր աթոռը փոխադրելով Հոռմկլա՝ Կիլիկիան թագավորութեան սահմանային մասը, աշխատում էր պահպանել իր ինքնուրույնութիւնը և չէր ցանկանում ենթարկվել թագավորական իշխանութեանը: Այդ նպատակով սկսած XII դարի վերջից Կիլիկիան հայոց թագավորութիւնը խնդիր էր դրել իրեն ենթարկել ոչ միայն հայ Ֆեոդալների կենտրոնախույս ուժերին, այլև հոգևոր իշխանութիւնը:

<sup>1</sup> Սմբատ, Գատաստանագիրք, էջ 127:

<sup>2</sup> Նույնը, էջ 127—128:

<sup>3</sup> Սմբատ, Գատաստանագիրք, էջ 14:

իր ժամանակի համար վերին աստիճանի կարևորագույն այս հարցն իր արտահայտությունը գտավ Սմբատ սպարապետի «Դատաստանագրքում»։ Սմբատը խնդիր է դնում, որ հոգևոր իշխանությունը պարտավոր է ենթարկվել աշխարհիկ իշխանությանը և կենտրոնական թագավորական իշխանության կողմից սահմանած կարգ ու կանոններին։

«Դատաստանագրքի» ԿԵ հոդվածում ասված է «թագաւորք եւ իշխանք իրենց վանաց տուն են հաստատել եւ հայր եւ գուխք դրել այլ եղբարցն»<sup>1</sup>։ Այսպիսով, թագավորները ու իշխանները ոչ միայն իրավունք ունենին առաջ քաշելու ու նշանակելու այս կամ այն վանահայրերին, այլև դրա հետ միասին ՄԹ հոդվածով նրանք պետք է հսկողություն սահմանեին հոգևորականության ընտրությունների վրա։

Այդ մասին «Դատաստանագրքում» ասված է. «Ձի ղեպիսկոպոսն պատեն է, որ երկրին եւ գաւառին ու իր կարգակերցերոյն եւ ուսուցչացն ու վարդապետացն տեսով եւ ընտրաւորութեամբ նստուցանեն յաթոռ»<sup>2</sup>։ Իսկ ԿԵ հոդվածով նախադրույցովում է կենտրոնական իշխանության ներկայացուցիչներին, որ նրանք կաշառք չվերցնեն ու անարժան կրոնավորներին պաշտոն տան. «Որ թագաւոր կամ իշխան կամ այլ ազգ զխաւոր եկեղեցական կամ աշխարհական, որ վասն կաշառոյ սոցա հայր դնէ, զոր իրենք չուղենան»<sup>3</sup>։

Այն հոգևորականները, որոնք առանց կրոնապետի թույլտվության վանք կամ եկեղեցի են կառուցում և եպիսկոպոսը այդ ապօրինի գործողության դեմ բողոքարկում է, ապա դա-

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 72;  
<sup>2</sup> Նույնը, էջ 58;  
<sup>3</sup> Նույնը, էջ 73.

տը տեղի է ունենում թագավորի կամ պարոնի կողմից։ Այդ մասին «Դատաստանագրքում» ասված է. «Առնուն զթագաւորքն եւ զպարոնին զսաստն»<sup>4</sup>։

«Դատաստանագրքը» մեծ պարտավորություն է դնում կրոնավորներին վրա, պահանջելով, որ նրանք «զուսումն սիրեն, որ իրենք աւգտին եւ այլոց քարոզեն»<sup>5</sup>։

«Դատաստանագրքում» դատապարտվում է վաշխառությունը։ Խիստ կերպով մեղադրվում են սանձարձակ և խաբերա կրոնավորները, վճռականապես արգելելով նրանց տոկոսով դրամ տալը<sup>6</sup>, գույքականությունը<sup>7</sup>, «սուտ քահանայութիւն»<sup>8</sup>։

Առանձնապես բարձր արժեք ունեն Սմբատ Սպարապետի այն հոդվածները, որոնք վերաբերում են երեխաների դաստիարակության ու կրթության գործին։ Անհրաժեշտ է այստեղ նշել, որ դեռ Սմբատից շատ առաջ հայ մտավորականները նույնպես դրել են ուսման հարցը և նշել վանքերում երեխաների ձրի ուսման անհրաժեշտությունը։ Այսպես օրինակ, Բարսեղի ՃԴ կանոնում ասված է, «վարդապետք որ զաշակերտ իւրեանց ակնառութեամբ ուսուցանեն, նզովեալ եղիցին»։ Նույն միտքը ասված է Սահակ Պարթևի ԺԳ կանոնում։ Մխիթար Գոշը նույնպես խոսում է սովորեցնելու համար երեխաներից վարձ չվերցնելու մասին։ Նա գրում է. «Ոչ է պարտ վարձու զմանկունս ուսուցանել ըստ կանոնի հրամա-

<sup>4</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 71;  
<sup>5</sup> Նույնը, էջ 37;  
<sup>6</sup> Նույնը, էջ 59;  
<sup>7</sup> Նույնը, էջ 20.  
<sup>8</sup> Նույնը, էջ 54.

նաց»<sup>1</sup>: Բայց այդ հարցի առթիվ Սմբատը ավելի մանկավար-  
ժորեն և ավելի խորն է անդրադառնում՝ ոչ միայն երեխա-  
ների ձրի ուսուցման հարցին, այլև երեխաների նկատմամբ  
ցուցաբերվող մանկավարժական, դաստիարակչական հար-  
ցերին: Ահա թե ի՛նչ է գրում Սմբատը այդ մասին. «Օրենքը  
հրամայում է, որ վարդապետը (ուսուցիչը) շպետք է բնավ  
վարձ վերցնի կարգալ կամ եկեղեցական գիտություն սովոր-  
եցնելու համար:

Բոլորովին ընդունված չէ վարձ վերցնել և հետո սովորեց-  
նել: Այնուհետև օրենքը հրամայում է որբերին ու տառապ-  
չալներին գորգուրել և խնամել, նրանց քաղցրացնել դեպի  
գործը, որպեսզի շատերը ձգտեն ուսման: Վարդապետը և մի-  
ջոցների տեր վանահայրերը պարտավոր են ապահովել (սա-  
ներին) սննդով ու հագուստով: Եթե առանձին երեխաների  
ծնողները միջոցների տեր են, նրանք կարող են հոգալ միայն  
նրանց հագուստը, իսկ մյուս ծախսերը վանքերն են տալիս»:

[«Կու հրամայէ արէնքս, որ բնաւ վարդապետ վարձ չառ-  
նու վասն գրոց կարդալոյ կամ այլ գիտութեան եկեղեցոյ  
ուսմանց. իսկի չէ պատեհ վարձ առնուլ ևւ ապա ուսուցանել:  
Ապա կու հրամայէ արենքս զորբերն եւ զտառապելքն ստա-  
ծել եւ խնամել եւ անուշացնել ի գործ, որ շատք զիմեն ու  
գան ի յուսումն: Եւ տայ եպիսկոպոսն ու կարաւղ վաներոյ  
հայրապետերն այնոնց կերակուր եւ հանդերձ. եւ թէ կարող  
լինին տէրքն տղայոց, նա զհանդերձն մէն տան. եւ այլ  
պէտքն ի վաներոյն լինի»<sup>2</sup>]:

Ինչպես տեսնում ենք բերված օրենքից, Կիլիկյան Հա-  
յաստանում ուսման գործը պետություն ուշադրության է ար-  
ժանացել և սահմանվել է համապատասխան կարգ:

Պահանջելով երեխաների մեջ հետաքրքրություն ստեղ-  
ծել դեպի գիտությունը, դրա հետ միասին Սմբատը վճռակա-  
նապես դատապարտում է աշակերտների նկատմամբ, որպես  
դաստիարակչության միջոց, ծեծ կիրառելը: Այդ մասին  
առանձին հոդվածով Սմբատը նշում է որ «թէ յուսուցանելն  
վարդապետ զաշկերտ քշտէ ու մեռնի, նա նոյնն սպանաւղ  
է»<sup>1</sup>, այսինքն, աշակերտին սովորեցնելիս եթե ուսուցիչը նրան  
ուժեղ հարվածի, ու նրա մահվան պատճառը դառնա, ապա  
նրան պիտի մեղադրել որպես մարդասպանի:

Հակառակ գոյություն ունեցող սովորույթներին և օրենք-  
ներին, Սմբատը այդ հարցին հումանիտական, առաջադի-  
մական էլք է տվել:

ԶԸ հոդվածը Սմբատը նվիրել է խորթ երեխաների շահերի  
պաշտպանությանը: Եթե մի կին ամուսնանում է երկրորդ ան-  
գամ և հետը տանում է իր երեխային և այդ հողի վրա ընտա-  
նիրում անախորժություններ են ծագում, օրենքը պահանջում  
է ստուգել, արդյո՞ք ամուսինը սկզբից իր համաձայնությունը  
տվել էր մոր հետ միասին վերցնել նաև երեխային թե ոչ:  
Եթե պարզվի, որ նոր ամուսինը նախապես համաձայնել էր  
կնոջ հետ վերցնել ու խնամել նաև երեխային, իսկ հետո փոշ-  
մանում է և դիտմամբ անախորժություններ սարքում, ապա  
այդ դեպքում պետք է պատժել հորը՝ «ծեծեն ու զնդանեն»<sup>2</sup>,

<sup>1</sup> Գոշ, Դատաստանագիրք, էջ 233:

<sup>2</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 76—77:

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագիրք, էջ 32:

<sup>2</sup> Նույնը, էջ 92:

այսինքն, պետք է հորը ծեծել և բանտ դնել: Այնուհետև հող-վաճում ասված է, որ եթե գրանով գրութունը չի փոխվում, ապա թույլ տալ ապահարզանի, քանի մեկը մյուսին չի սպա-նել. «Եւ թէ շղորդի, նա բաժնեն իրաւնաւք, որ ի յայր պեղծն չերթայ՝ եւ ի մահն՝ որ երկուքն մեռնի»<sup>1</sup>:

Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում Սմբատի «Դա-տաստանագրքի» այն հոդվածները, որոնք վերաբերում են ընտանեկական իրավունքներին: Խոսելով ամուսնական փոխ-հարաբերութիւնների մասին, Սմբատը գտնում է, որ ամու-սինը կնոջ նկատմամբ ունի անսահմանափակ իշխանութիւն՝ «Այրն գլուխն է կնոջն»<sup>2</sup>, ասված է ՀԸ հոդվածում: Նա իր մի շարք հոդվածներով ձգտում է կայուն ընտանեկան փոխ-հարաբերութիւններ ստեղծել ընտանիքում, որը կարևոր պայ-ման էր պետութիւնն ամրապնդելու գործում: Դատաստանա-գրքում մեղադրվում են այն ամուսինները, որոնք առանց որևէ լուրջ պատճառի թողնում են իրենց կնոջը և ամուսնա-նում ուրիշի հետ, դրանով իսկ ոտնահարելով, Սմբատի խոս-քերով ասած, «ամուսնական պսակը և ապահարզան տալիս իրեհց կնոջը». նմանների նկատմամբ նախատեսվում են խիստ պատիժներ:

Այնուհետև Սմբատը խոսում է նոր ամուսնացող զույգերի ամուսնական կապեր ստեղծելու կարգի մասին: Նա գտնում է, որ նոր ամուսնացող զույգը՝ երիտասարդները մինչև եկե-ղեցի մտնելը ու ամուսնութիւնն ծիսակատարութիւնը պետք է բոլոր վեճերը լուծեն: Ամուսնանալուց հետո ոչ ոք իրա-

վունք չունի փոշմանելու. «Զինչ փոշմանելոյ զրույց կայ՝ թող առջև հոգան այրն ու կինն, առաջ որ մտեն ի չեկեղեցի, զի թէ մտեն ու չետոյ փոշմանին նա, այլ չկարեն ամուսնանալ»<sup>1</sup>:

Սմբատը գտնում է, որ տղամարդը կնոջը դավաճանու-թյան մեջ բռնելիս իրավունք չունի սպանել, այլ պետք է ապահարզան տա: Սմբատի այդ հոդվածը բավականին պրո-գրեսիվ է, քանի որ նա գտնում է, որ կնոջը հանցագործու-թյան մեջ մեղադրելիս պարտադիր չէ անպատճառ սպանել, այլ կարելի է ապահարզանով գործը վերջացնել:

Այդ մասին ՂԱ հոդվածում ասված է. «Եթէ ոք վասն բո-ղութեան զիր կնիկն սպաննէ՝ նա սպաննելն չէ հրամայած, այլ թողուն»<sup>2</sup>:

«Դատաստանագրքում» կան նաև բազմաթիվ հոդվածներ, որոնք վերաբերում են ընտանեկան իրավունքի հետ կապ-ված բազմապիսի հարցերին: Արժարժվում են կնոջ պարտա-կանութիւնները, որ պետք է բարոյական լինի, լսի ու են-կանութիւնները, մաքրասեր լինի: Մաքրասիրութիւնն մա-թարկվի ամուսնուն, մաքրասեր լինի: Մաքրասիրութիւնն մա-սին հատուկ հոդված կա «Վասն փնթի կնկանն» վերնագրով: Այնուհետև պահանջվում է որ կինը հոգատար լինի զեպի ե-րեխաները, շղթադիւր բամբասանքով, իսկ եթե ամուսինը օ-տարութիւնն մեջ լինի կամ գերութիւնն մեջ, կինը պարտավոր է յրթը տարի սպասել: Նույնպիսի պարտավորութիւններ դրվում են ամուսնու վրա: Ամուսինը պարտավոր է նյութական պայմաններ ստեղծել կնոջ համար, չբամբասել կնոջը, բա-րոյական լինի, կնոջ գերի ընկնելու զեպքում յոթ տարի

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 92.

<sup>2</sup> Նույնը, էջ 100.

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 104.

<sup>2</sup> Նույնը, էջ 93.

սպասի, կնոջ շքերության դեպքում դիմի բժշկական օգնութեան, հիվանդ կնոջը բուժի և ապահովի նրան մինչև կյանքի վերջը, և նման շատ հողվածներ, որոնց նպատակն է ստեղծել կազմակերպված ամուր ընտանեկան փոխհարարերութիւններ, որ նպաստավոր էր նաև թագավորական կենտրոնական իշխանութեան ամբողջութեանը:

Սմբատը վճռականապես արգելում է անշարժացաններին տասնհինգ տարեկանից շուտ ամուսնացնել:

Սմբատը բավականին մանրամասն կանգ է առնում քրեական հանցագործութեան հետ կապված հարցերի վրա: «Դատաստանագրքում» լայն տեղ են գրավում պատժի առավելագույն չափի՝ մահապատժի կիրառման վերաբերյալ օրենքները: Հատուկ հողվածներով «Դատաստանագրքում» մահապատիժ է նախատեսվում առաջին հերթին հայրենիքի դավաճանների նկատմամբ: Հայրենիքի դավաճաններ են համարվում նրանք, որոնք պատերազմի ժամանակ դավաճանելով յուրայիններին, անցնում են թշնամու կողմը, նրան են հանձնում քաղաքը, բերդը և այլն: «Զայնպիսիքն, — գրում է Սմբատը, — անհնար պիտի սպաննել»<sup>1</sup>, այսինքն, այդպիսիներին միայն մահվան պատիժ պետք է տալ:

Մահապատիժ է նախատեսվում նաև թագավորի կամ պետութեան դեմ դավադրութիւն կազմակերպելու, խռովութիւն բարձրացնելու համար<sup>2</sup>: Մահապատիժ է նախատեսվում նաև այն զավակի նկատմամբ, որ համարձակվում է իր ծնողի վրա ձեռք բարձրացնել: Ճի՞՞ հողվածում այդ մասին ասված

է, «թէ որ քրշտէ հարն եւ իր մարն՝ նա մեռանի»<sup>3</sup>: Պատժի առավելագույն չափը կիրառվում է նաև մարդասպանի նկատմամբ<sup>2</sup>, և հատկապես այն ծնողի նկատմամբ, որն անբարոյականութեան հողի վրա խեղդում կամ թունավորում է իր երեխային: «Վասն որ զտղայ խեղդէ վասն բողութեան» հողվածում այդ մասին գրված է, որ ինչ ձևով ծնողն է սպանել իր որդուն, նույն ձևով էլ նրան մահապատժի ենթարկել: «Ապա ինքն յայն ցեղ մահով մեռանի զէդ այն տղայն, թէ այր եւ թէ կին՝ եւ թէ երկուքն»<sup>3</sup>:

Պատժի առավելագույն չափի մասին խոսելիս Սմբատն իր «Դատաստանագրքում» չի մոռանում միաժամանակ հաշվի առնել նրբացուցիչ հանգամանքները: Եթե սպանութիւնը կատարվել է ակամա, ապա այդ դեպքում չի կարելի մահվան պատիժ կիրառել: Առանձին դեպքերում ակամա մարդասպանը կարող է ազատվել տուգանքով: Տուգանքներ նախատեսվում են հատկապես պատահական սպանութիւնների դեպքում:

ՃՁ հողվածում բերված են այդպիսի ակամա սպանութեան մի շարք օրինակներ, երբ մարդ անկախ իրենից, ակամայից կարող է ուրիշի մահվան պատճառ դառնալ: Սակայն «Դատաստանագրքում» ասված է, որ դատավորները պարտավոր են այդ բոլոր պարագաները լրջորեն քննութեան ենթարկեն ու պարզեն «կամայն եւ յոչ կամայն»<sup>4</sup>:

«Դատաստանագրքում» նախատեսված են նաև ինքնա-

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 10:

<sup>2</sup> Նույնը, էջ 15:

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 114:

<sup>2</sup> Նույնը, էջ 156:

<sup>3</sup> Նույնը, էջ 143:

<sup>4</sup> Նույնը, էջ 155:



պաշտպանութեան հողի վրա կատարած սպանութիւնները, որի զեպքում պահանջվում է այլ վերաբերմունք. «Այլ կենան ու պահանջ զճանապարհն, որ սպանութիւն այնքան կամ գողութիւն, ու այն հալալ գնացաւ յաջող լինայ ու զնորա սպաննէ՛ նա չէ արեան պարտական, այլ զովելոյ եւ ատիթք տալոյ է արժան»<sup>1</sup>: Այսինքն, երբ որևէ ավազակ հարձակվի ճանապարհորդի վրա նրա ունեցվածքը թալանելու նպատակով, բայց ճանապարհորդին հաջողվի սպանել ավազակին և ազատվել նրանից, այդ ճանապարհորդը դատարանի կողմից ոչ միայն չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվութեան, այլ նա արժան է խրախուսանքի ու պարգևատրութեան:

«Դատաստանագրքում» նաև հասարակական պարսավանքն է որպես պատիժ սահմանվում, որ կոչվում է «կապտացում»: Այդպիսի հոդված միջնադարյան դատաստանագրքերում հազվագյուտ է եղել: «Կապտացնելը»<sup>2</sup> նշանակում է հասարակութեան առաջ պարսավանքի ենթարկել: Ներկայումս գործ է ածվում ոչ թե «կապտացնել», այլ «կարմրացնել» արտահայտութիւնը:

Սմբատը իր «Դատաստանագրքով» դատապարտում է նաև հասարակական կարգը խանգարողներին, հարբեցողներին և այլն: Նմաններին պահանջում է դուրս վճռել հասարակութեան միջից. «Եւ արբեցաւ ի խալապարարն՝ ի դուրս ձգվի՛ ինչվի հայնց գոյ ի խելք՝ զեդ առաջնորդն կամի»<sup>3</sup>: Դեռ ավելի՛ն. Ճկթ հոդվածում դատապարտվում է շափից դուրս

հարբեցողութիւնը, որպես «պեղծ է եւ ազահութիւն եւ պատճառն ամէն շարեաց»<sup>4</sup>:

Սմբատը օրենքներ է գրել նաև բժշկութեան նկատմամբ: Բարձր գնահատելով բժշկութեան դերը, նշելով. «Մեծ բան է բժշկութիւնն»<sup>5</sup>, նա հանգամանորեն կանգ է առնում բժիշկների պրակտիկ գործունեութեան վրա, պատիժ սահմանելով նրանց նկատմամբ, որոնք չտիրապետելով իրենց մասնագիտութեանը կամ անուշագիր վերաբերվելով իրենց գործին, պատճառ են դառնում հիվանդների մահվան, քանի որ բժիշկը «Չգիտէ եւ չճանչէ զցան ու այնով սպաննէ»:

Մեղադրելով անփութ բժիշկներին, Սմբատը միաժամանակ դատապարտում է նաև այն հիվանդներին, որոնք չեն լսում ու չեն հետևում բժիշկների խորհուրդներին, չեն ենթարկվում ռեժիմին ու դրանով վատթարացնում են իրենց վիճակը. «Հիվանդին յանլսորդութենէ, կամ յուտելոյ, կամ բացուելոյ, եւ կամ յայլ այսպիսեացս»<sup>6</sup>: Սմբատը այստեղ միաժամանակ զգուշացնում է, որ չի կարելի հիվանդներին հանձնել անփորձ աշակերտների տնօրինութեանը, որոնք անփորձ լինելով կարող են մահվան պատճառ դառնալ:

«Դատաստանագրքի» ԽԴ հոդվածով արգելվում է հիվանդանոցներից, հիվանդներից ու հիվանդին խնամողից հարկ վերցնել. [«հիւանդանոց ուր կենայ՝ նա չէ պատեհ ամենեւիմբ անտից հարկ տոնուլ, ոչ ի հիւանդէ եւ ոչ յիւր սպասարէ»]<sup>7</sup>:

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 142:

<sup>2</sup> Նույնը, էջ 145:

<sup>3</sup> Նույնը, էջ 38:

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 142:

<sup>2</sup> Նույնը, էջ 143:

<sup>3</sup> Նույնը, էջ 153:

<sup>4</sup> Նույնը, էջ 51:

Ուշադրութեան արժանի են այն հոգիվածները, որոնք վերաբերում են հասարակութիւնը ժառանգական հիվանդութիւններէ պահպանելուն: «Գատաստանագիրքը» վճռականապես արգելում է ժառանգական հիվանդութիւն ունեցողին ամուսնանալ, բացատրելով, որ նմանները կարող են մեծ վնաս պատճառել մարդկութեանը. «աւերել զմարդկութեանն ազգս»<sup>1</sup>: Այդ պատճառով Սմբատը առաջարկելով արգելել նրանց ամուսնութիւնը, միաժամանակ սահմանում է նմանների համար կառուցել մեկուսարաններ, որ նրանք հասարակութիւնից հեռու լինեն և վնաս չհասցնեն նրան. «Եւ որ զայնոր ի շինամէջ պարտ է թողուլ բնաւ, այլ ի յետ՝ յիրեանց սահմանած բնակութեանն»<sup>2</sup>: Սմբատը «Գատաստանագիրքում» ջրաղացպանի անփույթ լինելու մասին սահմանել է, որ եթե ջրաղացպանը անբարեխիղճ գտնվի իր պարտականութիւնների կատարման գործում և հաճախորդի բերած ցորենը փշացնի, ապա ջրաղացպանին անհրաժեշտ է պատժել, ստիպել որ նա վնասը կրկնակի հատուցի «Ու թէ աւիրեն՝ (զաղունն) նա դարպասն պարտի, որ պատժէ, եւ դուպլ տայ վճարել զաղբատաց վնասն»<sup>3</sup>:

«Գատաստանագիրքը» իր մեջ պարունակում է շատ հոգիվածներ, որոնք վերաբերում են գլուխ տնտեսական հարցերին: Այսպես օրինակ, ՃՃԸ հոգիվածում ասված է, որ եթե մեկը արտը կամ այդին ջրելիս վնաս պատճառի հարևանին, ապա անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վնաս տվողը նախապես այդ մասին զգուշացրել է տիրոջը, որ միջոց ձեռք

առնի, թե ոչ: Եթե զգուշացրել է, ուրմն պարտավոր է հատուցել վնասի կեսը: Իսկ եթե չի նախազգուշացրել, նա պարտավոր է վճարել վնասի լրիվ արժեքը: Հոգիվածում ասված է, «նա թէ արհացուցել լինայ զվնասուն տէրն՝ նա կիսավճար տայ իւրն, ապա թէ ոչ՝ որ լաւկ լուծել լինայ եւ թողել անփույթ՝ նա ի լման վճարէ»<sup>4</sup>:

Սմբատ Սպարապետը հատուկ օրենք է նվիրել նաև պշտղատու ծառերի պաշտպանութեանը: Ա հոգիվածում ասված է, «զպտղաբեր ծառք երկրին շտայ կտրել»<sup>5</sup>: Իսկ ՃՁԹ հոգիվածով նախատեսված է, որ եթե մեկը զայրանա և պտղաբեր ծառ կտրէ»<sup>6</sup>, նա պարտավոր է նորից տնկել և տիրոջը վճարել տուգանք ծառի ամենամյա բերքի լրիվ արժեքով, այնքան ժամանակ, մինչև իր տնկած ծառը կսկսի բերք տալ:

Սմբատի ուշադրութիւնից չի վրիպել նաև անասունների նկատմամբ ունենալիք հոգատարութեան հարցը: ՃՂ հոգիվածով Սմբատը դատապարտում է նրանց, ովքեր ծեծում են անասունին»<sup>7</sup>:

Սմբատ Սպարապետը խստորեն դատապարտում է կաշառակերութիւնը և գտնում է, որ ով «Իրաւունսն կաշառոց կու ծախէ, նա ձգեն զինք ի դատաւորական աթոռոյն»<sup>8</sup>, այսինքն, դատաւորին նման դեպքում պաշտոնից պիտի հեռացնել:

Բազմաթիվ հոգիվածներում Սմբատը խոսում է արհեստավորների մասին: Նա բարձր է գնահատում նրանց դերը որ-

<sup>1</sup> Սմբատ, Գատաստանագիրք, էջ 108.  
<sup>2</sup> Նույնը, էջ 108.  
<sup>3</sup> Նույնը, էջ 171.

<sup>1</sup> Սմբատ, Գատաստանագիրք, էջ 152.  
<sup>2</sup> Նույնը, էջ 10.  
<sup>3</sup> Նույնը, էջ 161.  
<sup>4</sup> Նույնը, էջ 162.  
<sup>5</sup> Նույնը, էջ 20.

24

պէս երկրում արտադրող ուժերի: «Զամէն ազգ արուեստաւոր պատուեցէք—գրում է Սմբատը,— բայց զդարբինն եւ զհիւսըն եւ զբարգործն աւելի»<sup>1</sup>:

Սմբատը է: «Դատաստանագրքի» բովանդակալից շատ հողվածներով տարբերվում է իր նախորդ օրենսդիրներից: Այսպէս օրինակ, Բ և ՃԻԴ հողվածներում ասված է, եթէ հայրը հանցագործութիւն է կատարում, ապա հոր համար նրա որդիները պատասխանատու չեն և չպետք է զրկվեն ժառանգութիւնից. «Վասն հարն մեղացն շինին զրկածք ի հայրենեցն ի ժառանգութենէ»<sup>2</sup>: Այսինքն, հոր մեղքերի պատճառով իրենց հայրենական ժառանգութիւնից որդիներին չպետք է զրկել: Սղոբր հանցագործութիւն կապակցութեամբ ասված է. «Եւ ոչ եղբայր վասն եղբայր», այսինքն, եղբայրներն եղբոր կատարած հանցանքի համար նույնպէս պատասխանատու չեն: Նույնն էլ վերաբերում է որդիների կողմից կատարված հանցանքին: Ըստ «Դատաստանագրքի» եթէ որդին է կատարում հանցագործութիւն, հայրը կատարած հանցագործութիւն պատճառով պատասխանատուութիւն չի ենթարկվում. «եթէ որդի՝ որ արիանաւք ի մահապարտութիւն ընկնի՝ նա հայրն ի յայն՝ չէ պատեհ, որ բռնվի»<sup>3</sup>:

Սմբատի այդ հողվածները ուղղված էին այն դաժան օրենքների դեմ, համաձայն որի ծնողի հանցագործութիւն հետևանքով ոչնչացնում էին ոչ միայն հանցագործ հորը կամ որդուն ու մոտիկ հարազատներին, այլև նրա ամբողջ

<sup>1</sup> Սմբատ, Դատաստանագրք, էջ 14:

<sup>2</sup> Նույնը, էջ 15:

<sup>3</sup> Նույնը, էջ 115:

տոհմի անդամներին՝ մեծից մինչև փոքրը: Այդպիսի վերաբերմունքի հետևանքով բնաջնջվում էին շատերը: Այդ հանգամանքը պիտի դիտել Սմբատի կողմից առաջադիմական մոտեցում, որ չի կարելի այլ մարդու հանցագործութիւն համար մի ուրիշի ոչնչացնել: Ըստ Սմբատի, նման դեպքերում պիտի տուժի անձամբ ինքը հանցանք կատարողը: Բայց Սըմբատն այս սահմանումից որոշ շեղում է կատարում, պատիժը տարածելով նրանց վրա, որոնք ծնվում են հոր հանցագործութիւնից հետո:

Սմբատի «Դատաստանագիրքը», ինչպէս տեսնում ենք, Կիլիկիան հայոց թագավորութիւն համար ունեցել է գործնական նշանակութիւն և որը նպատակ է ունեցել կարգավորել երկրի քաղաքական, տնտեսական և սովորույթի իրավական փոխհարաբերութիւնները: Այդ տեսակետից Սմբատի այդ գործը արժեքավոր ներդրում է հայ իրավաբանական մտքի պատմութիւն մեջ:

Սմբատ Սպարապետը ինքնուրույն մեծութիւն է, որպէս նոր, Մխիթար Գոշից անկախ մի դատաստանագրքի հեղինակ: Այդ երկու հեղինակներից յուրաքանչյուրը իր ժամանակաշրջանի և իր միջավայրի արգասիքն է: Եթէ Մխիթար Գոշը XII դարում հանդես եկավ իր անմահ առակներով և իր «Դատաստանագրքով», ապա Սմբատ Սպարապետը XIII դարում փայլեց իր «Տարեգրքով», առանձնապէս «Դատաստանագրքով»:

Մխիթար Գոշը և Սմբատ Սպարապետը լինելով հայ իրավաբանական մտքի փայլուն ներկայացուցիչները, միաժամանակ թողել են գրական հարուստ ժառանգութիւն, որոնք պատվաբեր տեղ են զբաղում միջնադարյան մշակույթի պատ-

մության մեջ: Յայց Սմբատ Սպարապետի մեծությունը միա-  
ժամանակ այն է, որ նա մեղ թողել է ոչ միայն պատմական  
ու իրավագիտական հարուստ ժառանգություն, այլև դրա հետ  
միասին իրական կյանքում, Կիլիկյան Հայաստանի անկա-  
խության համար մղվող մարտական պայքարում եղել է նշա-  
նավոր զորավար, դրանով իսկ գրավելով իր արժանի տեղը  
նաև հայ ժողովրդի քաղաքական պատմության մեջ:

Այսպիսով, Սմբատ Սպարապետի գրական ժառանգու-  
թյան բազմակողմանի ուսումնասիրությունից պարզվում է,  
որ նա բազմաժանր հեղինակ է և մեծ քաղաքական ու պետա-  
կան գործիչ: Իհարկե, մենք նպատակ չենք դրել այս ուսում-  
նասիրությունը սպառիչ խոսք ասել նրա թողած գրական հա-  
րուստ ժառանգության և նրա պետական գործունեության մա-  
սին: Սմբատ Սպարապետի գրական ժառանգությունը և նրա  
գործունեությունը նվիրված այս ուսումնասիրությունը մի  
համեստ փորձ է միայն՝ վեր հանելու ու բնութագրելու պատ-  
մական այդ անձնավորության պետական ու գրական գործու-  
նեությունը, որպես հայ ժողովրդի պատմության մեջ նշանա-  
կալից պատմական եղելություն, և հույս ունենք այն սկիզբ  
կհանդիսանա այդ պետական խոշոր գործչի և բազմավաս-  
տակ ու բազմաժանր հեղինակի թողած հարուստ ժառանգու-  
թյան ավելի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության  
համար:

## Р Е З Ю М Е

Смбат Спарпет (Гундстабль) — виднейший государ-  
ственный деятель Киликийской Армении — небольшого  
независимого армянского государства. Киликийское го-  
сударство было образовано в XI столетии на восточном  
берегу Средиземного моря, в эпоху развития феодаль-  
ных отношений. Оно сыграло большую роль в средне-  
вековой истории армянского народа.

Как известно, в XI—XIII веках Великая Армения  
была покорена и разорена иноземными захватчиками,  
раздроблена на множество мелких феодальных кня-  
жеств.

Среди всех княжеств феодальной Армении Киликия  
была единственной страной, которая сохранила свою  
самостоятельность и целостность.

Созданное родственником последнего армянского  
багратидского царя Гагика II — Рубеном (1080—1095)  
Киликийское армянское государство стало расширяться  
территориально и укрепляться экономически. Большой  
прогресс наблюдается при царствовании Левона II  
(1187—1219) и его зятя Гетума I (1226—1270). В стра-

не развивается ремесло и оживает торговля. Киликийские армянские цари стали чеканить свои золотые и серебряные монеты. Киликийская Армения становится главным культурным центром армянского народа. Сюда из Великой Армении потянулись лучшие представители армянской науки, культуры и искусства. Они продолжали развивать лучшие традиции многовековой культуры армянского народа. Здесь, на неприступных склонах Киликийского Тавра, в городах и деревнях вновь возродилась древняя культура, пышно расцвели армянская поэзия и музыка, новыми красками заблестела живопись. Неумолимо работали мудрецы-ученые, историки, восстанавливая утраченное, собирая разрозненные страницы истории армянского народа.

Возник ряд культурных очагов: Тарс, Мараш, Дразарк, Кармир-Ванк и другие. В настоящее время в Ереванском Матенадаране находятся сотни ценных рукописных книг киликийских армянских авторов. Среди них материалы по астрономии, риторике, праву, философии, богословию и т. д. В этих материалах отражается классовая борьба угнетенных масс Киликийской Армении против господства феодалов.

Особый интерес представляют имена таких виднейших представителей науки и культуры средневековой Армении, как Матевос Ураеци, Нерсес Шнорали, Григор Отрок, Нерсес Ламбронаци, Ваграм Рабуни, Мхитар Гераци, Вардан Айгекци и других. Многие рукописи иллюстрированы прекрасными миниатюрами талант-

ливых армянских художников. Особое место среди них занимает крупнейший армянский художник XIII века Торос Рослин — современник Дуччо и Данте, предшественник Джотто, сделавший в своем творчестве первые трудные шаги на пути создания искусства эпохи Возрождения.

Именно в этой общественной политической среде в Киликийской Армении жил и творил выдающийся государственный деятель и полководец Смбат Спарпет (1208—1276), предки которого переселились в Киликию из Великой Армении в XII веке.

Армянские историки и источники других стран с похвалой отзываются о Смбате, называя его «великим князем», «мудрым армянским спарпетом», «армянским храбрым полководцем», «опытным искусствоведам», «даровитым и тонким философом».

На самом деле Смбат Спарпет был одаренным полководцем, историком, дипломатом, общественно-политическим деятелем, автором различных стихотворных сочинений и поэм, переводчиком различных произведений на армянский язык, а также автором первого учебника Киликийского армянского государства.

Всю свою сознательную жизнь этот замечательный человек провел в боях и сражениях против врагов родины. Он был назначен главнокомандующим вооруженными силами страны, когда ему было только восемнадцать лет. Свыше 50 лет (1226—1276), то есть до конца своей жизни он занимал этот высокий пост. Во всех

многочисленных боях и сражениях Смбат проявлял высокое полководческое искусство, личную храбрость, мужество, бесконечную преданность родине.

Его последнее сражение произошло в Сарвантикаре, недалеко от города Мараш, где престарелый воин сражался против войска египетского султана Бейбарса. Эта битва имела место в 1276 году, когда Смбат во главе конницы выступил против армии противника. Историки — очевидцы этого сражения — рассказывают, что воины Смбата сражались с достоинством. Противник был разбит и победа армянских храбрецов была несомненной. Смбат Спарпет со своей небольшой дружиной стал преследовать султана Бейбарса, чтобы взять его в плен, но был сражен.

Смбат Спарпет вел оживленные дипломатические переговоры как с западноевропейскими государствами, так и с монголами. Дипломатическая деятельность Смбата особенно проявилась в период монгольских завоеваний. Он дважды возглавлял дипломатическую миссию Киликийского армянского государства в Монголию: первый раз в 1243 году в Кесарии в переговорах с монгольским военачальником Бачу; второй — в 1247 году в резиденции монгольского хана в Каракоруме с Гуюк-ханом. В третий раз, в 1253 году, Смбат сопровождал своего брата, царя Гетума I в Каракорум, где они совместно вели дипломатические переговоры с монгольским ханом Мангу. В результате этих переговоров был заключен союз между монгольскими правителями

и Киликийским армянским государством, благодаря чему Киликийская Армения была спасена от монгольского нашествия — неизбежного разорения и гибели.

Смбат Спарпет был не только полководцем и дипломатом, но и ученым, труды которого дошли до нас и представляют большое историческое значение в истории средневековой Армении. К сожалению, долгое время не только востоковеды, но даже и арменоведы не имели полного представления о произведениях Смбата Спарпета. Из литературного наследия Смбата до нас дошли его «Летопись», «Судебник», некоторые поэмы, письма и переводы. Несомненно, он имел много других трудов и писем о своем путешествии в Монголию, но они до нас не дошли. Некоторые из этих трудов были использованы племянником Смбата — Гетумом Патмичем, который спустя 31 год после смерти Смбата в 1307 году составил свой труд «История монголов».

«Летопись» Смбата охватывает период с 952 по 1274 год. В этом труде он использовал ряд средневековых источников. События XI—XII веков он описывает на основании материалов, составленных историками — современниками событий, а события XIII века как очевидец и современник. В своей «Летописи» Смбат подробно рассказывает об армяно-византийских, армяно-арабских, армяно-сельджукских отношениях. Довольно подробно он говорит об истории эмиграции армян из Великой Армении в разные страны Запада, и в частности, в Византийскую империю. Смбат сообщает интe-

ресные сведения о быте и нраве армян, об их вероисповедании и упорной борьбе против католической церкви за свою веру и независимость. Он пишет о культурных очагах, созданных в неприступных теснинах Киликийского Тавра и об их значении для развития культуры армянского народа в средние века.

Смбат Спарпет сообщает некоторые данные о социальных противоречиях в феодальной Армении, о междоусобной вражде среди армянских феодалов и т. д. Таким образом, содержательный труд Смбата Спарпета разнообразными материалами не только освещает политическую историю армянского народа XII—XIII веков, но вместе с тем включает в себя достоверные материалы, относящиеся к истории и географии стран Средней Азии, Ирана, Кавказа и Ближнего Востока.

Самая ранняя поэма, написанная им в городе Адане в 1244 году, свидетельствует о знакомстве Смбата с трудами армянских и греческих философов.

В другой поэме, высеченной в 1251 году на стенах крепости «Смбатакал» в Папероне, Смбат наряду с восхвалением неприступности этой крепости дает сведения о себе и рассказывает о своей родословной. Особый интерес представляет памятная запись в стихах, сделанная Смбатом на страницах собственного евангелия. Запись посвящена известной битве за город Мари между войсками султана Бейбарса и армянским царевичем, племянником Смбата — Левоном. Смбат-поэт рисует потрясающую картину этого сражения.

В литературном наследии Смбата важное место занимает его «Судебник», который был составлен им в 1265 году. Этот замечательный юридический памятник армянского народа представляет большую ценность. В нем отражено социально-экономическое и политическое состояние Киликийского армянского государства в ту далекую эпоху.

«Судебник» состоит из семи разделов и охватывает двести две статьи, характеризующие основные черты феодального права — правовые отношения между царем и его вассалами, между феодалами и крепостными. По «Судебнику» верховный суд страны — дворцовый суд, во главе которого стоит царь.

О праве и привилегии царя Смбат посвящает три обширных статьи, где обстоятельно разбираются правовые нормы, суверенные права царской власти. Начиная от простого слуги до князя-князей — все обязаны выполнять требования и приказы царя.

В «Судебнике» говорится также об интересах феодалов. Строгими и жестокими мерами наказываются все те, кто выступает против царя и феодалов. Но вместе с тем отдельные статьи Судебника ограждают трудовой люд от произвола и жадности духовных и светских феодалов. Все это свидетельствует о прогрессивных идеях автора «Судебника», говорит о том, какую большую заботу Смбат проявлял о централизации и укреплении государства.

С этой целью «Судебник» поднимал авторитет и роль царя, ограничивал права феодалов. Как известно, в XII—XIII веках борьба за власть шла между духовенством и мирскими властями. Смбат стремился подчинить духовенство мирским властям. Борьба завершилась поражением духовенства. Оно подчинилось королевской власти — резиденция армянского каголикоса была перенесена из Ромклы в столицу Киликийской Армении — Сис.

В «Судебнике» Смбата имеется ряд статей, где говорится, что если сын совершил преступление, то отец за его действия не отвечает и не должен нести наказание, и, наоборот, если, обвиняется отец, то члены семьи не подлежат наказанию и не лишаются наследственного права. Так, например, по статье 124, если преступление совершил один из братьев, то остальные братья за него не отвечают.

Все это показывает, что Смбат выступал против варварских законов средневековья. Понятно, что статьи «Судебника» следует рассматривать как проявление гуманизма при составлении новых прогрессивных законов той эпохи.

«Судебник» Смбата по-иному трактует вопрос о порядке выбора царя. При Аршакидах после смерти царя короновали его старшего сына. Мхитар Гош внес некоторые изменения, он считал, что пока живы братья царя, его сыновья не имеют права претендовать на королевскую власть. Смбат же, наоборот, находит, что

после смерти царя на его место следует выбирать наиболее способного сына. По этому поводу Смбат пишет: «Для блага страны внимательно проверить с одобрения всех своих областей и областных начальников и святой церкви, дабы они возвели на царский трон того из сыновей (царя), который им приемлем и который известен как добродетельный, богобоязненный, боголюбивый и великодушный, чтобы он управлял своими братьями и страной».

Эти и подобные им факты свидетельствуют о ценности и большом значении «Судебника» Смбата Спарапета в развитии юридической мысли армянского народа.

Следует отметить, что некоторые армяны (Г. Ованяян, И. Карст и другие), занимаясь изучением «Судебника» Смбата Спарапета и сравнивая некоторые его статьи со статьями «Судебника» Мхитара Гоша, приходят к ошибочному выводу о том, что «Судебник» Смбата не самостоятельное произведение, а перевод «Судебника» Мхитара Гоша.

Какие мотивировки приводят для подтверждения своих мнений? Они ссылаются на предисловие Смбата, где сказано: «Я кратко изложил эти законы». Слово «изложил» у Смбата передано словом «похеци»; и вот слово «похеци» они понимают как «перевел». И так как другого армянского судебного кодекса в Киликийской Армении в то время не было, то полагают, что Смбат имеет в виду именно «Судебник» Мхитара Гоша, который был написан раньше, чем «Судебник» Смбата.



Затем эти исследователи ссылаются на то, что многие статьи этих двух судебныхников схожи друг с другом.

Мы опровергаем эти мотивировки как не состоятельные. Во-первых, слово «похеци» не означает «перевел», здесь оно означает «переложил» «изложил». И еще из этого предисловия не видно, что Смбат говорит именно о «Судебнике» Гоша. Слова Смбата о том, что потрудился над тем, чтобы «переложить эту книгу со старого, недоступного, непонятного языка на наш сладкозвучный и общепринятый язык», относятся скорее всего не к «Судебнику» Гоша, который не был «недоступным и непонятным», а к одному из древнейших армянских «Канонагирков», который переписывался, передавался из рук в руки и мог на самом деле быть «непонятным и недоступным».

«Судебник» Гоша состоит из трех частей: Введения, Церковных канонов и Светских законов. Наиболее ценным и оригинальным является первый раздел, где Мхитар Гош с большим знанием дела на 30 обширных страницах описывает судебное право, функции мирских судей, взаимоотношение судебных чиновников, методы проведения судопроизводства и судоустройства и т. п. Текстологический анализ показывает, что Смбат не использовал «Введения» Гоша. Если «Судебник» Гоша был бы под рукой Смбата, то он, по нашему мнению, безусловно, использовал бы эту столь важную главу.

Более того, в 1243 году в столице Киликийской Армени — Сисе, на большом соборе, при участии Смбата

были составлены новые каноны для церковных и мирских властей. Если бы экземпляр «Судебника» Гоша находился в Сисе, то не были бы составлены эти новые каноны, так как подобные каноны в более расширенном виде имелись в «Судебнике» Гоша.

Еще один очень важный факт. В 1253 году со старофранцузского языка Смбат перевел «Антиохийские ассизы» на армянский язык. Спрашивается, если бы у Смбата был труд Гоша, то неужели он нуждался бы в переводе «Антиохийских ассизов»? Ведь «Судебник» Гоша, несомненно, богаче и содержательнее «Антиохийских ассизов», последние содержат только 38 статей, а «Судебник» Гоша около трехсот статей.

Что касается некоторого сходства обоих судебныхников, то причиной является общность источников: оба автора брали материалы из законов Моисея, «Армянского Канонагирка» и других.

Следует отметить, что Смбат в каждом случае упоминает те источники, которыми он пользуется. Так, например, в предисловии к «Антиохийским ассизам» подробно рассказывает, каким путем он приобрел этот документ и как он послал свой перевод, чтобы сверить. «...по окончанию перевода,— пишет Смбат,— я переслал его в Антиохийский суд, где его сличили с текстом и собственноручными подписями удостоверили верность перевода слово в слово...». Если Смбат перевел бы «Судебник» Гоша, то он не мог не упомянуть об этом.

Более того, Смбат в своем «Судебнике» ссылается

прямо на источник. Он пишет: «Я, Смбат Спарапет, искал этот закон и нашел». Далее: «Это место мне, Смбату, автору этих строк, трудно было писать, так как об этом более подробно написано святым Сааком», затем он пишет: «Смотря 30-ю главу св. Григория Просветителя, я, Смбат, искал этот закон и нашел». Наконец, Смбат заявляет, «Здесь мы взяли из канонов столько, сколько было возможно, а остальные найдете вы в уставе св. Василия».

Если даже допустим, что Смбат имел под рукой «Судебник» Гоша, то он мог его использовать не как переводчик или компилятор, как приписывают ему, а как составитель нового кодекса, который мог использовать статьи Гоша как один из источников армянского права. Если же допустим, что под рукой Смбата был труд Мхитара Гоша, что весьма вероятно, то это был не тот огромный «Судебник» (свыше 300 статей), который нам представил Ваган Басгамян, а один из старинных списков «Судебника» Мхитара Гоша, попавший в руки Смбата в XIII веке. Он по объему, конечно, был гораздо меньше. Тот факт, что в Матенадаране сохранилась одна рукопись XIII века, где количество статей не 300, а всего лишь 174, дает нам право на такое предположение.

Для окончательного выяснения вопроса использования «Судебника» Гоша Смбатом следует тщательно изучать не рукописи XVII—XVIII веков, где переписчики наводняли разными канонами и законами позднего

периода, а рукописи Гоша XIII века, два экземпляра которых дошли до нас.

Таким образом, «Судебник» Смбата Спарапета является самостоятельным творением самого автора и довольно наглядно отличается от «Судебника» Гоша как по форме, так и по содержанию. Каждый из них соответствует социально-экономическим и политическим отношениям своей эпохи.

Исторически прогрессивное значение «Судебника» Смбата заключается в том, что он способствовал установлению твердого порядка в стране, воссоединению раздробленных сил государства и усилению централизованной власти в стране.

Большую ценность представляют также переводные труды Смбата Спарапета. В этом отношении заслуживает внимания юридический памятник антиохийских правителей — «Антиохийские ассизы», которые, как мы уже сказали, Смбат перевел со старофранцузского на армянский язык. Как известно, оригинал этого замечательного документа утерян. Только благодаря переводу Смбата Спарапета «Антиохийские ассизы» были спасены от исчезновения.

В 1956 году арменист Кюртян в Венеции в журнале «Базмавеп» опубликовал древнеармянский текст новой неизвестной части «Антиохийских ассизов» по переводу Смбата.

В Венеции недавно (в 1956 г.) был опубликован новый более древний список «Летописи» Смбата, переписанный

санный в 1315 году. Этот текст в три раза больше рукописей, опубликованных в 1856 году в Москве и в 1859 году в Париже.

Следует отметить, что многие вопросы, касающиеся многогранной деятельности Смбата Спарапета, стали известными только теперь. В Ереванском Матенадаране имеются ценные материалы, о существовании которых мы узнали совсем недавно. Так, например, в феврале 1960 года нам удалось обнаружить одну рукопись Смбата, собственноручно написанную им на пергаменте, из которой следует, что Смбат занимался также музыкой и владел армянской хазовой нотописью.

Смбат Спарапет один из редких авторов средневековой Армении, который все свои произведения, а также переводные труды написал на народном, разговорном, современном ему языке. В этом отношении он является видным просветителем своей эпохи. На основании изучения языка Смбата многие арменоведы составили ценные труды. Так, например, Ф. Овнанян в 1897 году написал свою работу «Исследование народных говоров наших предков» (на армянском языке), а видный немецкий ученый, арменист Карст в 1901 году в Страсбурге составил свой капитальный труд по армянской филологии под заглавием «Historische Grammatik des Kili-kisch-armenischen», который до настоящего времени не потерял своего научного значения.

На основании выше изложенного мы приходим к выводу, что Смбат Спарапет был не только замечатель-

ным полководцем. Он оставил нам богатое наследие историко-юридических памятников, имевших большое значение для развития древней армянской науки и культуры.

Труды Смбата Спарапета представляют большую ценность. Они имеют научное значение не только для глубокого изучения культуры, быта и истории армянского народа, но и для изучения социально-политических и экономических отношений средневекового Востока вообще.



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Սմբատ Սպարապետը և նրա ժամանակը	3
2. Սմբատ Սպարապետը որպես զորավար	29
3. Սմբատ Սպարապետի գիվանագիտական գործունեությունը	41
4. Սմբատ Սպարապետի գրական ժառանգությունը	71
ա. Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը»	74
բ. Սմբատ Սպարապետի առնչությունը Հեթում Պատմիչի «Պատմութիւն թաթարաց» գրքի հետ	92
գ. Սմբատ Սպարապետի թարգմանական աշխատությունների մասին	99
դ. Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը	107
Резюме	165

Խմբագիր՝ Վ. Հարությունյան, Տն/ս. խմբագիր՝ Ե. Ախրյան  
Գեղ. խմբագիր՝ Գ. Խուլիկյան, վերատուգող սրբագրիչ՝ Ա. Երիցյան

ՎՖ 08428 Պատվեր 1763 Տիրած 5000

Հանձնված է արտադրության 30/XI—1960 թ.

Ստորագրված է տպագրության 28/II 1961 թ.

Թուղթ՝ 70×108<sup>1</sup>/<sub>32</sub> տպագր. 5,63 մամ. = 7,7 պայմ մամ., հրատ 6,4 մամ.:  
Գինը՝ 25 կ.

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների  
և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության  
Պոլիգրաֆիկական կենտրոնի Տնօրենի Գրասենյակ

ՎՖ 08428 1961

22-1961